

Բանավոր  
թարգմանությունը  
փախստականների  
հետ աշխատելիս



Ինքնակրթության մոդուլ 3

Հունվարի 1, 2009



Asylum Systems  
Quality Initiative

in Eastern Europe and South Caucasus



Ապաստանի համակարգերի  
որակի նախաձեռնություն

Արևելյան Եվրոպայում և Հարավային Կովկասում



**ԲԱՆԱՎՈՐ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ  
ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼԻՍ**

**Ինքնակրթության մոդուլ 3**



**UNHCR**  
The UN Refugee Agency

Հունվարի 1, 2009

## Հիշել

---

Այս փաստաթուղթը պատրաստվել է Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի Միջազգային պաշտպանության ծառայությունների բաժնի կողմից: Այս փաստաթղթի բովանդակությունը կարելի է տարածել, վերարտադրել կամ լուսապատճենել՝ առանց ՄԱԿ ՓԳՀ-ից նախօրոք թույլտվություն ստանալու: Այն դեպքերում, երբ սույն փաստաթղթում ներկայացված նյութն օգտագործվում է կամ մեջբերվում որևէ տեղ, որպես տեղեկույթի աղբյուր պետք է նշվի ՄԱԿ ՓԳՀ-ն:

Միավորված ազգերի կազմակերպության  
Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ  
United Nations High Commissioner for Refugees

Case Postale 2500  
CH-1211 Geneva 2  
Switzerland

Ֆաքս՝ +41 22 739 7354  
Էլ-փոստ՝ [HQPR09@unhcr.org](mailto:HQPR09@unhcr.org)  
Վեբ-կայք՝ <http://www.unhcr.org>

**Բովանդակություն**

**Ներածություն**

Ընդհանուր նկարագրություն ..... 7  
 Նպատակը ..... 7  
 Բովանդակությունը ..... 7  
 Ինչպես օգտագործել մոդուլը ..... 8

**Մոդուլ I. Պրոֆեսիոնալ բանավոր թարգմանություն**

**Գլուխ I. Հասկանալ համատեքստը**

**Ա. Փախստականների պաշտպանությունը և ՄԱԿ ՓԳՀ-ի դերը ..... 10**  
 1. Ինչո՞ւ է ստեղծվել ՄԱԿ ՓԳՀ-ն ..... 10  
 2. Ո՞րն է ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատը: ..... 10  
 3. ՄԱԿ-ի համակարգում որտեղ է գտնվում ՄԱԿ ՓԳՀ-ն ..... 11  
 4. Որտեղ և ինչպե՞ս է գործում ՄԱԿ ՓԳՀ-ն ..... 11  
 5. Ո՞վ է համարվում փախստական ..... 11  
 6. Ինչպե՞ս են պաշտպանված փախստականները ..... 12  
 7. ՄԱԿ ՓԳՀ-ի՝ փախստականներին պաշտպանելուն և աջակցելուն ուղղված գործողությունները ներառում են հետևյալը ..... 12  
 8. Ինչպե՞ս է տեղի ունենում փախստականի կարգավիճակի որոշման գործընթացը ..... 13  
 9. ՄԱԿ ՓԳՀ իրավասության ներքո գտնվող այլ անձինք ..... 13

**Բ. ՄԱԿ ՓԳՀ-ն և բանավոր թարգմանիչները ..... 14**  
 1. Ե՞րբ է ՄԱԿ ՓԳՀ-ին անհրաժեշտ բանավոր թարգմանիչների օգնությունը ..... 14  
 2. Ո՞րն է իմ դերը ՄԱԿ ՓԳՀ-ի գործողությունների սահմաններում ..... 15

**Գլուխ II. Բանավոր թարգմանության էթիկական կողմը**

**Ա. Համայնքային թարգմանություն ..... 16**  
 1. Ի՞նչ է նշանակում լինել համայնքային բանավոր թարգմանիչ ..... 16  
 2. Կարո՞ղ է արդյոք որևէ մեկը ճնշում գործադրել համայնքային թարգմանիչի վրա ..... 17  
 3. Ի՞նչ կարող է որևէ մեկն անել՝ ինձ վրա ճնշում գործադրելու համար ..... 17  
 4. Ի՞նչ կարող է աշխատավայրում որևէ մեկն անել՝ ինձ վրա ճնշում բանեցնելու համար ..... 19

**Բ. Պրոֆեսիոնալ վարքագիծ ..... 20**  
 1. Ի՞նչ է նշանակում լինել պրոֆեսիոնալ ..... 20  
 2. Կամ՞ արդյոք ինչ-որ ուղեցույցներ, որոնց կարող եմ հետևել՝ պրոֆեսիոնալ լինելու համար ..... 20  
 3. Որո՞նք են այն թեմաները, որոնց անդրադառնում են Վարքագծի կանոնագրքում ներառված հիմնական ուղեցույցները ..... 21  
 4. Պե՞տք է արդյոք, որ ես սահուն տիրապետեմ երկու լեզվի ..... 21  
 5. Արդյո՞ք մի լեզվից մյուսին շարունակաբար անցնելը մեծ ջանքեր է պահանջում ..... 22  
 6. Ի՞նչ դերանուն պետք է օգտագործեմ բանավոր թարգմանելիս ..... 22  
 7. Ի՞նչ են նշանակում չեզոքությունը և անկողմնակալությունը ..... 23  
 8. Կարո՞ղ եմ արդյոք տվյալ դեպքի վերաբերյալ հայտնել իմ կարծիքը ..... 23  
 9. Կարո՞ղ եմ արդյոք թարգմանել իմ ընտանիքի անդամների համար ..... 24  
 10. Կարո՞ղ եմ արդյոք խոսել հարցազրույցի ընթացքում լսածիս մասին: ..... 24



11. Կարող եմ արդյոք մարդկանցից ընդունել նվերներ, փող և/կամ ուշադրության այլ արտահայտություններ .....	25
<b>ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՅԵՐ</b> .....	<b>25</b>

**Մոդուլ II. Լեզվական հարցեր**

**Գլուխ I. Իմ լեզվական ամփոփ նկարագիրը**

<b>Ա. Թարգմանության մեկնակետը</b> .....	<b>30</b>
1. Ինչ է անում բանավոր թարգմանիչը .....	30
2. Ինչ է անում լավ բանավոր թարգմանիչը.....	30
3. Իսկ ինչ պետք է անի ՄԱԿ ՓԳՀ-ի բանավոր թարգմանիչը.....	31
4. Ինչ տեղի կունենա, եթե բանավոր թարգմանելիս ես մասամբ հորինեմ (հանկարծաստեղծ եմ).....	31
<b>Բ. Իմ աշխատանքային լեզուները</b> .....	<b>32</b>
1. Ինչ պետք է անեմ բանավոր թարգմանություն կատարելու համաձայնություն տալուց առաջ.....	32
2. Ինչ պետք է անեմ իմ լրացրած հարցաշարը.....	33
3. Ինչ չափանիշներ պետք է կիրառեմ՝ վերանայելու իմ հարցաշարը.....	33
4. Կարող է արդյոք ինչ-որ տարօրինակ բան լինել իմ խոսելաձևում .....	35
5. Կարող եմ արդյոք ստուգել իմ խոսելաձևը .....	37
6. Իմ խոսելաձևի ստուգումը թեստի միջոցով .....	37
7. Ուրիշ ինչ պետք է անեմ՝ բանավոր թարգմանիչ լինելու համար .....	38

**Գլուխ II. Լեզուն սոցիալական համատեքստում**

<b>Ա. Իմաստի ըմբռնումը</b> .....	<b>40</b>
1. Քանի՞ իմաստ կարող է ունենալ բառը .....	40
2. Ո՞րն է իմաստի <i>ամենավրանգավոր</i> մակարդակը .....	42
3. Արդյո՞ք բոլոր լեզուները իմաստն արտահայտում են միևնույն ձևով .....	43
4. Որո՞նք են հիմնական տարբերությունները .....	44
<b>Բ. Իմաստների թարգմանությունը</b> .....	<b>46</b>
1. Ո՞րն է իմաստների թարգմանության ամենից օգտակար եղանակը .....	46
2. Ինչ անել, եթե ինձ խնդրում են ամեն ինչ թարգմանել <i>բառացի</i> .....	47
3. Արդյո՞ք բառացի հետ-թարգմանությունը որևէ չափով օգտակար է.....	48
<b>Գ. Բառարանաստեղծում</b> .....	<b>49</b>
1. Ինչ է բառարանը.....	49
2. Ինչպե՞ս օգտվել բառարանից.....	49
3. Ինչ տեսք ունի բառարանը .....	49
4. Ինչո՞ւ է կարևոր բառարանաստեղծումը .....	50
<b>ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՅԵՐ</b> .....	<b>50</b>

**Մոդուլ III. Բանավոր թարգմանչի գործիքակազմը**

**Գլուխ I. Բանավոր թարգմանության ընթացքը**

<b>Ա. Հաջորդական թարգմանություն</b> .....	<b>54</b>
1. Ինչ է բանավոր հաջորդական թարգմանությունը.....	54
2. Ինչ պետք է անեմ՝ հաջորդական թարգմանության գործում հմտանալու համար.....	55
3. Ինչ է ակտիվ ունկնդրումը .....	56
4. Ինչո՞ւ է ակտիվ ունկնդիր լինելը բանավոր թարգմանիչների համար այդքան կարևոր .....	56
5. Ուրիշ ինչ պետք է իմանամ լսելու և հասկանալու մասին.....	56
6. Ինչպե՞ս կարող եմ լավագույնս հասկանալ, թե ինչ են ասում մարդիկ....	57
7. Լսել, հասկանալ և թարգմանել... միաժամանակ .....	58

**Գլուխ II. Հիշողության խնդիրներ**

**Ա. Հիշողության կարողությունը..... 59**

1. Արդյո՞ք հիշողությունը կարևոր է բանավոր թարգմանչի համար ..... 59
2. Ինչո՞ւ ենք մենք հիշում ..... 60
3. Ինչպե՞ս են իրազեկվածությունը և գիտակցումն ազդում իմ աշխատանքի վրա:..... 60
4. Կարո՞ղ եմ արդյոք մարզել հիշողությունս ..... 62

**Բ. Նոթագրում..... 63**

1. Ինչո՞ւ ես պետք է նշումներ կատարեմ ..... 63
2. Ինչո՞ւ է կարևոր նոթագրումը ..... 63
3. Ինչպե՞ս է նոթագրումը առնչվում հիշողության հետ ..... 64
4. Արդյո՞ք գոյություն ունի նոթագրման որևէ կատարյալ համակարգ..... 64
5. Կարո՞ղ եմ տեսնել նոթագրման մեկ այլ օրինակ ..... 64
6. Ի՞նչ սիմվոլներ կարող եմ օգտագործել՝ նոթագրման համար..... 65
7. Ինչպե՞ս կարող եմ սիմվոլների միջոցով նկարագրել իրադարձությունների ժամանակագրությունը..... 66
8. Չափումների, չափերի և նմանատիպ այլ բաների մասին..... 66
9. Կարո՞ղ եմ նաև նշել կապերը հիմնական և երկրորդական գաղափարների միջև ..... 67
10. Լրացուցիչ խորհուրդներ ..... 67

**ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ ..... 68**

**Մոդուլ IV. Թարգմանելու ժամանակն է**

**Գլուխ I. Բանավոր թարգմանության հիմնական ընթացակարգերը**

**Ա. Թարգմանելու ճիշտ և թափանցիկ վարքագիծ ..... 70**

1. Ո՞րն է իմ առաջնային խնդիրը հարցազրույցի ընթացքում ..... 70
2. Արդյո՞ք ինձնից ակնկալվում է հաշվի առնել մշակութային տարբերությունները ..... 70
3. Որո՞նք են բանավոր թարգմանության որևէ ընթացակարգի մանրամասները..... 71
4. Ինչո՞ւ է կարևոր իմ լեզվական նկարագիրը..... 71
5. Ի՞նչ է նշանակում լավ վարվելաձև և հարգանք ..... 72
6. Պե՞տք է, արդյոք, ներկայացնեմ ինձ ..... 72
7. Հավանական է արդյոք, որ թարգմանության ընթացքում բախվեմ խոչընդոտների ..... 73
8. Ի՞նչ է դերանունների շրջումը ..... 74
9. Ի՞նչ պետք է անեմ, երբ գիտակցում եմ, որ սխալ եմ կատարել ..... 74
10. Ի՞նչ պետք է անեմ, երբ չեմ հասկանում խոսողին ..... 75
11. Ի՞նչ անել, եթե ես չգիտեմ, թե ինչ նկատի ունի խոսողը ..... 75
12. Հարցազրուցավարն ու հարցազրույցի մասնակիցը չեն խոսում միմյանց հետ..... 75
13. Հարցազրույցի մասնակիցը և հարցազրուցավարը վիրավորում են միմյանց..... 76
14. Իմ դերը՝ որպես մշակութային միջնորդ, դեռևս հստակ չէ ..... 77
15. Կարո՞ղ եմ, արդյոք, հղկել վատ լեզուն ..... 78
16. Խոսողը կարծես օգտագործում է մեղմասացություններ և փոխաբերություններ ..... 78
17. Խոսողի խոսքն այնպիսի տպավորություն է թողնում, ասես այն ոչ մի իմաստ չի արտահայտում:..... 79
18. Խոսողը շարունակում է արտասվել և խոսել: Ի՞նչ պետք է անեմ:..... 79
19. Ի՞նչ պետք է անեմ հարցազրույցի վերջում ..... 80



**Գլուխ II. Գործնական հարցեր**

**Ա. Հարցազրույցի մասնակցի և հարցազրուցավարի հետ միասին նստելը ..... 81**

1. Ինչ նշանակություն ունի մշակութային բաղադրիչը ..... 81
2. Ինչպիսին պետք է լինի նստելու դասավորությունը ..... 82
3. Որտեղ չպիտի նստի թարգմանիչը ..... 82
4. Կամ արդյոք դասավորություններ, որոնք հնարավոր է, որ խնդրահարույց լինեն ..... 83
5. Պե՞տք է, արդյոք, թարգմանեն բացարձակապես ամեն ինչ ..... 84
6. Ինչ անել, եթե կողմերից մեկն ինձ ներգրավում է խոսակցության մեջ... 84
7. Որքան ժամանակ պետք է խոսողին թույլ տամ խոսել ..... 84
8. Ձայնի ինչպիսի տոն պետք է օգտագործեմ ..... 85

**Բ. Հարցազրույցների հատուկ տեսակներ ..... 86**

1. Արդյո՞ք հնարավոր է կանխատեսել, թե ինչպիսին կլինի հարցազրույցը ..... 86
2. Ինչպե՞ս կարող է իմ՝ որպես թարգմանչի ներկայությունը վճռորոշ նշանակություն ունենալ ..... 86
3. Կարո՞ղ եմ արդյոք դերակատարում ունենալ հարցազրույցների ժամանակ վստահություն հաստատելու հարցում ..... 86
4. Արդյո՞ք փախստականի կարգավիճակի որոշման հարցազրույցները հարուցում են ինչ-որ հատուկ խնդիրներ ..... 87
5. Ինչ անեմ, եթե ինձ դիմեն՝ թարգմանելու բժշկի համար ..... 89
6. Ինչ կասեք հոգեբույժների և իրավաբանների համար թարգմանելու մասին ..... 89
7. Ինչ հատուկ տերմինաբանություն պետք է ես սովորեմ: ..... 90

**Գ. Երեխաների համար բանավոր թարգմանելը ..... 91**

1. Պե՞տք է, արդյոք, որ երեխաները հարցազրույցի ենթարկվեն առանց պատշաճ պլանավորման ..... 91
2. Ինչն է կարևոր երեխաների հետ աշխատելիս հատուկ հոգաձություն հանդես բերելը ..... 92
3. Կամ, արդյոք, որևէ ստանդարտ ընթացակարգ, որին ես պետք է հետևեմ ..... 92
4. Պե՞տք է, արդյոք, երեխայի հետ օգտագործեմ որոշակի տեսակի լեզու ..... 93

**Դ. Հանդիպումների ժամանակ թարգմանելը ..... 93**

1. Ինչ է հանդիպումների թարգմանությունը ..... 93

**ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ ..... 94**

**Մոդուլ V. Ինքնահոգաձության հիմնադրույթներ**

**Գլուխ I. Հոգատար եղիր քո նկատմամբ**

**Ա. Ֆլեշբեքեր ..... 98**

1. Ինչ են ֆլեշբեքերը ..... 98
2. Ինչ է տրավմատիկ սթրեսային երկրորդային խանգարումը ..... 99
3. Ինչ է ինքնասպառումը ..... 100
4. Ինչ է վիկարային տրավման ..... 100
5. Ինչ է հետտրավմատիկ սթրեսային խանգարումը (ՀՏՄԽ/PTSD) ..... 100
6. Արդյո՞ք կարող եմ ես կատարել բանավոր թարգմանություն, եթե ես տառապում եմ այդ ախտանիշներից որևէ մեկից ..... 101

**ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ ..... 101**

**ՀԱՎԵԼՎԱԾ I. ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՉԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ..... 102**

**ՀԱՎԵԼՎԱԾ II. ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐԻ ՄՈԴԵԼ ..... 106**





## Ներածություն

### Ընդհանուր նկարագրություն

Այս փաստաթուղթը, որը նվիրված է բռնի տեղահանման համատեքստում բանավոր թարգմանության թեմային, ՄԱԿ ՓԳՀ Միջազգային պաշտպանության ծառայությունների բաժնի կողմից մշակված ինքնակրթության մոդուլների շարքի թողարկումներից է: ՄԱԿ ՓԳՀ-ն առաջին անգամ փախստականների միջավայրում բանավոր թարգմանության վերաբերյալ ինքնակրթության մոդուլ հրատարակեց 1993 թվականի հունիսին: Այդ ավելի վաղ հրատարակված մոդուլն օգնեց ավելի իրազեկ լինել և ավելի լավ հասկանալ փախստականների պաշտպանության համատեքստում ծագող՝ բանավոր թարգմանությանն առնչվող խնդիրները: Այդուհանդերձ, թարգմանության չափանիշները և սկզբունքները մշտապես շարունակել են զարգանալ, և առաջընթացն այս դաշտում անցած տասնհինգ տարիներին զգալի է: Հետևաբար, մոդուլը վերանայվել է՝ արտացոլելու թարգմանության ոլորտում ամենավերջին զարգացումները:

### Նպատակը

Թարգմանիչների կողմից իրականացվող գործառույթը, այն է՝ **հաղթահարել լեզվական խոչընդոտը**, վճռորոշ նշանակություն ունի ցանկացած միջազգային համատեքստում: Այն ստանձնում է մի հավելյալ դեր, երբ իրականացվում է՝ ջանալով օժանդակել ՄԱԿ ՓԳՀ-ին՝ իր առանցքային գործառույթների (փախստականների պաշտպանություն և նրանց համար երկարաժամկետ լուծումների փնտրտուք) կատարման հարցում:

Մարդիկ, որոնց դիմում են՝ թարգմանչական ծառայություններ մատուցելու, հատկապես նրանք, ովքեր նախկինում ՄԱԿ ՓԳՀ-ի հետ աշխատանքի մեծ փորձառություն չեն ունեցել, կարիք ունեն ուղղորդման այն խնդրի շուրջ, թե ինչպես արդյունավետորեն իրականացնեն իրենց գործառույթները: Ինքնակրթության այս ուղեցույցը մշակվել է հետևյալ նպատակներով.

- Բանավոր թարգմանիչներին ծանոթացնել թարգմանության սկզբունքներին և եղանակներին.
- Դաշտային պայմաններում գործող ՄԱԿ ՓԳՀ աշխատակիցների համար ծառայել որպես տեղեկատու ձեռնարկ.
- Աջակցել դաշտային պայմաններում գործող ՄԱԿ ՓԳՀ աշխատակիցներին և գործընկերներին, ովքեր հաճախ են օգտվում բանավոր թարգմանիչների ծառայություններից՝ իրենց սեփական վերապատրաստման դասընթացները մշակելու և անցկացնելու հարցում:

Ամփոփելով՝ ինքնակրթության այս մոդուլը գործնական տեղեկատու ձեռնարկ է, որը կարող է օգտագործվել ինքնուսուցման, ինչպես նաև դասասենյակային վերապատրաստման համար:

### Բովանդակությունը

Մոդուլը բանավոր թարգմանիչներին օգնում է հասկանալ, թե ինչով են տարբերվում երկու կամ ավելի լեզուները, որոնցով նրանք խոսում են, և թե ինչու է երբեմն դժվար ճիշտ թարգմանել մի լեզվից մյուսը: Այն նաև թարգմանիչներին ուսուցանում է տարատեսակ եղանակներ և հնարքներ, որ նրանք կարող են օգտագործել՝ օգնելու մարդկանց, ովքեր ի վիճակի չեն հասկանալ միմյանց՝ միևնույն ժամանակ գրավելով չպարտադրող դիրք: Ի լրումն, ձեռնարկը թարգմանիչներին խորհուրդներ է տալիս այն մասին, թե ինչով են տարբերվում պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ վարքագծերը, և թե ինչ ազդեցություն ունեն այդ երկուսն այն հաստատության վրա, որի համար նրանք աշխատում են, ինչպես նաև դրա հաճախորդների: Մոդուլը նաև ներառում է հիմնական տեղեկություններ այն մասին, թե ինչպես կարող են թարգմա-



նիջները հոգալ իրենց մասին, քանի որ թարգմանությունը փախստականների հետ հարցազրույցների համատեքստում կարող է լինել մեծ ջանքեր պահանջող և պարունակել վտանգներ:

## Ինչպես օգտագործել մոդուլը

Այս փաստաթուղթը ստեղծված է որպես ինքնուսուցման մոդուլ, երբ ընթերցողը կարող է աչքի անցկացնել ձեռնարկի բովանդակությունը և ընտրել ցանկացած առարկա/մոդուլ՝ ըստ իր մասնագիտական կարիքների: Մոդուլի բովանդակությունը ենթաբաժանված է թարգմանության վերաբերյալ հարցերի, որոնք հաճախ են առաջադրվում մասնագետ չհանդիսացող անձանց կողմից:

Մոդուլներից յուրաքանչյուրում առանցքային կարևորություն ունի պրոֆեսիոնալ վարքագիծը, մասնավորապես, հետևյալ տեսակետներից.

- մասնագիտական սահմանների գծում (տես Մոդուլ 1. **Պրոֆեսիոնալ բանավոր թարգմանություն**)
- լեզվաբանական չեզոքության պահպանում (տես Մոդուլ 2. **Լեզվական հարցեր**)
- թարգմանչի աշխատանքային գործիքների արդյունավետ կիրառում (տես Մոդուլ 3. **Բանավոր թարգմանչի գործիքակազմ**)
- ճիշտ և թափանցիկ վարքագծի ձեռքբերում (տես Մոդուլ 4. **Թարգմանելու ժամանակն է**)
- թույլ չտալ, որ սուբյեկտիվությունը խանգարի բանավոր թարգմանության գործընթացին (տես Մոդուլ 5. **Ինքնահոգաձության հիմնադրույթներ**)

Վերապատրաստվողներն ուղեցույցից առավելագույնը կքաղեն, եթե կարդան այն առաաջին էջից մինչև վերջինը: Ամեն անգամ, երբ հարց է տրվում՝ լինի դա մոդուլի սկզբում, պարբերության մեջ, թե մոդուլի վերջում, վերապատրաստվողները պետք է փորձեն պատասխանել՝ հիմնվելով թեմայի վերաբերյալ իրենց գիտելիքի վրա: Այս ուղեցույցը չի պարունակում ճիշտ պատասխանների բաժին, քանի որ ենթադրվում է, որ նյութի քննադատական ընթերցումը, համադրվելով անձնական փորձառությունից քաղված դատողությունների և Վարքագծի կանոնագրքի հիմնավոր իմացության հետ, հնարավորություն կտա վերապատրաստվողներին դուրս բերել ճիշտ պատասխանը:

Հիմնարար նշանակություն ունի այն, որ վերապատրաստվողները որպես թարգմանիչ իրենց աշխատանքի ընթացքում կիրառեն ինքնավերլուծության մեթոդը: Սա կատարյալ տարբերակում պետք է ներառի մշտական նոթագրումը տարբեր հարցերի, խոչընդոտների և երկընտրանքների վերաբերյալ: Հայտնաբերված որևէ խնդրի հնարավոր լուծումների շուրջ աշխատակիցների միջև տեղի ունեցող հիմնավորված բանավեճի արդյունքը պետք է հանձնվի պատասխանատու անձին և վերջիվերջո հաշվի առնվի ինքնուսուցման այս ուղեցույցի հաջորդ խմբագրումներում ներառվելու համար:

# Մոդուլ I. Պրոֆեսիոնալ բանավոր թարգմանություն

Որպես բանավոր թարգմանիչ Ձեր աշխատանքն արդյունավետորեն, մասնագիտորեն և էթիկապես գրագետ ձևով իրականացնելու համար Դուք պետք է տեղյակ լինեք Ձեր աշխատանքի նպատակին և բովանդակությանը, մասնավորապես՝ կապված այն հաստատության հետ, որի համար աշխատելու եք, դրա մանրամասն, գործողությունների շրջանակի և նպատակների հետ: Ավելին, Դուք պետք է իմանաք, որ փախստականների հետ հարցազրույցների համատեքստում բանավոր թարգմանչի աշխատանքը բարդ է բոլոր հանգամանքներում: Հնարավոր է, որ Ձեր աշխատանքն իրականացնեք դժվարին պայմաններում: Մարդիկ կարող են Ձեզնից ակնկալել այն, ինչ Դուք չեք կարող և, հավանական է, չափի տաք իրենց: Ձեր սեփական անձնական արժեքները կարող են հակասության մեջ մտնել Ձեր Վարքագծի կանոնագրի հետ: Դուք կարող եք հայտնվել այնպիսի հանգամանքներում, որոնք կարող են բարդացնել որոշումների կայացումը համաձայն Վարքագծի կանոնագրի: Այս մոդուլը հիմնված է այն գաղափարի վրա, որ Ձեր աշխատանքում առկա խոչընդոտներին ծանոթ լինելը դրանց հաղթահարման առաջին քայլն է:

# Գլուխ I. Հասկանալ համատեքստը

Այս բաժնում Դուք կսովորեք հետևյալի մասին.

- ՄԱԿ ՓԳՀ-ի կազմավորումը և դրա տեղը Միավորված ազգերի կազմակերպությունում.
- ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատը՝ կապված 1951 և 1969 թվականների կոնվենցիաների հետ.
- Փախստականի սահմանումը և փախստականի կարգավիճակի որոշումը.
- ՄԱԿ ՓԳՀ-ի իրավասության ներքո գտնվող (մտահոգության առարկա հանդիսացող) անձանց տարբեր դասակարգերը.
- Հարցազրույցների տեսակները, որոնց կարող եք մասնակցել որպես բանավոր թարգմանիչ:

## Ա. Փախստականների պաշտպանությունը և ՄԱԿ ՓԳՀ-ի դերը

Գլուխ 1

### 1. Ինչո՞ւ է ստեղծվել ՄԱԿ ՓԳՀ-ն

ՄԱԿ ՓԳՀ-ի հիմնադրման միտքն ի հայտ է եկել Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով, այն ժամանակ, երբ մարդու իրավունքների հարցը կարևոր տեղ էր զբաղեցնում միջազգային հանրության օրակարգում: Կազմակերպության անմիջական նախորդը՝ Փախստականների միջազգային կազմակերպությունը (ՓՄԿ), զբաղվում էր պատերազմի ընթացքում տեղահանված մարդկանց հայրենադարձության և վերաբնակեցման հարցերով. այն իր մանդատն ավարտին հասցրեց 1950 թվականին: Սակայն մնացին դեռևս մեկ միլիոնից ավելի փախստականներ, որոնցից շատերն ապրում էին ճամբարներում:

Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը հիմնվեց 1950 թ. դեկտեմբերի 14-ին՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից: Գերագույն հանձնակատարն ընտրվում է Գլխավոր ասամբլեայի կողմից և հաշվետու է այդ մարմնին՝ Տնտեսական և սոցիալական խորհրդի միջոցով: Քաղաքականությունը որոշող հրահանգները տրվում են Գլխավոր ասամբլեայի կողմից: Համաձայն իր կանոնադրության՝ ՄԱԿ ՓԳՀ-ի աշխատանքն իր բնույթով մարդասիրական է և ապաքաղաքական:

### 2. Ո՞րն է ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատը:

ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատով նախատեսված է երկու առանցքային գործառույթ.

- i միջազգային պաշտպանություն տրամադրել փախստականներին.
- ii երկարաժամկետ լուծումներ փնտրել նրանց խնդիրների համար:

Նշված գործառույթները բաժանվում են երեք դասակարգի.

- կամավոր հայրենադարձություն. սա սովորաբար նախընտրելի լուծումն է.



րից խույս տվող մարդիկ նույնպես ընդհանրապես համարվում են փախստականներ, թեպետ երբեմն դիտարկվում են այլ իրավական մեխանիզմների ներքո, քան նախատեսված է 1951 թ. Կոնվենցիայով:

1951 թ. կոնվենցիան և դրա 1967 թ. արձանագրությունը փախստականների իրավիճակը կարգավորող միջազգային իրավունքի անկյունաքարերն են, և դրանցում ամրագրված իրավական սկզբունքները ներթափանցել են միջազգային, տարածաշրջանային և ազգային անթիվ այլ օրենքներ և պրակտիկա՝ կառավարելով փախստականներին վերաբերող խնդիրների լուծումը: 1951 թ. կոնվենցիայում ամրագրված ամենավճռորոշ սկզբունքներից մեկն այն է, որ փախստականները չպիտի արտաքսվեն կամ վերադարձվեն «այն տարածքներ, որտեղ (նրանց) կյանքը կամ ազատությունը ենթակա է վտանգի»: Կոնվենցիան նաև ուրվագծում է այն հիմնական իրավունքները, որոնք պետությունները պետք է տրամադրեն փախստականներին:

Հաճախ շփոթում են «ապաստան հայցող» և «փախստական» եզրույթները: Ապաստան հայցողն այն անձն է, ով ասում է, որ ինքը փախստական է, սակայն նրա հայցի վերաբերյալ դեռևս վերջնական որոշում չի կայացվել այն երկրի կողմից, որին ինքը հանձնվել է, կամ էլ ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից: Վերջնական հաշվով ոչ բոլոր ապաստան հայցողները կճանաչվեն որպես փախստական, սակայն յուրաքանչյուր փախստական սկզբնական փուլում ապաստան հայցող է: Անձը փախստական է, հենց որ նա բավարարում է փախստականների վերաբերյալ միջազգային փաստաթղթերում առկա սահմանման մեջ ամրագրված չափանիշներին: Սա անհրաժեշտաբար պետք է տեղի ունենա նախքան փախստականի նրա կարգավիճակի պաշտոնական որոշումը: Հետևապես, տվյալ անձի՝ փախստականի կարգավիճակի ճանաչումը նրան փախստական չի դարձնում, այլ հռչակում է, որ նա փախստական է:

Թեպետ փախստականներին ավելի ու ավելի հաճախ են շփոթում տնտեսական միգրանտների հետ, սակայն տարբերությունը, սկզբունքորեն, բավական հստակ է: Փախստականները սեփական կամքով չէ, որ լքում են իրենց երկիրը, այլ հարկադրված են այդպես վարվել հետապնդման վախի պատճառով կամ զինված հակամարտության հետևանքով: Ի հակադրություն, տնտեսական միգրանտները վայելում են իրենց հայրենի երկրների պաշտպանությունը, սակայն սեփական կամքով որոշում են լքել այն, օրինակ՝ բարելավելու իրենց տնտեսական վիճակը, կամ՝ ընտանեկան կապերի պատճառով:

## 6. Ինչպե՞ս են պաշտպանված փախստականները

Իրենց տարածքում փախստականների պաշտպանության համար առաջնային պատասխանատվությունը կրում են կառավարությունները և հաճախ դա անում են տեղական ոչ կառավարական կազմակերպությունների (հասարակական կազմակերպություններ, ՀԿ) հետ միասին: Այդուհանդերձ, շատ երկրներում ՄԱԿ ՓԳՀ-ի աշխատակազմը համատեղ աշխատում է ՀԿ-ների և այլ գործընկերների հետ՝ տարատեսակ վայրերում, սկսած մայրաքաղաքից մինչև հեռավոր ճամբարներ և սահմանային գոտիներ: Նրանք տրամադրում են իրավական և ֆիզիկական պաշտպանություն և խթանում այն, նվազագույնի հասցնում բռնության, այդ թվում՝ սեռական և գենդերահեն բռնության, վտանգը:

## 7. ՄԱԿ ՓԳՀ-ի՝ փախստականներին պաշտպանելուն և աջակցելուն ուղղված գործողությունները ներառում են հետևյալը.

- ապահովել ապաստան հայցողների ընդունումը երկիր, հատկապես՝ երբ պետությունները ձգտում են փակել իրենց սահմանները՝ առանց որևէ տարբերակման.
- կանխել *հարկադիր վերադարձը*, ինչը ենթադրում է հակառակվել այնպիսի միջոցառումների, որոնք ուղղված են փախստականների արտաքսմանը կամ վերադարձին այն երկիր, որտեղ նրանց կյանքին կամ ազատությանը կարող է վտանգ սպառնալ.
- ապահովել, որ ապաստան հայցողների նկատմամբ վերաբերմունքը համապատասխանի որոշակի հիմնարար մարդասիրական չափանիշների. ՄԱԿ ՓԳՀ-ի պարտականությունն է

կառավարություններին խրախուսել իրենց ազգային օրենքներն ու օրենսդրական ակտերը համապատասխանեցնելու հարցում և ապահովել դրանց պատշաճ կիրարկումը.

- ապահովել, որ ապաստան հայցողների համար հասանելի լինի փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգը.
- ապաստան հայցողներին/փախստականներին պաշտպանել կամայական ազատագրկումից.
- նպաստել բաժանված փախստական ընտանիքների վերամիավորմանը:

## 8. Ինչպես է տեղի ունենում փախստականի կարգավիճակի որոշման գործընթացը

Համաձայն 1951 թ. կոնվենցիայի և ՄԱԿ ՓԳՀ-ի կանոնադրության՝ որպեսզի անձը բավարարի փախստական հայտարարվելու պահանջներին, պետք է բավարարվեն հետևյալ հինգ չափանիշները.

- հիմնավոր վախ.
- հետապնդում.
- պատճառներ՝ ռասա, կրոն, ազգություն, կոնկրետ սոցիալական խմբին անդամակցություն կամ քաղաքական տեսակետներ.
- գտնվելը քաղաքացիության երկրից/մշտական բնակության նախկին վայրից դուրս.
- հետապնդման ենթարկվելու վախի պատճառով անկարող է կամ չի կամենում դիմել տվյալ երկրի պաշտպանությանը կամ վերադառնալ այնտեղ:

Հարցազրույցի նպատակն է պարզել, թե արդյոք հայցվորը բավարարում է նշված չափանիշներին: ՄԱԿ ՓԳՀ-ի անմիջական ներգրավվածությունը փախստականի կարգավիճակի որոշման գործընթացում տարբեր երկրներում տարբեր է:

- ՄԱԿ ՓԳՀ-ն կարող է փախստականի կարգավիճակ շնորհել՝ համաձայն իր Կանոնադրության: Սա տեղի է ունենում այն դեպքերում, երբ տվյալ պետությունը չի միացել 1951 թ. կոնվենցիային կամ միջազգային այլ պայմանագրերի: Դա կարող է նաև տեղի ունենալ այնպիսի մի երկրում, որը ստորագրել և/կամ վավերացրել է Կոնվենցիան, սակայն այն իրականացնելու համար ազգային համապատասխան օրենսդրություն չի ընդունել:
- ՄԱԿ ՓԳՀ-ն կարող է փախստականի կարգավիճակի որոշման գործընթացն իրականացնել տվյալ պետության իշխանությունների անունից, որոնք կարող են նախընտրել այդ պարտականությունը թողնել ՄԱԿ ՓԳՀ-ին:
- ՄԱԿ ՓԳՀ-ն կարող է մասնակցել որոշման կայացման գործընթացին դիտորդի կամ խորհրդատուի կարգավիճակով: Սա սովորաբար տեղի է ունենում բողոքարկման փուլում:
- Բուն ընթացակարգից դուրս՝ ՄԱԿ ՓԳՀ-ն կարող է վերանայել մերժված այն հայցվորների հայցերը, որոնք արտաքսման ենթակա են:

## 9. ՄԱԿ ՓԳՀ իրավասության ներքո գտնվող այլ անձինք

Տարիների ընթացքում ՄԱԿ ՓԳՀ-ն պատասխանատվություն է ստանձնել նաև մի շարք այլ խմբերի համար, որոնք որոշակի առումով նման են փախստականներին, սակայն հիմնադրման պահին նրանց մասին ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատում հստակորեն հիշատակված չի եղել:

Հայրենադարձները նախկին փախստականներն են, ովքեր կամավոր կերպով վերադարձել են իրենց հայրենի երկիր: Թեպետ ՄԱԿ ՓԳՀ-ի Կանոնադրությունը կազմակերպությանը պարտավորեցնում է խթանել կամավոր վերադարձը և նպաստել դրան, սակայն ավանադաբար ենթադրվել է, որ կազմակերպության ներգրավվածությունը փախստականների խնդիրներում պետք է ավարտվի, հենց որ փախստականները մտնեն իրենց ծագման երկիր՝ հատելով սահմանը: Այդուհանդերձ, ՄԱԿ ՓԳՀ-ի գործադիր կոմիտեի՝ կազմակերպության վերահսկիչ մարմնի վերջին տասնամյակի տարբեր եզրակացություններ հաստատում են, որ



ձգտելով փախստականների համար գտնել երկարաժամկետ լուծումներ՝ ՄԱԿ ՓԳՀ-ն օրինակարգ հետաքրքրվածություն ունի վերադարձի հետևանքներով, ուստի և գործողությունները, ինչպիսին հայրենադարձների մոնիտորինգն է և նրանց հետագա աջակցությունը ծագման երկրում, արդարացված են:

Քաղաքացիություն չունեցող տղամարդիկ, կանայք և երեխաներն են, ովքեր որևէ պետության կողմից տվյալ պետության քաղաքացիներ չեն համարվում: Որպես այդպիսիք՝ նրանք զրկված են որևէ արդյունավետ պետական պաշտպանությունից և կարող են խտրականության բախվել. երբ հարցը հանգում է ընդհանուր առմամբ տվյալ երկրի քաղաքացիների ունեցած իրավունքների հասանելիությանը: Հարկ է նշել, որ քաղաքացիություն չունեցող անձը նույնպես կարող է փախստական լինել՝ կախված նրան առնչվող հանգամանքներից:

Միջազգային առանցքային փաստաթղթերը, որոնք վերաբերում են քաղաքացիություն չունեցող անձանց, հետևյալն են.

- Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի վերաբերյալ կոնվենցիա (1954 թ.).
- Ապաքաղաքացիության կրճատման վերաբերյալ կոնվենցիա (1961 թ.):

ՄԱԿ ՓԳՀ-ն միջազգային միակ գործակալությունն է, որն ունի ուղղակիորեն Գլխավոր ասամբլեայի բանաձևերից բխող ընդհանուր մանդատ՝ օգնելու քաղաքացիություն չունեցող անձանց: Առաջնորդվելով վերոնշյալ փաստաթղթերով՝ ՄԱԿ ՓԳՀ-ն աշխատում է հետևյալ ուղղություններով.

- ապահովել, որ հարգվեն քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքները
- կանխել/կրճատել ապաքաղաքացիությունը՝ պետություններին խրախուսելով քաղաքացիություն տրամադրել իրենց տարածքի հետ զգալի կապ ունեցող այն անձանց, ովքեր այլապես քաղաքացիություն չունեն:

*Ներքին տեղահանված անձինք* այն անձինք են, ովքեր լքել են իրենց տները՝ տեղափոխվելով երկրի այլ մասեր՝ զինված հակամարտությունների, բռնության դրսևորումների, մարդու իրավունքների խախտումների կամ՝ բնական կամ մարդածին աղետների հետևանքով: Միավորված ազգերի կազմակերպության Ներքին տեղահանման մասին առաջնորդող սկզբունքները (1998 թ.) սահմանում են ներքին տեղահանված անձանց ուղղված միջազգային գործողությունների ստանդարտներ: ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատը հստակորեն ներառում է փախստականներին, սակայն վերջին 30 տարիներին այն օգնություն է ցուցաբերել ավելի քան 30 գործողությունների, որոնք ուղղված են եղել ամբողջ աշխարհում ներքին տեղահանված անձանց: 2005 թվականին ՄԱԿ-ին հաջողվեց հասնել մի համապարփակ համաձայնագրի, որով այն հստակեցրեց և ամրապնդեց մասնագիտացված գործակալությունների դերերը ներքին տեղահանված անձանց օգնելու հարցում: Այս համաձայնագրի ներքո պաշտպանության, արտակարգ իրավիճակում կացարանի ապահովման և ճամբարների համակարգման հարցում ՄԱԿ ՓԳՀ-ին վերապահվում էր առաջատար պատասխանատվություն՝ սկսած 2006 թ. հունվարի 1-ից:

## Բ. ՄԱԿ ՓԳՀ-ն և բանավոր թարգմանիչները

### 1. Երբ է ՄԱԿ ՓԳՀ-ին անհրաժեշտ բանավոր թարգմանիչների օգնությունը

Ստորև ներկայացված են շփումների որոշ տեսակներ, որոնց ժամանակ ՄԱԿ ՓԳՀ պաշտոնյաները հանդիպում են ՄԱԿ ՓԳՀ-ի իրավասության ներքո գտնվող անձանց և կարող են բանավոր թարգմանիչ օգնության կարիք ունենալ.

- Գրանցման ընթացակարգեր. երբ արձանագրվում են փախստականների, ներքին տեղահանված անձանց կամ հայրենադարձների վերաբերյալ անձնական տեղեկությունները:
- Փախստականի կարգավիճակի որոշում. երբ հարցազրույց է անցկացվում ապաստան հայցողի հետ՝ որոշելու, թե արդյոք նա բավարարում է փախստականի սահմանման չա-



փանիշներին:

- Վերաբնակեցման հարցով հացազրույցներ. երբ հարցազրույց է անցկացվում փախստականի հետ՝ պարզելու մի երրորդ երկրում վերաբնակեցվելու նրա կարիքները:
- Մոնիտորինգ. երբ ՄԱԿ ՓԳՀ-ն հարցազրույցների միջոցով տեղեկություններ է հավաքում փախստականների, հայրենադարձների և ներքին տեղահանված անձանց պաշտպանության, իրավունքների և բարեկեցության վերաբերյալ:
- Մասնակցային գնահատում. երբ ՄԱԿ ՓԳՀ-ի իրավասության ներքո գտնվող կանանց, աղջիկների, տղաների և տղամարդկանց հետ անցկացվում է կառուցվածքային երկխոսություն՝ հավաստի տեղեկություններ հավաքելու պաշտպանության հետ կապված այն կոնկրետ վտանգների վերաբերյալ, որոնց նրանք բախվում են, ինչպես նաև դրանց հիմքում ընկած պատճառների վերաբերյալ, որպեսզի հասկանան նրանց կարողությունները և լսեն նրանց առաջարկությունները լուծումների շուրջ:
- Հոգեբանական խորհրդատվություն և/կամ բժշկական թեմայով հարցազրույցներ. երբ փախստականների և ՄԱԿ ՓԳՀ-ի մտահոգության առարկա հանդիսացող անձանց համար հասանելի է դարձվում հիմնավորված և մասնագիտական խորհրդատվություն՝ մասնավոր և/կամ հիվանդությունների հետ կապված խնդիրների վերաբերյալ:
- Բոնություն կամ խոշտանգումներ վերապրած անձանց հետազոտում. երբ փորձ է արվում հավաքել ավելի շատ տեղեկություններ խոշտանգման հոգեբանական և/կամ ֆիզիկական հետևանքների վերաբերյալ:

## 2. Ո՞րն է իմ դերը ՄԱԿ ՓԳՀ-ի գործողությունների սահմաններում

Բանավոր թարգմանիչների դերն էական է ՄԱԿ ՓԳՀ-ի համար իր առանցքային գործառույթների իրականացման հարցում, այդ թվում՝ գրանցումը, փախստականի կարգավիճակի որոշումը, վերաբնակեցումը և մասնագիտական խորհրդատվությունը, որը շատ դեպքերում ներառում է նաև նուրբ հարցեր՝ կապված սեռական և գենդերահեն բռնության հետ: Այսպիսով, թարգմանիչներն առանցքային դեր են կատարում ՄԱԿ ՓԳՀ-ի շատ գրասենյակներում: Փախստականների հայտարարության ճիշտ թարգմանությունը էական է, որպեսզի ՄԱԿ ՓԳՀ-ն հնարավորություն ունենա հասկանալու փախստականի մտահոգություններն ու կատարի համապատասխան միջամտություններ: Միևնույն ժամանակ, թարգմանիչներն այնպիսի դիրքում են, որ զգալի ազդեցություն և իշխանություն ունեն ՄԱԿ ՓԳՀ-ի իրավասության ներքո գտնվող անձանց նկատմամբ: Թեպետ թարգմանիչների մեծամասնությունը իրենց գործառույթներն իրականացնում է պրոֆեսիոնալ մակարդակով՝ իրենց աշխատանքի տեխնիկական առաջադրանքին համապատասխան, սակայն եղել են դեպքեր, երբ այս իշխանությունը շահագործվել է՝ ի վնաս փախստականների, ինչպես նաև ՄԱԿ ՓԳՀ-ի ծրագրի ընդհանուր շիտակության:

### Հիշել

Ձեր ծառայությունների կարիքը կարող է լինել այս սցենարներից ցանկացածի դեպքում: Նաև հարցազրուցավարի պարտականությունն է՝ ուշադիր լսել հարցազրույցի մասնակցի հայցը, հարցեր առաջադրել և գնահատել հայցը: Որպես թարգմանիչ՝ Ձեր դերը այս գործընթացում օգնելն է՝ հաղորդակցության խողովակ ապահովելու միջոցով: Քանի որ կողմերից յուրաքանչյուրը խոսում է Ձեր ծայնով, Ձեր դերը կարևոր է և պետք է իրականացվի մասնագիտական պատրաստվածության բարձր մակարդակով:



## Գլուխ II. Բանավոր թարգմանության էթիկական կողմը

### Այս բաժնում Դուք կհմանաք, թե՛

- ինչպես անդամակցել և լեզվական համայնքին, և մասնագիտական որևէ մարմնի.
- ինչպես կարող է սոցիալական ճնշումն ազդել Ձեր՝ որպես թարգմանչի աշխատանքի վրա, և ինչպես վարվել այդ դեպքում.
- ինչպես վարվել բարդ իրավիճակներում, որոնք կարող են ծագել բանավոր թարգմանության համատեքստում.
- ինչպես գծել մասնագիտական սահմանները.
- ինչ է ասված Վարքագծի կանոնագրքում՝ մասնագիտական վարքագծի վերաբերյալ:

## Ա. Համայնքային թարգմանություն

### 1. Ինչ է նշանակում լինել համայնքային բանավոր թարգմանիչ

Ձեզ կարող են կոչել համայնքային թարգմանիչ, եթե.

- Դուք որևէ լեզվական համայնքի անդամ եք.
- որպես բանավոր թարգմանիչ՝ Ձեր ծառայություններն եք առաջարկում դրա անդամներին.
- համայնքի անդամները չեն խոսում պաշտոնական լեզուներից որևէ մեկով կամ լավ չեն տիրապետում դրան.
- այդ լեզվով խոսում են այն հաստատությունում, որի ծառայություններից նրանք ցանկանում են օգտվել:

Համայնքային բանավոր թարգմանիչները կարող են լինել ներգաղթյալների և/կամ փախստականների առաջին սերնդի ներկայացուցիչներ կամ նրանց ժառանգները: Նրանք կարող են պնդել կամ չպնդել, որ սերտ կապեր ունեն միգրանտների կամ փախստականների որևէ խմբի հետ: Նրանք հաճախ ընկալվում են որպես *սոցիալական աշխատողներ*, այն առումով, որ օգնում են փոքրամասնության խմբի անդամ հանդիսացող մարդկանց՝ հաղթահարելու լեզվական խոչընդոտը, ինչը կարող է նրանց թույլ չտալ լիարժեքորեն օգտվել իրենց իրավունքներից: Համայնքային թարգմանիչներին կարելի է նաև բնութագրել որպես *մշակութային միջնորդներ*, քանի որ նրանցից կարող է ակնկալվել՝ գործել իբրև *մշակութային միջնորդներ*, ովքեր կամրջում են մշակութային տարբերությունների պատճառով ստեղծված անջրպետը երկու մարդկանց միջև, ովքեր հավանաբար ի վիճակի չեն լինի հասկանալ միմյանց, եթե նրանց խոսքը բառացիորեն թարգմանվի:

### Հարց

- Ո՞ր խմբին եք Դուք պատկանում:

## 2. Կարող է արդյոք որևէ մեկը ճշում գործադրել համայնքային թարգմանչի վրա

Սոցիալական և աշխատանքային ճշումն ազդում է Ձեր վարքագծի վրա, եթե ուղղակիորեն կապված է՝

- որպես թարգմանիչ Ձեր դերի հետ.
- Ձեր գործատուի՝ Ձեզնից ունեցած ակնկալիքների հետ:
- այն բանից, թե Ձեզնից ինչ ակնկալիքներ ունեն Ձեր լեզվական համայնքի ներկայացուցիչները, ում հետ Դուք երբեմն կարևոր անձնական հարաբերություններ եք ունենում:



«Մենք նույն լեզվով ենք խոսում»  
«Մենք միմյանց հասկանում ենք»

Սա բանավոր  
թարգմանիչն է.  
Նա չներգրավված  
միջնորդ է:



Այդպիսի հարաբերությունները կարող են խանգարել բանավոր թարգմանչի գործառնություններին և անհնար դարձնել թարգմանչական այն *կամուրջը* կամ *խողովակը* լինելը, որը հաճախ նրանից ակնկալվում է. նշվածը, ըստ դիտարկումների, վերաբերում է բանավոր թարգմանչի դերի հնացած իդեալականացմանը:

Ի հակադրություն, թարգմանչի տարիքը, սեռը, սոցիալական կարգավիճակը, քաղաքական և կրոնական կողմնորոշումը դերակատարում ունեն հարցազրույցի դինամիկայում և կարող են բացասական կամ դրական ազդեցություն ունենալ բանավոր թարգմանության միջոցով հաղորդակցության որակի վրա:

Խորհուրդ է տրվում չանտեսել այսօրինակ ազդեցությունները, քանի որ դրանք կարող են նվազագույնի հասցվել և հնարավորինս չեզոքացվել, եթե տեղյակ եք դրանց պատճառներից գոնե մի քանիսին:

## 3. Ինչ կարող է որևէ մեկն անել՝ ինձ վրա ճշում գործադրելու համար

Փորձելով պատասխանել այս հարցին՝ կարող ենք քննության առնել, թե ինչ հնարավոր ակնկալիքներ կան Ձեզնից: Եկեք սկսենք Ձեր լեզվական համայնքից և ենթադրենք, որ, երբ նստած եք տանը, Դուք մի շարք ընկերների համար մի ցնցող լուրի առիթ եք դառնում...



... և առկա է մեծ հավանականություն, որ հաջորդ 48 ժամվա ընթացքում ողջ համայնքը կիմանա այդ մասին: Կախված այն բանից, թե ինչ եք Դուք անում և ինչ չեք անում, այն բանից, թե արդյոք ընկալվում եք իբրև շատ թե քիչ հզոր, գիտակ, հարգալից, վստահելի, լավ կապեր ունեցող կամ քաղաքականապես ու ֆինանսապես ազդեցիկ, Ձեր համայնքի անդամները կարող են ակնկալիքներ ունենալ Ձեզնից և/կամ համարել, որ Դուք որոշակի պարտավորություններ ունեք կատարելու՝ ըստ հետևյալ հնարովի սցենարներից ցանկացած մեկի.

**Սցենար 1.** Դուք Ձեր համայնքի ամենից կարևոր ընդդիմադիր կուսակցության անդամ եք, որը նաև գերիշխող դիրք ունի Ձեր համայնքի քաղաքական կյանքում: Գոյություն ունի որոշակի փոխհամաձայնություն առ այն, թե փախստականը ինչ պիտի ասի և ինչ չպիտի ասի ՄԱԿ ՓԳՀ-ին:

**Սցենար 2.** Համայնքը բավականին փոքր է, և դրա անդամների մեծ մասը կապված է միմյանց հետ: Մշակութային առումով՝ կենսականորեն կարևոր է գոհացնել ընտանիքի անդամներին:

**Սցենար 3.** Ձեր եղբայրը լրջորեն պարտական է Ձեր համայնքի անդամներից մեկին, ով գալիս է Ձեզ մոտ՝ պայման կապելու. նա ցանկանում է, որ իր չամուսնացած աղջիկը վերաբնակեցվի Միացյալ Նահանգներում, և համոզված է, որ Դուք գիտեք, թե ինչ է պետք անել նրա համար: Եթե Դուք անեք դա, նա կմոռանա Ձեր եղբոր պարտքի մասին:

**Սցենար 4.** Համայնքի մի շարք անդամներ հայտարարում են, որ իրենք քրիստոնյա են, թեպետ Ձեր համայնքում ավելի մեծ տարածում ունի իսլամը: Խոսակցություններ կան այն մասին, որ համայնքի այդ անդամները նախկինում մուսուլման են եղել և հավատափոխ են եղել՝ իրենց հայցն ավելի արժանահավատ դարձնելու նպատակով: Որոշ մարդիկ կասկածում են, որ Դուք գուցե նրանցից մեկն եք:

**Սցենար 5.** Կյանքը որպես փախստական դժվար է, և մարդը միշտ փողի կարիք ունի: Փախստականները նաև կարիք ունեն վստահելի վկայությունների, հավաստագրերի, փաստաթղթերի և շահավետ ամուսնության: Երբեմն տարբերակներից մեկը կարող է լուծել միանգամից այս խնդիրներից մի քանիսը:

**Սցենար 6.** Ձեր համայնքում աճում է այն մարդկանց թիվը, ովքեր հայտարարում են, որ հետապնդումների են ենթարկվել Ձեր ծագման երկրում: Ձեր երկրի դեսպանատունն զգուշորեն ներգրավվում է: Մարդկանց սպառնում են, և հայցերի մի մասն անուղղակիորեն չեղարկվում է: Դուք ունեք կին և մի դեռատի դուստր:

**Սցենար 7.** Սեռական բռնությունների ենթարկված կամ ՄԻԱՎ դրական մարդիկ սոցիալապես մեկուսացված են Ձեր համայնքում, որի անդամների կյանքին շատ մոտիկից հետևում են: Ձեր մոտիկ հարազատը հենց նոր է ժամանել Ձեր ծագման երկրից: Նա երեք ամսվա հղիություն ունի, սակայն վեց ամիս չի տեսել ամուսնուն: Ամուսինների հետ հարցազրույց պետք է անցկացվի առանձին-առանձին:

## Հիշել

Հաճախ հարկ է լինում, որ փախստականը լիովին ճանաչված լինի որպես համայնքի անդամ՝ որպես թարգմանիչ վստահելի լինելու համար: Ինչ կանեիք Դուք, եթե բանավոր թարգմանիչ լինեիք վերոնշյալ սցենարներից որևէ մեկում: Սցենարներից յուրաքանչյուրը վերածեք ամբողջական պատմության: Ձեր դերը որպես թարգմանիչ, Ձեր ընդունած որոշումները և այդպիսի որոշումներ ընդունելու պատճառները առանցքային են լինելու պատմության մեջ:

### 4. Ինչ կարող է աշխատավայրում որևէ մեկն անել՝ ինձ վրա ճնշում բանեցնելու համար

Որոշ ժամանակ անց Դուք կարող եք տեղեկանալ, թե ինչ է սոցիալական ճնշումը: Հաստատապես, երբ խոսքն աշխատանքի մասին է, Դուք որոշակի փորձ կուտակելու կարիք կունենաք, որպեսզի կարողանաք գծել մասնագիտական սահմանները...



Գլուխ 2

## Հարցեր.

- Ինչ կասեք Ձեր մասին: Կկիսեի՞ք Ջոնի կասկածները: Վերջիվերջո, սա շատ պարզ խնդրանք է, մի բան, որն առաջին հայացքից բավականին նորմալ է թվում: Ինչո՞ւ է, Ձեր կարծիքով, Ջոնը տատանվում:

Որոշ ժամանակ է անցնում, և Դուք հայտնվում եք հետևյալ սցենարներում.

**Սցենար 1.** Հարցազրույցների որոշ մասնակիցներ փորձում են ճնշում բանեցնել Ձեզ վրա՝ կաշառքի կամ սպառնալիքի միջոցով և պահանջելով, որ Դուք հարցազրույցի ժամանակ ստեք իրենց կապակցությամբ:

**Սցենար 2.** Սպառնալիքներ եք ստանում և ի վերջո հարձակման ենթարկվում փախստականների կողմից, ում վերաբնակեցման հայցը դրական լուծում չի ստացել:

**Սցենար 3.** Հարցազրույցավարը խնդրում է Ձեզ պատմել իրեն, թե ինչ գիտեք հայցվորի, նրա կյանքի մասին, և ներկայացնել համայնքի անդամների կարծիքը նրա վերաբերյալ: Ի վերջո, հարցազրույցավարը խնդրում է ներկայացնել Ձեր կարծիքը հայցի վերաբերյալ:

**Սցենար 4.** Երկու գործընկեր թարգմանիչներ Ձեզ մեղադրում են, որ բացասական ազդեցություն եք ունեցել փախստականի կարգավիճակի որոշման և վերաբնակեցման հարցազրույցներում, որոնց մասնակցել են իրենց մի քանի հարազատներ:

**Սցենար 5.** Բանավոր թարգմանության հինգ նիստ անցկացնելուց և ուժասպառվելուց հետո հարցազրույցավարը խնդրում է, որ թարգմանեք ևս մեկ հայցվորի համար:

ԱՆՈՒՄ

Մասնագիտական և անձնական սահմանների գծումը դյուրին գործ չէ: Այդպես վարվելիս Դուք պետք է ունակ լինեք հիմնավորել այդ սահմանները Ձեր և, հավանական է՝ այլոց առջև. Ձեր գործընկերների, ընկերների և ծանոթների: Մասնագիտական սահմաններն այն սահմանափակումներն են, թե ինչ կարող եք անել, և ինչ՝ չեք կարող, ինչպես նաև՝ ինչ կարող է և չի կարող ակնկալվել Ձեզնից աշխատանքում: Այս սահմանափակումները երբեք չպետք է խախտվեն, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա են բացառիկ հանգամանքներ և դրանք հատելու հետևանքների վերաբերյալ փոխադարձ, լիարժեք իրազեկվածություն:

### Հարց

- Որտեղ կգծեիք Ձեր մասնագիտական սահմանները, եթե ներգրավված լինեիք վերոբերյալ սցենարներից որևէ մեկում:

### Հիշել

Նաև մտքում պահեք այն, որ գուցե հարկ կլինի, որ տեղյակ լինեք Ձեր անձնական անվտանգության և մտավոր առողջության մասին, եթե ճնշումների եք ենթարկվում ինչպես աշխատավայրի ներսում, այնպես էլ դրանից դուրս: Մասնագիտական սահմաններ գծելը կարող է բավարար չլինել այսօրինակ ճնշումն իսպառ վերացնելու համար, թեպետ կարող է նվազեցնել այն:

## Բ. Պրոֆեսիոնալ վարքագիծ

### 1. Ինչ է նշանակում լինել պրոֆեսիոնալ

Մարդը պրոֆեսիոնալ է, եթե հմտացել է որևէ մասնագիտության մեջ, այլ կերպ ասած՝ եթե գիտի, թե ինչպես անել որևէ գործ՝ ի բավարարություն իր հաճախորդների: Պրոֆեսիոնալ ասելով մենք նաև նկատի ունենք մեկին, ով եթե անգամ աշխատանքային իր առաջին օրն է, և նախկինում երբեք չի արել այդ աշխատանքը, պատրաստ է գնալ քայլ առ քայլ և ապահովել, որ ամեն ինչ արվի պատշաճ ձևով:

Մեկը, ով գիտի, թե ինչ կարող է ինքն անել և ինչ չի կարող, և չի փորձում անտեսել կամ քողարկել իր սահմանափակումները, պրոֆեսիոնալ է: Պրոֆեսիոնալը նա է, ով պատրաստ է սովորել՝ սկսելով ամենաբազայինից, ձգտելով հասնել բանիմացության ու հմտության բարձր մակարդակի: Որպես թարգմանիչ Ձեր վերաբերմունքում և վարքագծում հստակ լինելը, այն է՝ սահմաններ պահպանելը, նույնպես պրոֆեսիոնալիզմի նշան է:

### 2. Կան արդյոք ինչ-որ ուղեցույցներ, որոնց կարող եմ հետևել՝ պրոֆեսիոնալ լինելու համար

Կան որոշ ուղեցույցներ, որոնց կարող եք հետևել՝ պրոֆեսիոնալ լինելու համար, և մենք հաստատականորեն խորհուրդ ենք տալիս օգտագործել դրանք այն նպատակով, ինչի համար նախատեսված են՝ ուղեցույցներ, այլ ոչ թե կանոնների և կանոնակարգումների համախումբ, որոնք կուրորեն կիրառում եք՝ անկախ այն բանից, թե ինչ իրավիճակում եք հայտնվել: Այս ուղեցույցները կարող եք գտնել Վարքագծի կանոնագրքի Հավելված 1-ում:

Ուղեցույցների հիմնավորությունը և կիրառելիությունը ստուգելու լավագույն ուղին հասկանալն է, թե ինչ է ընկած դրանց հետևում: Դրանցից յուրաքանչյուրը դիտարկեք հետևանքների առումով: Այն է՝ հարցնելով՝ ինչ տեղի կունենա, եթե ես չհետևեմ դրան: Կամ՝ եթե ես անեմ այս և չանեմ այն: Երբ տվյալ բանն անեք, նոթագրեք բոլոր այն կասկածներն ու հարցերը, որ

կծագեն Ձեր մտքում: Նաև՝ փորձեք տեսնել, թե արդյոք ուղեցույցները կարող են կիրառվել նախորդ բաժիններում ներկայացված սցենարներում:

### 3. Որո՞նք են այն թեմաները, որոնց անդրադառնում են Վարքագծի կանոնագրքում ներառված հիմնական ուղենիշները

- Անկողմնակալություն և չեզոքություն.
- Գաղտնիություն
- Բանհիմացություն
- Թափանցիկություն
- Թարգմանության ճշգրտություն
- Սահմանների հաստատում

#### Հարցեր

- Կանոնագրքում որտեղ է նկարագրված այս կետերից յուրաքանչյուրը:
- Ինչպե՞ս եք հասկանում հետևյալ մասնագիտական արժեքները. ազնվություն, հաշվետվականություն, հոգածություն, վստահելիություն և հարգանք: Ի՞նչ եք կարծում՝ արդյո՞ք դրանք պահանջված են Կանոնագրքի և Ձեր դերի տեսանկյունից, և, եթե այո, ապա ինչպե՞ս:

### 4. Պե՞տք է արդյոք, որ ես սահուն տիրապետեմ երկու լեզվի



Ծանոթություն. Պրոֆեսիոնալ վարքագիծ կարող է պահպանվել միայն այն դեպքում, եթե բանավոր թարգմանչի լեզվական իմացության մակարդակը խոչընդոտի չի հանդիսանում նրա աշխատանքը բարձր մակարդակով կատարելու համար:

#### Հարց

- Կարո՞ղ եք արդյոք մտածել որևէ աշխատակարգ, որից կարող եք օգտվել բանավոր թարգմանություն կատարելիս, երբ Դուք սահուն չեք տիրապետում երկու լեզուներին, և որևէ այլ թարգմանիչ հասանելի չէ:





## 5. Արդյոք մի լեզվից մյուսին շարունակաբար անցնելը մեծ ջանքեր է պահանջում




Ծանոթություն/Եզրակացություն/Ուղեցույց. Թարգմանիչը պետք է պարզապես լինի կիրառելի երկկողմ հաջորդական թարգմանություն՝ ճշգրտորեն փոխանցելու խոսողի միտքը:

### Հարցեր

- Հարցազրուցավարը շատ արագ է աշխատում, իսկ Դուք շարունակ սխալներ եք գործում: Ինչ եք պատրաստվում անել: Պատրաստ եք արդյոք ասել՝ ես մի շարք սխալներ կատարեցի:

## 6. Ինչ դերանուն պետք է օգտագործեն բանավոր թարգմանելիս



Ծանոթություն/Եզրակացություն/Ուղեցույց. Թարգմանիչը պետք է օգտագործի միևնույն քերականական դեմքը, ինչ և խոսողը:

### Հարցեր

- Կարո՞ղ են արդյոք լինել այլ հետևանքներ, եթե «նա» ասելու փոխարեն շարունակեք ասել «ես»:



- Կարող եք նշել որևէ այլ դեպք, երբ Դուք, հնարավոր է, որ անգիտակցաբար անցել եք «նա»-ի:

## 7. Ինչ են նշանակում չեզոքությունը և անկողմնակալությունը



Ծանոթություն. Թարգմանիչը պատրաստանապու է ճշգրտորեն թարգմանելու համար՝ առանց որևէ բան ավելացնելու կամ բաց թողնելու:

### Հարց.

- Ինչպե՞ս կարող է հարցազրուցավարը վերջիվերջո պարզել, որ որևէ խոշտանգում տեղի չի ունեցել:

## 8. Կարող եմ արդյոք տվյալ դեպքի վերաբերյալ հայտնել իմ կարծիքը



Ծանոթություն. Բանավոր թարգմանիչը չպիտի փորձադրի որևէ փոխակի սոցիոլոգիական, մարդաբանական կամ պատմական տեղեկություններ՝ արտահայտելու կարծիք կամ նպաստելու կարծիքի ձևավորմանը այն դեպքի վերաբերյալ, որում ինքը ներգրավված է:



### Հարցեր

- Մյուս կողմից՝ շատ օգտակար կարող է լինել թարգմանչի ներուժն օգտագործելը՝ որպես ծագման երկրի վերաբերյալ տեղեկությունների աղբյուր: Ձեր կարծիքով՝ ո՞ր իրավիճակներում սա կարող է օգտակար լինել: Եթե դա օգտակար լինի, հնարավոր է արդյոք այս հարցում հաշտության եզրեր գտնել Վարքագծի կանոնագրքի բովանդակության հետ: Եթե այո, ապա ինչպե՞ս պետք է թարգմանիչը կատարի իր աշխատանքը:

### 9. Կարո՞ղ եմ արդյոք թարգմանել իմ ընտանիքի անդամների համար



Ծանոթություն. Թարգմանիչը չպիտի թարգմանի մուտք հարազատների և/կամ մտերիմ ընկերների համար, բացառությամբ արտակարգ իրավիճակների:

Գլուխ 2

### Հարցեր

- Սա բավականին դժվարին կանոն է, այնպես չէ: Ձեր կարծիքով, արդյո՞ք այն կիրառելի է այս տեսքով: Արդյո՞ք կարծում եք, որ հնարավոր է, որ պարզվի՝ Ձեր սեփական եղբոր համար թարգմանելը շատ լավ միտք է:

### 10. Կարո՞ղ եմ արդյոք խոսել հարցազրույցի ընթացքում լսածիս մասին:



Ծանոթություն. Ոչ մի պարագայում որևէ պարծառով թարգմանիչը չպիտի բացահայտի կամ կրկնի ՄԱԿ ՓԳՀ-ում իր աշխատանքի ընթացքում ձեռք բերած բանավոր և/կամ գրավոր տեղեկությունները:

## Հարցեր

- Արդյո՞ք որևէ մեկ ուրիշը կտուժի թարգմանչի արածի հետևանքով:
- Ձեր կարծիքով՝ ինչ հանգամանքներում Դուք պետք է խոսեք: Եվ՝ ինչպիսի՞ սահմաններում:

### 11. Կարո՞ղ եմ արդյոք մարդկանցից ընդունել նվերներ, փող և/կամ ուշադրության այլ արտահայտություններ



*Ծանոթություն. Թարգմանիչը երբեք չպիտի որևէ լրացուցիչ փոխհատուցում, փող կամ ուշադրության որևէ այլ դրսևորում ընդունի:*

## Հարցեր

- Ձեր կարծիքով, արդյո՞ք Դուք իսկապես երբեք ոչինչ չպիտի ընդունեք: Մեկ բաժակ թեյ էլ: Ձեռագործ ջեմպեր: Ուտելիք: Բացատրեք պատճառները՝ ընդունելու որոշ բաներ և մերժելու մյուսները:

## ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատն է՝ պաշտպանել փախստականներին և երկարաժամկետ լուծում գտնել նրանց խնդիրների համար:  
 Ճիշտ է  Սխալ է
2. ՄԱԿ ՓԳՀ-ն նաև ստանձնել է պատասխանատվություն քաղաքացիություն չունեցող անձանց, հայրենադարձների և ներքին տեղահանված անձանց համար:  
 Ճիշտ է  Սխալ է
3. Համաձայն 1951 թ. կոնվենցիայի՝ տնտեսական միգրանտին կարող է տրվել փախստականի կարգավիճակ:  
 Ճիշտ է  Սխալ է
4. Աչքի անցկացրեք էջ 10-12-ում թվարկված սցենարները: Որտեղ կարող եք պատասխան գտնել դրանցում ներկայացված խնդիրներին:  
 Գրի առեք Ձեր մտքերը և քննարկեք դրանք Ձեր վերադասի հետ:  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_



ԱՌԴՈՒՄ

Գլուխ 2

5. Տես էջ 11-ում ներկայացված շարժանկարը («Ինչ կարող է անել որևէ մեկը՝ ինձ վրա ճնշում բանեցնելու համար»): Ինչ կանեիք՝ թույլ չտալու, որ որևէ մեկն ակնկալի Ձեզնից այն, ինչ Դուք չեք կարող տալ նրան: Վախը, իշխանությունը, փողը և ամոթը դիտարկեք որպես որոշ խոչընդոտներ, որ կարող են հանդիպել Ձեր ճանապարհին:

Գրի առեք Ձեր մտքերը և քննարկեք դրանք Ձեր վերադասի հետ:

---

---

6. Տես էջ 13-ում ներկայացված շարժանկարը («Ինչ կարող է անել աշխատավայրում որևէ մեկը՝ ինձ վրա ճնշում բանեցնելու համար»): Ինչ կանեիք Ջոնի փոխարեն: Ինչո՞ւ:

Գրի առեք Ձեր մտքերը և քննարկեք դրանք Ձեր վերադասի հետ:

---

---

7. Համայնքային թարգմանիչ լինելու համար Դուք պետք է փախստական լինեք:

Ճիշտ է  Սխալ է

8. Պրոֆեսիոնալ լինելու համար ես պարզապես պետք է պահպանեմ Վարքագծի կանոնագրքի պայմանները:

Ճիշտ է  Սխալ է

9. Համայնքային թարգմանիչներն օգտակար են, քանի որ նրանք շատ բան գիտեն հարցազրույցի մասնակցի ծագման երկրի, դրա մշակույթի, պատմության և հասարակության մասին:

Գրի առեք Ձեր մտքերը և քննարկեք դրանք Ձեր վերադասի հետ:

---

---

10. Իմաստ չունի թարգմանիչներին խորհուրդ տալ՝ չթարգմանել մոտ հարազատների և/կամ ընկերների համար: Եթե Դուք թարգմանելու լինեիք Ձեր սեփական քրոջ համար, գերազանց աշխատանք կկատարեիք, քանի որ կատարելապես հասկանում եք, թե ինչի միջոցով է նա անցել:

Գրի առեք Ձեր մտքերը և քննարկեք դրանք Ձեր վերադասի հետ:

---

---

11. Համայնքային աշխատողները սոցիալական աշխատողներ են: Նրանց հիմնական խնդիրն է՝ օգնել փոքրամասնություն հանդիսացող խմբերի պատկանող և հետևաբար՝ սոցիալապես թույլ ու խոցելի մարդկանց:

Գրի առեք Ձեր մտքերը և քննարկեք դրանք Ձեր վերադասի հետ:

---

---

12. Ստուգեք էթիկայի տեսանկյունից ճիշտ որոշումներ կայացնելու Ձեր կարողությունը՝ սեփական արժեքների, թարգմանչի Վարքագծի կանոնագրքում նշված կանոնների, տվյալ իրավիճակի, հանգամանքների, սոցիալական և աշխատանքային ճնշման և Ձեզ ու բոլոր ներգրավված անձանց վրա Ձեր որոշման (դրական կամ բացասական) հետևանքների հիման վրա՝ կապված հետևյալ իրադրությունների հետ:

Գրի առեք Ձեր մտքերը հետևյալ իրադրություններից յուրաքանչյուրի վերաբերյալ և քննարկեք դրանք Ձեր վերադասի հետ:

---

---

**Դեպք 1.** Դուք բանավոր թարգմանություն եք կատարում մի փախստական կնոջ համար, ով միաժամանակ Ձեր համայնքի անդամ է: Հարցազրույցի ժամանակ իմանում եք, որ նա ՄԻԱՎ վարակակիր է: Ձեր ավագ եղբայրը սիրում է նրան և ցանկանում է ամուսնանալ նրա հետ:

**Դեպք 2.** Դուք և Ձեր քույրն ապրում եք մի երկրում, որտեղ փախստականներին պատշաճ առողջապահական օգնություն չի առաջարկվում: Ձեր քույրը բավականին հիվանդ է, և կարող է պատշաճ բուժօգնություն ստանալ, եթե վերաբնակեցվի Ավստրալիայում: Եթե նա մնա այնտեղ, որտեղ այժմ է, հնարավոր է, որ նրա առողջական վիճակը ծայրահեղ վատթարանա: Ձեր քույրը պետք է փախստականի կարգավիճակի որոշման նպատակով հարցազրույց անցնի: Դուք գիտեք, որ, ի տարբերություն Ձեզ, նա հայրենի երկիրը լքելու այլ պատճառ, քան ավելի լավ կյանքի փնտրտուքն է, չի ունեցել:

**Դեպք 3.** Վերջերս Դուք շատ եք թարգմանել միևնույն հարցազրույցավարի համար, ով արդյունքում սկսել է վստահել Ձեզ այնքան, որ ավելի ու ավելի հաճախ է հարցնում Ձեր կարծիքը իր կողմից քննվող հայցերից յուրաքանչյուրի վերաբերյալ: Հայցերից մեկը, մասնավորապես, մի փախստականի մասին է, ով պնդում է, որ բանտարկվել և խոշտանգվել է միևնույն ընդդիմադիր խմբի կողմից, որի անդամ լինելու մասին է հարցազրույցների ժամանակ հայտարարում փախստականների մեծամասնությունը: Դուք նույնպես փախստականի կարգավիճակի որոշման Ձեր հարցազրույցի ժամանակ հայտարարել եք, որ այդ խմբի ակտիվ անդամ եք, և այժմ համայնքում մի շարք մարդիկ կարծես թե մտածում են, որ Դուք իրենց պարտք եք ինչ-որ բան:

**Դեպք 4.** Ինչ-որ մեկը Ձեզ մոտ է գալիս 5,000 ԱՄՆ դոլար կանխիկ գումարով և ասում է, որ շատ լավ գիտի, որ աշխատավայրում Ձեզ համար հասանելի են փախստականների թղթապանակները: Դուք գումարի սոսկալի կարիք ունեք: Նա ասում է, որ այդ գումարը Ձերն է. այն ամենը, ինչ Դուք պետք է անեք, մի քանի լուսանկար և անուն փոխելն է:

**Դեպք 5.** Դուք գիտեք, որ չափտի զբաղվեք հաճախորդների շահերի պաշտպանությամբ, սակայն սուր զգացողություն ունեք, որ եթե չմիջամտեք, կոնկրետ տվյալ փախստականը չի ստանա փախստականի կարգավիճակ, քանի որ ոչ ոք չի հասկանում նրան: Դուք գիտեք, որ վերջինս տառապում է հետտրավմատիկ սթրեսային խանգարումից, և սա թույլ չի տալիս, որ նա որևէ զգացմունք ցուցադրի խոշտանգման մասին խոսելիս: Դա նաև մշակութային տարբերությունների խնդիր է, այն առումով, որ Ձեր և նրա մայրենի լեզուներում, երբ մարդը խոսում է շոկային երևույթների մասին, միշտ օգտագործվում են մեղմասացություններ (էվֆեմիզմ), ինչը հարգանքի արտահայտություն է:

Գլուխ 2

ԱՌՆԴՈՒՄ





# Մոդուլ II. Լեզվական հարցեր

Լեզուն այն է, ինչ մենք հաճախ  
արտադրում ենք, երբ բացում ենք մեր բերանը:  
Որքանով լավ եք Դուք ծանոթ  
հաղորդակցության այս ահեղ գործիքին:  
Այս մոդուլում մենք նախ Ձեզ կներեկայացնենք  
բանավոր թարգմանության հիմնադրույթները և  
հնարավորություն կտանք գործնականում  
կիրառել դրանք՝ խնդրելով ստեղծել  
Ձեր սեփական լեզվական ամփոփ նկարագիրը  
և ճանաչել սեփական խոսելաձևը:  
Այնուհետև, համառոտ կքննարկենք լեզուն  
սոցիալական միջավայրում՝ քննության  
առնելով որոշ բարդություններ, որոնց  
Դուք կբախվեք որպես բանավոր թարգմանիչ  
աշխատելու ժամանակ: Մենք նաև  
կառաջարկենք գործիքներ, որոնք  
անհրաժեշտ են բարձրորակ բանավոր  
թարգմանություն իրականացնելու համար:

# Գլուխ I. Իմ լեզվական ամփոփ նկարագիրը

## Այս բաժնում Դուք կիմանաք, թե՝

- ինչ է անում բանավոր թարգմանիչը.
- ինչպես սահմանել Ձեր աշխատանքային լեզուները.
- ինչպես վերլուծել սեփական խոսելաձևը.
- ինչ վարժությունների միջոցով կարելի է ստուգել սեփական լեզվական կարողությունները և որոշել, թե որոնք կլինեն Ձեր աշխատանքային լեզուները.
- ինչ վարժությունների միջոցով կարելի է բարելավել Ձեր ձայնը և արտասանությունը:

## Ա. Թարգմանության մեկնակետը

### 1. Ինչ է անում բանավոր թարգմանիչը



Պետք է գտնվի մեկը, ով խոսում է երկու լեզվով էլ և ով կարող է գործել որպես բանավոր թարգմանիչ՝ համբերատար թարգմանելով այն ամենը, ինչ մարդկանց այս երկու խմբերն ասում են միմյանց: Ո՞վ կարող է անել դա:

Պատասխանելու համար Դուք պետք է նկատի առնեք, թե որքան կարևոր է, որ նրանք միմյանց հասկանան կատարելապես: Եթե խոսքը «պարզապես» շաղակրատելու մասին չէ, ինչպիսի՞ խնդիրներ կարող է հարուցել անփորձ բանավոր թարգմանիչը:

### 2. Ինչ է անում լավ բանավոր թարգմանիչը






Հարց

Բանավոր թարգմանություն կատարելիս չափազանց կարևոր է *հասկանալը*: Ինչ եք կարծում՝ ինչ պետք է անեք, որպեսզի հականաք, թե ինչ է կատարվում:

**3. Իսկ ինչ պետք է անի ՄԱԿ ՓԳՀ-ի բանավոր թարգմանիչը**

Ի լրումն, նա պետք է կատարի այդ աշխատանքը՝ իմանալով, որ թարգմանության ճշգրտությունն ազդելու է գրույցի արդյունքի վրա:



**4. Ինչ տեղի կունենա, եթե բանավոր թարգմանելիս ես մասամբ հորինեմ (հանկարծաստեղծ եմ)**



Եթե Դուք բանավոր թարգմանելիս հանպատրաստից հորինեք, ապա հնարավոր է, որ սխալվեք մի բառի կամ արտահայտության հարցում, որը չեք իմանա, թե ինչպես թարգմանել: Դուք չեք հասկանա իմաստը և ի վերջո կամ կանտեսեք այն, կամ կփորձեք գուշակել իմաստը:

Հիշել

Հանպատրաստից հորինելու դեպքում Դուք չեք թարգմանի փախստականի կամ ՄԱԿ ՓԳՀ պաշտոնյայի ասածը, այլ կասեք այն, ինչ Ձեր սեփական մտքում է: Այն այլ լեզվի փոխադրելով՝ Դուք կունենաք մի լիովին արհեստաձին իրականություն, այնպիսին, որը հիմնված չէ այն

Գլուխ 1


ԱՄՈՒՆՆԵՐ



բանի վրա, ինչ իրականում ասում են տվյալ երկու անձինք, ում համար Դուք թարգմանում եք, այլ այն, ինչ Ձեր կարծիքով նրանք ասում են: Եթե Դուք շարունակեք այդպես վարվել հանդիպման ընթացքում, լուրջ վտանգ կառաջանա, որ փախստականը և ՄԱԿ ՓԳՀ պաշտոնյան կարող են անգիտակցաբար ի վերջո խոսել Ձեզ հետ, այլ ոչ թե միմյանց:

## Բ. Իմ աշխատանքային լեզուները

### 1. Ինչ պետք է անեն բանավոր թարգմանություն կատարելու համաձայնություն տալուց առաջ



#### Հարցաշար

- Ո՞րն է Ձեր սովորած առաջին լեզուն (Ա) \_\_\_\_\_
- Որտե՞ղ եք Դուք սովորել Ա լեզուն \_\_\_\_\_
- Դուք դեռևս խոսո՞ւմ եք Ա լեզվով \_\_\_\_\_
- Արդյո՞ք Դուք կանոնավոր կերպով խոսում եք Ա լեզվով \_\_\_\_\_
- Արդյո՞ք Դուք սահուն եք տիրապետում Ա լեզվին \_\_\_\_\_
- Արդյո՞ք երկար ժամանակ է անցել այն օրից, երբ Դուք վերջին անգամ խոսել եք Ա լեզվով \_\_\_\_\_
- Եթե այո՝ որքա՞ն ժամանակ \_\_\_\_\_
- Դուք խոսո՞ւմ եք Ա լեզվի որևէ բարբառ(ներ)ով \_\_\_\_\_
- Որտե՞ղ են խոսում այդ բարբառ(ներ)ով \_\_\_\_\_
- Արդյո՞ք Ա լեզուն ունի ստանդարտ կառուցվածք \_\_\_\_\_
- Արդյո՞ք Ա լեզուն ունի գրավոր տարբերակ \_\_\_\_\_
- Կարո՞ղ եք, արդյո՞ք, կարդալ այդ լեզվով \_\_\_\_\_
- Արդյո՞ք Դուք տիրապետում եք որևէ այլ լեզվի (Բ, Գ, Դ) \_\_\_\_\_
- Ե՞րբ, որտե՞ղ և ինչպե՞ս եք Դուք սովորել այն/դրանք \_\_\_\_\_
- Արդյո՞ք Բ (Գ, Դ) լեզուն ունի ստանդարտ կառուցվածք \_\_\_\_\_
- Արդյո՞ք Բ (Գ, Դ) լեզուն ունի գրավոր տարբերակ \_\_\_\_\_
- Կարո՞ղ եք, արդյո՞ք, կարդալ այդ լեզվով \_\_\_\_\_
- Ձեր զգացողությամբ՝ Դուք արդյո՞ք ի վիճակի եք ամեն ինչի մասին խոսել Ա և Բ (Գ, Դ) լեզուներով \_\_\_\_\_



# ՄՈԴՈՒԼ II

## ԴԵՊԻ III



Իսպաներենն իմ մայրենի լեզուն է, նաև՝ իմ առաջին լեզուն: Բայց ես այն սովորել եմ փողոցում, այլ ոչ՝ դպրոցում: Համոզված չեմ, որ ես գիտեմ, թե ինչպես են իսպաներեն խոսում իմ հայրենի քաղաքից դուրս:

## ԴԵՊԻ IV



Ես վարժ տիրապետում եմ ռուսերենին: Սա նշանակում է, որ ես ռուսերեն խոսում եմ հեշտությամբ և սահուն և կարող եմ գրուցել ամեն ինչի մասին: Ես խոսում եմ նաև չինարեն, սակայն բառապաշարս աղքատիկ է, և ես մտքերս չեմ կարող հստակորեն արտահայտել, երբ գրույցը մի բանի մասին է, որի վերաբերյալ նախկինում երբեք չեմ խոսել:

## ԴԵՊԻ V



Ես բավականին լավ եմ հասկանում արաբերեն, բայց իրականում չեմ կարող խոսել այդ լեզվով: Պատճառը, որ արաբերենին պասիվ կերպով եմ տիրապետում, այն է, որ ես այն սովորել եմ 10 տարի առաջ և այդ ժամանակից ի վեր չեմ խոսել այդ լեզվով:

## Հիշել


Ոչ մի սխալ բան չի լինի, եթե ասեք, որ Դուք պատկանում եք մի որոշակի խմբի, ասենք՝ էթնիկական, կամ որ ծնվել եք որոշակի տարածաշրջանում, և ընդունել, որ չեք խոսում համապատասխան լեզվով: Սա լիովին ընդունելի է, և Դուք երբեք չպիտի թաքցնեք դա: Հնարավոր է նաև, որ Ձեր ծնողների լեզուն սովորած լինեք Ձեր և նրանց ծագման երկրի սահմաններից դուրս:



#### 4. Կարող է արդյոք ինչ-որ տարօրինակ բան լինել իմ խոսելաձևում

Կարևոր է ևս մեկ հայացք նետել Ձեր լեզվական ամփոփ նկարագրին՝ նախքան այս բաժնի հաջորդ մասերին անցնելը: Ինչ եք կարծում՝ կարող եք արդյոք ավելի շատ տեղեկություններ տրամադրել: Ինչ կարգի տեղեկությունների ավելացումն օգտակար կլիներ: Աչքի անցկացրեք, թե ինչ են ասում Ձեր ընկերներն իրենց կենսափորձը և խոսելաձևը միմյանց շաղկապելու մասին:

ԴԵՊՔ I




ԴԵՊՔ II



Գլուխ 1

ԴԵՊՔ III




II  
ԴՆՍԻՆԱՊ



# ՄՈՂԵՍՏ


Գլուխ 1

## ԴԵՊԲ IV




Ես երիտասարդ եմ ու հաջողակ:  
Ես նաև կին եմ, և իմ հասարակությունում շատ մարդկանց դուր չի գալիս, երբ ես բարձրաձայնում եմ սեփական կարծիքս: Ժամանակի հետ հասունացել եմ՝ դառնալով ավելի զգուշավոր: Եվ երբ խոսում եմ, հակված եմ արտահայտվելու աղոտ կերպով և շատ բան մինչև վերջ չարտահայտել:  
Ընկերներս ասում են, որ ինձ լսելիս իրենք միշտ ստիպված են կարդալ տողերի արանքում:

## ԴԵՊԲ V



Ես շատ հավատացյալ մարդ եմ և մեծ խանդավառությամբ եմ խոսում կրոնական արժեքների մասին: Կուզեի բոլորն ինձ նման մտածելին կյանքի հարցերի շուրջ: Միրում եմ նաև քաղաքականությունը: Ես չեմ կարող վստահել տղամարդկանց, նրանք երբեք չեն լսում այն կանանց, ովքեր ազդեցիկ կարծիք ունեն, ուստի ես կարող եմ միայն ծաղրանքով վերաբերվել և երբեմն կտրուկ լինել նրանց հետ:

## ԴԵՊԲ V



Ես ֆուտբոլի կրքոտ երկրպագու եմ, և տեղական մի թիմերից մեկի մարզիչն եմ: Ժամանակիս մեծ մասն անց եմ կացնում ֆուտբոլի դաշտերում և ակումբներում: Իմ կինն ու երեխաներն ասում են, որ ես գժվացնում եմ իրենց, քանի որ ինչի մասին էլ խոսում եմ, թվում է, թե խոսում եմ ֆուտբոլից:  
Ժարգոն չափազանց շատ եմ օգտագործում, եպիթադրում եմ:

Դեպքերի այս ցանկն ամբողջական չէ, և մենք վստահ ենք, որ Դուք կարող եք այն ավելի մանրամասն դարձնել: **Այժմ կարևորն այն է, որ տեսնեք, թե արդյոք այս իրադրություններից որևէ մեկը հիշեցնում է Ձեր մասին:** Ձեր կարծիքով՝ արդյո՞ք Ձեր խոսելաձևը որևէ առումով առանձնահատուկ է: Երբևէ պատահե՞լ է, որ լսեք այլ մարդկանց և եզրակացնեք, որ նրանց խոսելաձևը որոշ առումով տարօրինակ է: Լավ, մենք Ձեզ կխրախուսեինք հետազոտել այս հարցն առավել գիտականորեն՝ հիմնվելով հաջորդ բաժնում մեր քննարկելիք նյութի վրա:

## Հիշել

Լեզուն հեշտորեն չի սահմանվում: **Որպես բանավոր թարգմանիչ՝** Դուք պետք է հաշվի առնեք, որ կա միևնույն լեզվի նվազագույնը երեք տարատեսակ.

i Ստանդարտ ձև: Որոշ լեզուներ չունեն ստանդարտ ձև: Որոշ լեզուներ ունեն մեկից ավել-



լի ստանդարտ ձև: Սովորաբար, իշխանության որևէ մարմին (քաղաքական և/կամ լեզվական) որոշում է, թե որն է տվյալ լեզվի ստանդարտ ձևը:

- ii Խոսակցական ձևեր: Սրանք ներառում են տարածաշրջանային, քաղաքային, գյուղական, խմբային կամ տարածքային խոսվածքները:
- iii Այն եղանակը, որով տվյալ լեզվով խոսողներն օգտագործում են տվյալ լեզուն այն համայնքներում կամ խմբերում, որի մասն են կազմում իրենք, երբեմն՝ կապված այն վայր(եր)ի հետ, որտեղ նրանք ապրել են, և հաճախ ըստ իրենց կենսափորձի:

## Հիշե՛լ

Լեզուն որևէ համայնքի, ժողովրդի, պետության կողմից օգտագործվող բառերի մի համակարգ է: Բարբառը պարզապես որևէ լեզվի տարատեսակն է (տարբեր բառեր, քերականություն, արտասանություն):

## Հարցեր

Ինչ եզրակացության հանգեցիք՝ վերլուծելով Ձեր խոսելաձևը՝ կապված էջ 25-ում ներկայացված դեպքերի հետ:

- Ուշադիր աչքի անցկացրեք Ձեր լրացրած հարցաշարը: Այն պարունակում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են. **որն է Ձեր սովորած առաջին լեզուն:** Ձեր կարծիքով՝ ճիշտ եք պատասխանել: Ուշադիր կարդացեք *լեզվի* և *բարբառի* (հարցաշարում կոչվում է տարատեսակ) սահմանումը՝ նախքան պատասխանելը, և կրկնակի ստուգեք, թե ինչ եք գրել Ձեր հարցաշարում:

## 5. Կարո՞ղ եմ արդյոք ստուգել իմ խոսելաձևը

Գլուխ 1

Թեստը, որը պատրաստվում էք անցնել, կապված է Ձեր կողմից նախագծված լեզվական ամփոփ նկարագրի հետ: Դուք և Ձեր վերադասը կարող եք աշխատել միասին՝ գնահատելու Ձեր լեզվական կարողությունները: Դա Ձեզ երկուսիդ կընձեռի հնարավորություն՝ ստուգելու, թե ինչպես եք տիրապետում Ձեր խոսակցական լեզուներից յուրաքանչյուրին:

Դա նաև լուրջ հնարավորություն կլինի՝ իրազեկվելու այն երևույթի մասին, որն ընդունված է կոչել լեզվական թուլության ոլորտներ: Օրինակ՝ Ձեր կարծիքով՝ արդյո՞ք Դուք վարժ տիրապետում էիք Գ լեզվին և թեստն անցնելուց հետո գիտակցեցիք, որ այն ամենը, ինչ կարող եք անել այդ լեզվով, որևէ մեկի հետ բազային մակարդակի գրույց վարելն է: Երբ գրույցը փոքրիշատե սկսում է բարդանալ, Դուք շփոթվում եք: Այս պահի դրությամբ Դուք չեք կարող Գ լեզուն ընդգրկել Ձեր աշխատանքային լեզուների ցանկում, սակայն գուցե կարողանաք ապագայում, եթե սովորեք և վարժ տիրապետեք այն:

## 6. Իմ խոսելաձևի ստուգումը թեստի միջոցով

- Վերցրեք ձայնագրիչ և միկրոֆոնի մեջ 10-15 րոպե **Ձեր առաջին լեզվով** խոսեք հետևյալ թեմաների շուրջ.
  - Ձեր շրջակայքը (դա կարող է լինել այն վայրը, որտեղ գտնվում եք հենց այդ պահին).
  - Ձեր ճանաչած որևէ մեկը, նրա արտաքին տեսքը, բնավորությունը և այլն.
  - Ձեր երկրի քաղաքական համակարգը, ղեկավար անձինք, ղեկավարման նրանց եղանակը և այլն.
  - Ձեր կրոնը, դրա հաստատած համոզմունքները, ծեսերը, կանոնները և այլն:
- Մեկ անգամ ևս լսեք ձայնագրությունը՝ առանց նշումներ անելու, **Ձեր երկրորդ լեզվով** համառոտ պատմեք Ձեր լսածի, այդ թվում՝ դրա գլխավոր կետերի մասին:

ԱՄՈՒՆԵՐ



- ⊗ Երբ ավարտեք, մեկ անգամ ևս լսեք ձայնագրությունը և նախադասություն առ նախադասություն թարգմանեք **դեպի Ձեր երկրորդ լեզու**՝ օգտագործելով «PLAY» և «PAUSE» կոճակները: Նշում կատարեք յուրաքանչյուր դժվարության/խոչընդոտի վերաբերյալ, որին կբախվեք, մասնավորապես՝ կապված հիշողության, բառապաշարի, արագախոսության հետ, և այլն: Կազմեք այն բառերի ցանկը, որոնք չկարողացաք թարգմանել և նորթագրեք այն ամենը, ինչի մասին չկարողացաք խոսել սահուն կերպով:
- ⊗ Վարժությունը կրկնեք՝ ձայնագրվելով **Ձեր երկրորդ լեզվով**: Նախ՝ **Ձեր առաջին լեզվով** համառոտ ներկայացրեք այն, ինչ լսեցիք, այդ թվում՝ դրա գլխավոր կետերը, իսկ այնուհետև ձայնագրության բովանդակությունը թարգմանեք՝ երկուական նախադասություններով: Կրկին՝ նշումներ կատարեք որևէ դժվարության/ խոչընդոտի հանդիպելիս:
- ⊗ Որպես մեկ այլ տարբերակ՝ փորձեք ձայնագրել երեկոյան լուրերը կամ Ձեր հաճախած որևէ դասախոսություն: Հիշեք, որ այս փուլում Դուք պետք է հենվեք միայն սեփական հիշողության վրա և խուսափեք գրառումներ անելուց: Լավ միտք է որևէ մեկին խնդրելը, որ օգնի Ձեզ և կարծիք արտահայտի:

Արդյո՞ք հայտնաբերեցիք լեզվական թուլության որևէ ոլորտ: Ինչը պետք է կատարելագործեք. բառապաշարը, քերականությունը, հիշողությունը, թեմաների իմացությունը: Արդյո՞ք կար ինչ-որ բան, որ Ձեզ խանգարում էր թեմաներից որևէ մեկով խոսելիս: Ձեր զգացողությամբ՝ այս թեստն անցնելուց հետո արդյո՞ք կարիք ունեք վերանայելու Ձեր լեզվական ամփոփ նկարագրի քարտը: Ինչո՞ւ:

## Հիշել

Գոյություն ունեն Ձեր աշխատանքային լեզվին տիրապետման մակարդակը բարելավելու բազմաթիվ եղանակներ, որոնցից կարող եք օգտվել. Շատ կարդացեք թերթեր, հոդվածներ և գրքեր հարկադիր միգրացիայի խնդիրների վերաբերյալ և կանոնավոր կերպով դիտեք կամ ունկնդրեք լրատվական թողարկումներ: Եթե դա հնարավոր չէ, որևէ մեկին խնդրեք օգնել Ձեզ: Եթե եզրակացնում եք, որ լեզուներից մեկին վարժ տիրապետում եք միայն որոշակի թեմաների շուրջ, և շատ քիչ բան կա, որ կարող եք անել՝ բարելավման ուղղությամբ, թարմացրեք Ձեր քարտը և ներկայացրեք այն Ձեր վերադասին:

## 7. Ուրիշ ինչ պետք է անեմ՝ բանավոր թարգմանիչ լինելու համար


Ի լրումն վերոնշյալի՝ հետևեք մեր պրոֆեսիոնալ թարգմանիչ խորհուրդներին և կատարեք նրա կողմից առաջարկվող վարժությունները.



Բանավոր թարգմանիչ համար էական նշանակություն ունի հասկացվելը: Եթե տեսնում եք, որ Ձեզ հաճախ են խնդրում կրկնել միտքը, հատկապես՝ երբ խոսում եք Ձեր ոչ մայրենի լեզվով, ուրեմն հնարավոր է, որ Ձեր խոսքը բարելավման կարիք ունի:



- Մարզեք ձայնավորներն ու բաղաձայններ արտաբերելու Ձեր կարողությունը: Եթե որևէ կոնկրետ ձայնավոր, բաղաձայն կամ «ձայնավոր + բաղաձայն» համադրություն Ձեզ համար դժվար է հստակ արտասանել, պարզեք, թե Ձեր բերանի և կոկորդի որ մասը պետք է օգտագործեք:
- Ուսումնասիրեք սեփական արտասանությունը: Հատկապես ուշադրություն դարձրեք, թե բառի որ մասին է ընկնում շեշտադրումը: Եթե որևէ կասկած ունեք, ապա օգնության համար դիմեք որևէ մեկի, ում համար այդ լեզուն մայրենի է, կամ՝ ճշտեք բառարանի միջոցով:
- Սովորեք արտահայտություններ կազմել և շեշտադրել: Ճշգրտեք Ձեր խոսքն ըստ բառախմբերի, որոնք բնականորեն «հոսում» են, և Ձեր ձայնը ելևէջեք՝ միապաղաղությունից խուսափելու համար: Այսպիսով, Ձեր բանավոր թարգմանությունն ավելի հեշտ և ավելի հաճելի կլինի՝ լսելու համար:
- Կատարելագործեք սեփական ձայնը: Ինչպես արդեն տեսել ենք, Ձեր ձայնի մեխանիկան հասկանալը կարող է օգնել՝ աշխատելու արտասանության վրա: Նույնը կիրառելի է նաև Ձեր ձայնի որակի դեպքում: Շատ կարևոր է նաև սովորել դադար տալ և ճիշտ շնչել, քանի որ Ձեր ձայնի որակը կարևոր է բոլոր ունկնդիրների համար: Երգելն օգտակար վարժություն է:



Գլուխ 1

ԱՌՆԴՆԱՆ



## Գլուխ II. Լեզուն սոցիալական համատեքստում

Այս բաժնում Դուք կսովորեք հետևյալը.

- Ինչ կերպ է իմաստը հարաբերվում բառերի և արտահայտությունների հետ:
- Ինչպե՞ս թարգմանության ընթացքում մնալ լեզվաբանորեն չեզոք:
- Ինչպե՞ս կարող է թարգմանիչը զգայականորեն արձագանքել իմաստին:
- Ինչպե՞ս հաղթահարել բանավոր թարգմանության տարածված լեզվական խոչընդոտները:
- Ո՞րն է տարբերությունը բառացի և իդիոմատիկ (ծևաբանական) թարգմանության միջև:
- Բանավոր թարգմանության առանցքում այն է, թե ինչպես ստեղծել անձնական բառարան:

### Ա. Իմաստի ըմբռնումը

#### 1. Քանի՞ իմաստ կարող է ունենալ բառը

Նախորդ բաժնում ցույց տալուց հետո, թե ինչ կապ կա լեզվի, մտածողության և կենսափորձի միջև, այժմ կարող ենք քննության առնել իմաստի տարբեր մակարդակները, որ արտահայտվում են մարդու խոսելաձևում: Ուշադրություն դարձրեք, թե ինչ է ասում հարցազրույցի մասնակիցն իր հարցազրույցի սկզբում, վերլուծեք այն և փորձեք թարգմանել: Լավագույն տարբերակը կլինի սկսելուց առաջ գտնել անգլերենի որևէ բառարան:



Բանտից դուրս գալուց  
հետո ես գնացի տեսնելու քրոջս:  
Ես մեկնեցի մեքենայով:  
Ճամփորդությունը վատ անցավ:

#### Հարցեր

- Ինչ տեսակի վայրից է նա դուրս եկել: Նկարագրեք այն մանրամասնորեն:
- Ով է «քույրը»:
- Տրանսպորտի ինչ տեսակից է նա օգտվել:

Եթե Դուք բառարանում աչքի անցկացնեք հարցազրույց անցնողի օգտագործած բառերը, կտեսնեք, որ դրանցից գրեթե յուրաքանչյուրը կամ տարբեր իմաստ ունի, կամ կարող է փոխարինվել մեկ այլ բառով, որի իմաստը գրեթե նույնն է: Սա կարևոր է իմանալ՝ ինչպես թարգմանելիս, այնպես էլ լսելիս, քանի որ **մենք թարգմանում ենք այն, ինչ հասկանում ենք**: Եթե մեր հասկացածը տարբեր է ասվածի նշանակությունից, ուրեմն մեր թարգմանությունը սխալ կլինի: Ուշադրություն դարձրեք միևնույն նախադասության մեկ ուրիշ հնարավոր թարգմանության:

Ազատագրկման վայրից փախչելուց հետո ես ավտոբուսով գնացի տեսնելու ընկերներիցս մեկին, ով միանձնուհի է: Ուղևորությունը զգվելի էր:



Ինչպես նշեցինք, սա հնարավոր *թարգմանություն* է: Սա այն է, ինչ Դուք անում եք որպես թարգմանիչ. Դուք ոչ միայն *թարգմանում* եք, այլև *մեկնաբանում*, այն է՝ որոշում եք, թե ինչ է կամեցել հաղորդել խոսողն իր բառերով: Դուք կարող եք այս որոշումները կայացնել՝ հիմնվելով Ձեր գիտելիքի և փորձի վրա: Օրինակ՝ Ձեր մտքում կա բանտի միայն մեկ տեսակ՝ *ուղղիչ տուն*: Դուք այդ եզրակացությանն եք եկել՝ **գուշակելով, որ այնպեղից որպեղից եկել է հարցազրույցի մասնակիցը**, նա պետք է ճամփորդած լիներ *ավտոբուսով*, քանի որ որևէ այլ փոխադրամիջոց այդ վայրերում գտնել անհնար է: Նա նաև քրիստոնյայի տեսք ու խոսք ունի, և հայտնի է, որ այդ տարածքում միանձնուհիներն օգնում են տեղահանված անձանց: Վերջապես՝ տեղական ճանապարհային ցանցի վերաբերյալ Ձեր գիտելիքների համաձայն՝ Դուք տրամադրված եք նրա *վաղ* ճամփորդությունը դարձնել *զգվելի* ճամփորդության:

Գլուխ 2

Հիշել

Ինչպես ակնարկված էր նախորդ բաժնում, մենք պետք է անընդհատ մեզ հիշեցնենք, որ իմաստը կարող է փոխվել, եթե այն կապված է իրականությունը տեսնելու միայն մեր դիտանկյան հետ: Եկեք համեմատենք վերը բերված թարգմանչի տարբերակն ավելի չեզոք մի տարբերակի հետ.



Լքելով այն վայրը, որտեղ ազատագրված էի, ես գնացի տեսնելու ինչ-որ մեկին (ճշգրտման ենթակա է, օգտագործվել է «քույր» բառը): Ես փոխադրամիջոց վերցրեցի (ենթակա է ճշգրտման, օգտագործված է «ավտոբուսով» բառը): Ճամփորդությունը վատ անցավ:

ԱՄՈՒԿԱՆ

Պրոֆեսիոնալ թարգմանիչը ձգտում է լինել չեզոք: Նա չի միջամտում իր լսածին: Արդյո՞ք բանտը սոսկ մի վայր է, որտեղ քրեական հանցագործները օրինականորեն փակի տակ են վերցվում: Աչքի անցկացրեք անգլերենի Ձեր բառարանը և թվարկեք հարցազրույցի մասնակցի և առաջին թարգմանիչի օգտագործած որոշ բառերի բոլոր հնարավոր իմաստները.

- բանտ.** ա) \_\_\_\_\_, բ) \_\_\_\_\_, գ) \_\_\_\_\_,  
դ) (փոխաբերական) *Նա ասում էր ուսումը: Դա նրա համար բանտ էր:*
- քույր.** ա) \_\_\_\_\_, բ) իգական սեռի բուժքույր, գ) \_\_\_\_\_,  
դ) \_\_\_\_\_:
- ավտոմեքենա.** ա) ավտոմոբիլ, բ) \_\_\_\_\_, գ) \_\_\_\_\_:
- դուրս գալ. : փախչել.** \_\_\_\_\_:
- վատ.** \_\_\_\_\_ : **զգվելի.** \_\_\_\_\_:


### Հիշել

Չեզոք թարգմանությունը լավագույն ուղին է՝ հաղթահարելու այն փաստը, որ բոլոր լեզուներում շատ բառեր ունեն իմաստի նվազագույնը երեք մակարդակ: Դրանք տարբերվում են՝ կախված իրականության վերաբերյալ մարդու մտածելակերպից ու ընկալումից, և այն բանից, թե ինչպես են այդ մտածելակերպը և ընկալումն արտահայտվում լեզվի միջոցով: Իմաստի երեք մակարդակները հետևյալն են.

- Հիմնական իմաստ, որը կարող ենք ստանալ՝ բառը հասցնելով իր պարզ ձևին, ինչպես հետևյալ դեպքում է՝ *բանտ* --> ազատագրված վայր.
- Այն իմաստը, որը բառը հարուցում է լսողի մտքում, ինչը կարող է տարբեր լինել նախնական իմաստից: Սա հաճախ տեղի է ունենում միևնույն լեզվի բարբառների միջև:
- Այն իմաստը, որ բառն արտահայտում է: «Վատ»-ը և «սարսափելի»-ն, օրինակ, միևնույն իմաստն են արտահայտում՝ պայմանով, որ «սարսափելի»-ն ցույց է տալիս, որ խոսողի համար իսկապես ատելի էր այդ ճամփորդությունը:

## 2. Ո՞րն է իմաստի ամենավրանգավոր մակարդակը

Մեկ այլ կողմից ուսումնասիրելու համար, թե որքան կարևոր դեր ունի իմաստը բանավոր թարգմանելու ընթացքում՝ մենք քննության կառնենք Ձեր հնարավոր արձագանքը Ձեր լսած բառերին և հասկացություններին և այդօրինակ արձագանքի ազդեցությունը Ձեր թարգմանության որակի վրա: Ուշադրություն դարձրեք թարգմանիչի վարքագծին.



Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ թարգմանիչն այդ ձևով արձագանքեց: Դուք տեսնո՞ւմ եք, թե ինչպես է նա չհավատարիվ թափահարում գլուխը՝ դեմքին զգվանքի արտահայտություն: Թարգմանիչը տեսնում է դա, սակայն չի հասկանում, թե ինչու է նա այդպես վարվում: Հարցազրույցի մասնակիցը շարունակում է խոսել.

...քանի որ նրանք հրաժարվել են ենթարկվել իրենց կառավարության հանցավոր հրամաններին՝ բանտարկելու և խոշտանգելու մարդկանց, ովքեր բարձրաձայնել են իրենց կարծիքը: Այս պատճառով նրանք իրենք են բանտարկվել, խոշտանգվել և երբեմն սպանվել: Մենք նրանց անվանում ենք «մեր խիզախ հրեշտակներ»:



Այս օրինակում թարգմանիչը նաև փախստական է, և նրա թարգմանությունը որպես քաղաքական ակտիվիստ բանտում անցկացրած բազմաթիվ տարիների ընթացքում իր երկրի կառավարությանն ընդդիմություն լինելու արդյունքն է: Նա նաև պացիֆիստ է և հրաժարվել է զինվորագրվել բանակում: Այս պատճառով նա ձերբակալվել է, բանտարկվել և վերջիվերջո խոշտանգումների ենթարկվել: Այն ժամանակից, ինչ նրան հաջողվել է փախչել իր երկրից, նա անհոգնել դատապարտելիս է եղել դրա ռազմական խունտայի կողմից իրականացվող վայրագությունները:

## Հիշել

Թույլ թարգմանության ամենատարածված պատճառներից մեկը թարգմանչի չզիտակցված հակումն է՝ թույլ տալու, որ իր անձնական զգացմունքները գերիշխեն շարադրանքի, իսկ երբեմն նաև շարադրողի նկատմամբ: Երբ սա տեղի է ունենում, թարգմանիչը կարող է ունակ չլինել՝ վերլուծելու խոսողի բառերի իմաստը, չեզոք կերպով թարգմանելու դրանք և մատնանշելու այն բառերը, որոնք կարող են խնդրահարույց լինել:

Արդյունքում՝ իմաստի մի նոր մակարդակ է ճանապարհի հարթում՝ խոսողի բառերի՝ թարգմանչի կողմից մեկնաբանման միջոցով: Թարգմանությունը կարող է արտացոլել թարգմանչի սեփական տեսանկյունը, զգացմունքները և դատողությունները շարադրանքի նկատմամբ: Սա կոչվում է *զգայական արձագանք իմաստին*:

## Հարցեր

- Իմաստի դր մակարդակի հետ Դուք կշաղկապեիք թարգմանչի զգայական արձագանքը:
- Ձեր կարծիքով, ինչ տեղի ունեցավ թարգմանչի հետ, մինչ նա լսում էր հարցազրույցի մասնակցի խոսքը:
- Ձեր կարծիքով, ինչը կկանխեր նրա կողմից զգայական արձագանքը և հետևաբար՝ սխալ թարգմանությունը:

### 3. Արդյո՞ք բոլոր լեզուները իմաստն արտահայտում են միևնույն ձևով

Մինչ այժմ մենք համառոտակի քննության ենք ատել, թե ինչպես կարող է լեզուն լինել մշակույթի արտահայտություն, այն է՝ որևէ մեկի աշխարհընկալումը՝ որպես արդյունք իր դաստիարակության, անձնական փորձի և անցյալ ու ներկա սոցիալական միջավայրի: Այսօրինակ ընկալումը կարող է փոխակերպվել բառերի, այսինքն՝ իմաստների, և Ձեր խնդիրն է՝ ճշտությամբ թարգմանել դրանք:

Գլուխ 2


ԱՄՈՒՆՆՈՒՄ



Այժմ հասանք վճռորոշ հարցին. ինչպե՞ս ենք մենք կոնկրետ արտահայտում այսօրինակ ընկալումը: Այլ խոսքերով՝ որո՞նք են մեր խոսակցական լեզվի/լեզուների հատկանիշները, որոնք ցույց են տալիս, թե ինչպես ենք մենք տեսնում և կազմակերպում աշխարհը:

### Տարածված համոզմունքներ

- Բոլոր լեզուները նույն կերպ են դրսևորվում:
- Այն, ինչ գործում է մեկ լեզվի դեպքում, գործում է բոլոր լեզուների դեպքում:
- Թարգմանության իմաստը սուկ բառերի փոխարինումն է:



### Հարցեր

Գլուխ 2

- Ո՞րն է երկու նախադասությունների միջև եղած տարբերությունը:
- Ձեր կարծիքով՝ արդյո՞ք թարգմանիչը տեղյակ է նման տարբերության մասին:
- Ի՞նչը կարող էր պատճառ դառնալ, որ նա փոխեր խոսողի միտքը:

Լեզուները տարբերությունները ներկայացնում են այն եղանակի միջոցով, որով դրանք համադրում և դասավորում են բառերը՝ դարձնելով դրանք նախադասություններ, որպեսզի դրանք արտահայտեն որոշակի իմաստներ: Բացառությամբ եթե բերված օրինակում թարգմանիչն իսկապես նկատի է ունեցել այն, ինչ ասել է թարգմանության ժամանակ, մյուս դեպքերում հնարավոր է, որ նա կամ բառերի սխալ համադրություն է կատարել կամ էլ դա այն ձևն է, որով նա իր բարբառով արտահայտում է «**նա դա արել է ինձ հետ**» միտքը:

## 4. Որո՞նք են հիմնական տարբերությունները

Եթե վերոնշյալ օրինակում թարգմանիչը օգտագործած լիներ ճիշտ նախդիր՝ հարցազրույցի մասնակցի բառերն անգլերեն թարգմանելու համար, ապա նա կունենար համարժեք մտքեր երկու լեզուներում:

### Հիշել

Համարժեքությունը նշանակում է երկու լեզուների միջև իմաստային համապատասխանություն: Պատահում է, որ բավականին բարդ է դրան հասնելը: Սա սովորաբար տեղի է ունենում, երբ Դուք ի վիճակի չեք գտնել հավասարաթեք բառ կամ արտահայտություն թիրախային լեզվում: Հնարավոր է, որ հավասարաթեք բառ կամ արտահայտություն գոյություն չունի: Սակայն նույնիսկ այդ դեպքում ակնկալվում է, որ Դուք պետք է նախնական իմաստը թարգմանեք դեպի թիրախային լեզու:

Հաճախ համարժեք բառ չէք կարող գտնել, քանի որ Ձեր կողմից թարգմանվող բառը *առնչվում է մշակույթին*: Սա նշանակում է, որ **այն նկարագրում է մի այնպիսի օբյեկտ, կրոնական ավանդույթ, վարքագիծ, սննդատեսակ և այլն, որն առկա է բացառապես կամ հիմնականում այն տարածքում, որտեղ խոսվում է այն լեզուն, որով Դուք աշխատում եք**: Դուք գիտեք, թե դա ինչ է, սակայն չկա բառ, որը կարող եք օգտագործել՝ թարգմանելու համար: Սա պատահում է, որովհետև կոնկրետ այդ տարածքում մարդիկ կարիք ունեն այդ առարկային կամ հասկացությանն անուն տալ, քանի որ նրանք պետք է դրա մասին խոսեն ամեն օր: Հասկացությունը կարող է հայտնի լինել այլ տարածքներում ևս, սակայն քանի որ այն էական դեր չի կատարում մարդկանց կյանքում, տվյալ լեզվում դրա համար համապատասխան բառ գոյություն չունի:

Այլ դեպքերում համարժեք բառ գոյություն ունի, և գուցե Դուք գիտեք այն, սակայն դրա կիրառումը կարող է չափազանց վտանգավոր լինել: Սա սովորաբար տեղի է ունենում այն ժամանակ, երբ Դուք բախվում եք իդիոմների և իդիոմատիկ արտահայտությունների: Աչքի անցկացրեք հետևյալ խոսակցությունը.



Գլուխ 2

**Հարցեր**

- Ինչպե՞ս կթարգմանե՞իք վերը բերված երկխոսությունը Ձեր աշխատանքային լեզուներից որևէ մեկով:
- Ձեր կարծիքով՝ ի՞նչ տեղի կունենար, եթե Դուք թարգմանե՞իք այս խոսքերը բառացի:
- Մտաբերե՞ք մշակույթի հետ կապված որևէ բառ, որը Դուք գիտեք, և թարգմանե՞ք այն:

**Հիշել**

Մենք մշտապես օգտագործում ենք իդիոմներ, և շատ ավելի շատ, քան Դուք կարող եք մտածել: Իդիոմները, հատկապես իդիոմատիկ արտահայտությունները, լավագույն օրինակն են, թե ինչպես է լեզուն արտահայտում իրականության կոնկրետ ընկալում, քանի որ դրանք հաճախ կապված են այն բանի հետ, թե ինչպես են մարդիկ ընկալում և իմաստավորում գույները (օրինակ՝ *կարմիրը*) կամ օգտագործում կոնկրետ տարածքի ավանդույթները (օրինակ՝ *գլխարկը*):

Լեզուները կանոնավոր կերպով որոշակի բառեր համադրում են այլ բառերի հետ, և այս համադրությունները հաճախ դժվարընկալելի են: Այսօրինակ համադրությունները մենք կոչում ենք դարձվածքներ: Օրինակ.

ԱՄՈՒՆԵՏՈՒ





**Հարցեր**

- Ինչ է նշանակում «չոր ձայն»: Արդյո՞ք Դուք համանման դարձվածք ունեք Ձեր աշխատանքային լեզուներից որևէ մեկում: Ինչպե՞ս եք ասում «չոր ձայն» Ձեր խոսակցական լեզուներում:


**Բ. Իմաստների թարգմանությունը**

**1. Ո՞րն է իմաստների թարգմանության ամենից օգտակար եղանակը**

Երբ իմաստի տեսանկյունից վերլուծում եք այն լեզուները, որոնցով խոսում եք, ապա պարտավոր եք վարպետանալ շրջասության (պերիֆրազ) հարցում, քանի որ այս ռազմավարությունը Ձեզ հնարավորություն կտա դեպքերի մեծ մասում ճիշտ թարգմանություն կատարել:

**Հիշել**

*Շրջասությունը* կարելի է սահմանել որպես ասված կամ գրված ինչ-որ բան վերաարտահայտելու կարողություն՝ այնպիսի բառերով, որոնք և ավելի հեշտ ընկալելի են, և չեն փոխում նախնական իմաստը:



Երբ արդեն վարժված լինեք շրջասության, բարդ բառեր չպարունակող պարզ նախադասություններ կազմելու հարցերում, ապա կարող եք սկսել՝ անցում կատարել ավելի բարդ նախադասությունների, որոնք պարունակում են բազմաթիվ իդիոմներ և մշակույթին առնչվող բառեր ու արտահայտություններ: Այս գործընթացը որոշ ժամանակ կխլի, ուստի Դուք պետք է համբերատար լինեք: Հիշեք՝ բանավոր թարգմանություն կատարելիս միշտ ընթացեք քայլ առ քայլ:

**Հարցեր**

- Ձեր կարծիքով՝ ինչ իրավիճակներում անհրաժեշտ կլինի շրջասել «մոլիցիա» բառը:
- Ձեր կարծիքով՝ հարցազրույցի դժվարությամբ փոխում պետք կլինի, որ Դուք ավելի շատ կիրառեք շրջասություն:
- Կարո՞ղ եք վերաձևակերպել էջ 36-ի իդիոմային արտահայտություններն ու դարձվածքները:



- Ինչ կասեք *մշակույթին առնչվող* այն բառի մասին, որը հենց նոր անցավ Ձեր մտքով և փորձեցիք թարգմանել: Կարող եք շրջատել այն:
- Ձեր կարծիքով՝ ինչու ենք մենք վստահ, որ շրջասությունն իմաստների թարգմանության ամենից օգտակար տեխնիկան է:

## 2. Ինչ անել, եթե ինձ խնդրում են ամեն ինչ թարգմանել բառացի

Եթե ՄԱԿ ՓԳՀ-ի՝ հանդիպման համար պատասխանատու անձը պահանջում է, որ կիրառեք այս եղանակը, Դուք կարող եք առաջարկել, որ այն պետք է օգտագործվի միայն իրավական ընթացակարգերի պարզեցված բացատրությունների և/կամ պարզ փաստահեն հայտարարությունների փոխանցման համար: Եթե սա ընդունելի չէ, Դուք պետք է մատնանշեք, որ իդիոմային լեզուն կարող է սխալ ընկալվել կամ չընկալվել, եթե խոսողին պարբերաբար չխնդրվի ասել, թե կոնկրետ ինչ նկատի ունի ինքը, կամ եթե թարգմանիչը չի նշում, որ խոսողն օգտագործում է իդիոմներ: Այսինքն, իր արտաբերած յուրաքանչյուր նախադասության համար խոսողին խնդրվում է հաստատել, թե ինքն ինչ նկատի ունի: Օրինակ.



Գլուխ 2

### Հարցեր

- Վերոնշյալ իրադրությունում ինչն է սխալ ընթացել:
- Ինչպե՞ս կվարվեիք, եթե Դուք լինեիք թարգմանիչը:
- Ո՞րն է տարբերությունը բառացի և իդիոմային թարգմանությունների միջև:

### Հիշել

*Բառացի* թարգմանությունը պետք է կիրառվի զգուշությամբ/խնամքով: Թեպետ այն սովորաբար նախընտրելի է իրավական խոսքաշարում, մասնավորապես՝ դատարանի դահլիճում կամ փախստականի կարգավիճակի որոշման հարցազրույցի ընթացքում, այն կարող է լինել չափազանց մոլորեցնող, հատկապես՝ եթե երկու անձինք, ում համար Դուք թարգմանում եք, ոչինչ չգիտեն միմյանց լեզուների մասին և օգտագործում են բազմաթիվ իդիոմներ, ինչպես սովորաբար մարդիկ վարվում են խոսելիս: Եթե Դուք պետք է թարգմանեիք «*he took me for*

ԱՌՄԻՆԱՆ



a ride» («նա ինձ տարավ ման տալու») նախադասությունը՝ օգտագործելով ճիշտ նույն բառերը, որոնք օգտագործվել են բնօրինակում, Դուք ամենայն հավանականությամբ խառնաշփոթ առաջ կբերեիք:

### 3. Արդյո՞ք բառացի հետ-թարգմանությունը որևէ չափով օգտակար է

Դուք պետք է ուշադրության առնեք, որ երբեք լավ միտք չէ կիրառել մի եղանակ, որը հայտնի է որպես բառացի հետ-թարգմանություն, որի դեպքում հարցազրուցավարը հետ է կարդում Ձեր թարգմանությունն իր նշումներից, խնդրում Ձեզ հետ թարգմանել այն բառացի ձևով՝ հարցազրույցի մասնակցի լեզվով, այնուհետև խնդրում է հարցազրույցի մասնակից անձին՝ հաստատել դրա իմաստը: Սա չի երաշխավորում թարգմանության ճշգրտությունը, քանի որ իդիոմային իմաստը հազիվ թե հնարավոր լինի երևան հանել: Տե՛ս հետևյալ օրինակները:

Բառացի թարգմանություն	Բառացի հետ-թարգմանություն
i. (հարցազրուցավար) Եվ ի՞նչ արեց նա:	iv. (հարցազրուցավար) Նա Ձեզ տարավ ման տալու:
ii. (հարցազրույցի մասնակից) Նա ինձ տարավ ման տալու:	v. (թարգմանիչ) Նա Ձեզ տարավ ման տալու:
iii. (թարգմանիչ) Նա ինձ տարավ ման տալու:	vi. (հարցազրույցի մասնակից) Այո, դա ճիշտ է:

#### Հիշե՛լ

Այս օրինակները չափսի Ձեզ դրդեն հավատալու, որ իդիոմային թարգմանությունը փախստականների հետ հարցազրույցի համատեքստում կատարյալ լուծում է: Իրականում՝ մինչև Դուք հատուկ բանավոր և գրավոր թարգմանության վերապատրաստում չանցնեք, բավականին վարժ (այն է՝ մայրենի լեզվի մակարդակով) չտիրապետեք երկու լեզվի և աշխատած չլինեք ոլորտում գոնե մեկ-երկու տարի, ցանկալի չէ իդիոմային ձևով թարգմանել այն ամենը, ինչ Դուք լսում եք փախստականի հետ հարցազրույցի ընթացքում:

Իդիոմային թարգմանությունը ոչ միայն պահանջում է Ձեր երկու աշխատանքային լեզուներին գերազանց տիրապետում, այլ նաև պահանջում է լեզուներից յուրաքանչյուրով արտահայտվող մշակութային իրողությունների զգալի իմացություն: Այլ կերպ ասած՝ այն պահանջում է երկու լեզուներով մտածելու և ցանկացած պահի մի լեզվից մյուսն ու հետ անցումներ կատարելու կարողություն: Եթե Դուք չեք կարող անել սա, ապա պետք է կիրառեք բառացի և իդիոմային թարգմանության հավասարակշռված համադրություն՝ դրանցից որևէ մեկի կշիռը փոփոխելով ըստ Ձեր լեզվաբանական կարողության:

Որպեսզի որոշեք, թե ինչպես պահպանել այսօրինակ հավասարակշռություն, պետք է ընթանաք քայլ առ քայլ: Նախ՝ անտեսեք ինչպես բառացի, այնպես էլ իդիոմային թարգմանությունը հոգուտ վերաձևակերպման: Երբ արդեն հմտորեն տիրապետեք այս եղանակին, կարող եք աստիճանաբար անցնել իդիոմային թարգմանության, սակայն միայն այն դեպքում, երբ Ձեզ համար բացարձակապես հստակ կլինի, որ ձեռք եք բերել այդպես վարվելու փորձառություն և գիտելիք:

## Գ. Բառարանաստեղծում

### 1. Ինչ է բառարանը

Հիմա ժամանակն է գնել նոթատետր և այն կոչել Բառարան: Դա լինելու է Ձեր անձնական բառարանը: Վերջիվերջո, Դուք ստիպված եք լինելու գնել երկրորդը և երրորդը, երբ գիտակցեք, որ առաջինը սպառվում է:

### 2. Ինչպես օգտվել բառարանից

Ձեր բառարանը հիմնված կլինի երեք հիմնական սկզբունքների վրա.

- Ցանկում չպիտի ներառվի որևէ բառ, որն առկա է որևէ բառարանում, բացի այն դեպքերից, եթե Ձեր խոսակցական լեզուներից որևէ մեկի վերաբերյալ բառարան առկա չէ. այդ դեպքում կներառեք միայն Ձեզ համար նոր բառերը:
- Ձեր կողմից արձանագրվող բառերը կամ արտահայտությունները չեն թվարկվի այբբենական կարգով, այլ ըստ իրենց համապատասխան *իմաստային ոլորտի*:
- Ձեր կողմից արձանագրվող յուրաքանչյուր բառի կամ արտահայտության կողքին Դուք կնշեք դրա համարժեքը թիրախային լեզվում, եթե այն գոյություն ունի, որևէ հարմար վերաձևակերպում, դրա կիրառության մեկ օրինակ և այդ օրինակի թարգմանությունը թիրախային լեզվով:

### 3. Ինչ տեսք ունի բառարանը

Ցույց տալու համար իմաստային ոլորտի հիման վրա կազմված բառարանի կառուցվածքը՝ մենք կթվարկենք մի շարք բառեր և այդ ցանկերից յուրաքանչյուրի համար կնշանակենք *գլխագիր-բառ*: Գլխագիրը կարելի է ընկալել և որպես վերացական հասկացություն, և որպես ընդհանրացված եզրույթ՝ բառերի մի դասակարգի կամ իմաստային որևէ ոլորտի համար:

Գլուխ 2

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ	ԺԱՄԱՆԱԿ	ԿՐՈՆ	ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	ՀՈՒՅՁ
ավտոմեքենա	ժամ	մահմեդականություն	կուսակցություն	զայրույթ
հեծանիվ	րոպե	պատարագ	ընտրություններ	երջանկություն

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ, ԺԱՄԱՆԱԿ, ԿՐՈՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ և ՀՈՒՅՁ բառերը կարելի է համարել որպես իմաստային ոլորտներ կամ բառային ընտանիքներ: Բառային ընտանիքի իսկությունը փորձելու համար կարող եք որպես մոդել օգտագործել հետևյալ նախադասություններից որևէ մեկը. *Ավտոմեքենան փոխադրամիջոց է, բայց փոխադրամիջոցը կարող է ավտոմեքենա չլինել: Մահմեդականությունը կրոն է, սակայն նրա կրոնը կարող է մահմեդականությունը չլինել: Երջանկությունը միակ հույզն է, որ նա սովորաբար ցույց է տալիս:*

## Հիշել

Բացի իմաստային ոլորտներ ներկայացնելուց, բառային ընտանիքները կարող են նաև օգտագործվել թարգմանության մեջ, երբ այնքան էլ վստահ չեք, որ կա X բառի համարժեքը, որը, օրինակ, նկարագրում է հատուկ զգացումը, որ մարդիկ ունենում են շատ բարձր սարմազցելուց հետո: Ձեր վերաձևակերպմանը, հետևաբար, կնախորդի ՀՈՒՅՁ բառը, որից հե

ԱՄՈՒՆՆՈՒ



տո՝ տվյալ հույզի նկարագրությունը և դրա թարգմանությունը թիրախային լեզվով: Օգտակար կլինի նաև ներառել մի նախադասություն՝ ցույց տալու X բառի կիրառությունը:

Ձեր բառարանը կազմելիս միշտ հիշեք, որ կարող եք ստեղծել ենթաբաժին, որում կթվարկեք բոլոր իդիոմային արտահայտությունները, որոնք առնչվում են, ասենք ՀՈՒՅԶ-երին կամ ՓՈ-ԽԱԴՐԱՄԻՋՈՑ-ներին: Դուք եք որոշում՝ որտեղ թվարկել այսօրինակ արտահայտությունները, այն է՝ կամ դրանց իրական իմաստի ներքո, կամ ըստ դրանց պարունակած առանցքային բառի:

#### 4. Ինչո՞ւ է կարևոր բառարանատեղծումը

Բառարանի ստեղծումը շատ լավ ձև է՝ ընդլայնելու Ձեր բառապաշարը, կատարելագործելու Ձեր թարգմանչական հմտությունները, ավելի լավ իմանալու, թե ինչպես են աշխատում Ձեր խոսակցական լեզուները, ստեղծելու առանձնահատուկ բառերերի ցանկեր, ինչպիսիք են՝ իրավական, բժշկական և քաղաքական բառերն ու արտահայտությունները, և ձեռք բերելու բանավոր թարգմանության անգնահատելի գործիք, որը կարող եք վերցնել Ձեր հետ և օգտագործել, երբ դրա կարիքը կլինի:

### ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՅԵՐ

- Ինչդրո՞ւմ ենք պատասխանել հետևյալ հարցին և բացատրել Ձեր պատասխանի պատճառները.

  - Արդյո՞ք Աֆրիկյան ազգային կոնգրեսը Հարավային Աֆրիկայում գործող ահաբեկիչներին, թե՛ ազատության համար պայքարողների կազմակերպություն էր:

Պատասխանելուց հետո վերլուծեք իմաստի ցանկացած մակարդակ, որ կարող եք գտնել այդ երկու բառերում, և թե արդյո՞ք դրանց իմաստները որևէ կերպ տարբերվում են:
- Կարդացեք ստորև բերված կարճ պատմությունը: Վերլուծեք որքան հնարավոր է շատ բաների իմաստային հնարավոր մակարդակները և վերաձևակերպեք դրանք: Չեզոք կերպով թարգմանեք դրանք Ձեր աշխատանքային լեզուներից որևէ մեկով:

Վաղ 70-ականներին ես երեք տարի Սան Ֆրանցիսկոյի քաղաքային երկաթուղու թիվ 8 Շուկայի երթուղու տրոլեյբուսի վարորդ էի: Շուկայի փողոցը լայն ուղանցում է, և հասարակության ամենատարբեր ներկայացուցիչների մի մեծ խումբ դրանով վերուվար է անում ամեն օր: Ես վարում էի գիշերը՝ աշխատանքի գալով պիկ ժամի սկզբին: Իմ առաջին մի քանի ուղևորությունները բաղկացած էին ֆինանսական թաղամասից գրասենյակային աշխատողներին տեղափոխելով քաղաքի բնակելի մաս, որը գտնվում է քաղաքի գործարար հատվածի արևմուտքում: Ավելի ուշ երեկոյան ժամերի ուղևորները պակաս բազմազան էին. գիշերային հերթափոխի աշխատողներ, հաճույք որոնողներ և Շուկայի փողոցի «մշտականներ»: Մշտականներն այն մարդիկ էին, ովքեր ապրում էին Շուկայի փողոցում կամ դրա մոտակայքում, գրեթե առանց բացառության՝ բնակելի կամ ժամանակավոր հյուրանոցներում: Անտունների համար ժամանակավոր կացարան հանդիսացող հյուրանոցներից ամենամեծը հսկայական մի շենք էր՝ հայտնի Լինքոլն անվամբ: Այն գտնվում էր Շուկայի փողոցի սկզբնամասի մոտ, առափնյա հատվածից մեկ թաղամաս այն կողմ:
- Բանավոր թարգմանիչները գործ ունեն խոսակցական լեզվի հետ: Գրավոր թարգմանիչները գործ ունեն գրավոր լեզվի հետ:

Ճիշտ է  Մխալ է
- Եթե ես չեմ հասկանում ինչ-որ բան, կարող եմ գուշակել խոսքաշարից:

Ճիշտ է  Մխալ է

5. Ցանկացած լեզու, որով խոսում եմ, կարող է լինել իմ աշխատանքային լեզուն:  
Ճիշտ է  Սխալ է
6. Բարբառը սոսկ կարևորություն չունեցող լեզու է, որով խոսում են փոքրամասնություն հանդիսացող խումբ:  
Ճիշտ է  Սխալ է
7. Նա, ով կրթություն չի ստացել, չի կարող լինել թարգմանիչ:  
Գրի առեք Ձեր մտքերը և քննարկեք դրանք Ձեր վերադասի հետ:  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_
8. Իմ զգացմունքները չպիտի իշխանություն վերցնեն իմ մտքերի նկատմամբ թարգմանելու ընթացքում:  
Գրի առեք Ձեր մտքերը և քննարկեք դրանք Ձեր վերադասի հետ:  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_
9. Իմ սեփական մտածելակերպը կարող է ազդեցություն ունենալ այն բանի վրա, թե ինչպես եմ թարգմանում  
Գրի առեք Ձեր մտքերը և քննարկեք դրանք Ձեր վերադասի հետ:  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_
10. Միայն բառացի թարգմանությունն է երաշխավորում թարգմանության ճշգրտությունը:  
Գրի առեք Ձեր մտքերը և քննարկեք դրանք Ձեր վերադասի հետ:  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Գլուխ 2

ԱՆՈՂՆԱՆ



# Մոդուլ III. Բանավոր Թարգմանչի գործիքակազմը

Որևէ մեկի ասածի իմաստի վերլուծությունը սուբյեկտիվ գործողություն է, քանի որ իմաստը գոնե մասնակիորեն կապված է մարդկանց խմբի, համայնքի, տարածքի կամ երկրի հետ, որին պատկանում կամ որի հետ կապվածություն է զգում խոսողը:

Այս մոդուլի ուշադրության առանցքում բանավոր թարգմանության մանրամասներն են՝ փախստականների հետ հարցազրույցի պայմաններում: Մասնավորապես, այն ուղղված է Ձեզ օգնելու՝ ստեղծել թարգմանչական Ձեր սեփական գործիքակազմը, որը կարող էր Ձեզ մոտ ունենալ՝ որտեղ և երբ էլ բանավոր թարգմանություն կատարելու լինեք: Գործիքակազմում Դուք կգտնեք հնարքներ կամ աշխատանքային գործիքներ, որոնք պետք է օգտագործեք՝ բարձրորակ թարգմանություն կատարելու համար:

# Գլուխ I. Բանավոր թարգմանության ընթացքը

## Այս բաժնում Դուք կսովորեք՝

- այն եղանակը, որը հայտնի է որպես հաջորդական թարգմանություն.
- թե ինչ պետք է անել այս եղանակի արդյունավետ կիրառման համար.
- թե ինչ կերպ է ակտիվ ունկնդիր լինելը բացում հասկանալու դռները.
- ինչպես վարվել խոսքի տարբեր տեսակների հետ:

## Ա. Հաջորդական թարգմանություն

### 1. Ինչ է բանավոր հաջորդական թարգմանությունը

Հաջորդական թարգմանության ժամանակ Դուք լսում եք խոսողին համեմատաբար կարճ ժամանակ, այն է՝ մեկ կամ երկու նախադասություն, հասկանում, թե ինչ նկատի ունի նա, Ձեր մտքում մեկնաբանում իմաստը և բառերով թարգմանում դեպի թիրախ լեզու: Երբ թարգմանությունն ավարտած կլինեք, կարող եք խոսողին թույլ տալ՝ շարունակել ևս մեկ-երկու նախադասություն, այնուհետև կրկնել գործընթացը:

Հաջորդական թարգմանություն	Համաժամանակյա թարգմանություն
<ul style="list-style-type: none"> <li>• լայնորեն կիրառվում է փախստականների շրջարկում</li> <li>• երկու ուղղությամբ (Ա լեզվից Բ լեզու և հակառակը)</li> <li>• հնարավոր է, որ հատուկ սարքավորումներ անհրաժեշտ չլինեն</li> <li>• կիրառվում է երկխոսությունների դեպքում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• լայնորեն կիրառվում է համաժողովներում</li> <li>• մեկ ուղղությամբ (Ա լեզվից Բ լեզու)</li> <li>• հնարավոր է, որ անհրաժեշտ լինեն հատուկ սարքավորումներ</li> <li>• կիրառվում է ելույթների դեպքում</li> </ul>

Երբեմն Ձեզ կարող են խնդրել՝ հաջորդաբար թարգմանել փաստաթղթեր, տարբեր տեղեկանքներ, հավաստագրեր, նամակներ, հայտարարություններ: Այդ դեպքում Դուք կթարգմանեք *անմիջապես (թղթից)*:

## Հարցեր

- Ինչ է նշանակում *համաժամանակյա* թարգմանություն: Ինչպե՞ս կնկարագրեիք «համաժամանակյա թարգմանություն» անվանվող հայտնի եղանակը՝ ի հակադրություն հաջորդական թարգմանության:
- Ինչ է նշանակում *ամփոփում*: Ինչպե՞ս կնկարագրեիք «ամփոփում» անվանվող հայտնի եղանակը՝ ի հակադրություն հաջորդական թարգմանության: Ինչ իրավիճակներում կարող էր կիրառվել ամփոփիչ թարգմանությունը



- Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ է փախստականների հետ հարցազրույցների համատեքստում սովորաբար հաջորդական թարգմանությունը նախընտրելի համարվում մյուս եղանակների համեմատ, ինչպիսիք են համաժամանակյա կամ ամփոփիչ թարգմանությունները:

## Հիշել

Պատճառներից մեկը, որի համար փախստականների հետ հարցազրույցի պայմաններում նախընտրելի է համարվում հաջորդական թարգմանությունը, այն է, որ վերջինս *մարդկային* տարր է ավելացնում հանդիպմանը, այն առումով, որ երկու զրուցակիցները հնարավորություն ունեն նայել, լսել միմյանց և խոսել միմյանց հետ՝ փոխանակ մեխանիկորեն իրենց ողջ ուշադրությունը թարգմանչին հատկացնելու: Ի լրումն, թարգմանչի շարունակական թարգմանությունը ամենայն հավանականությամբ վերջիվերջո կընդհատի երկու անձանց հաղորդակցությունը, ոչ թե կնպաստի դրա կայացմանը:

## 2. Ինչ պետք է անեմ՝ հաջորդական թարգմանության գործում հմտանալու համար

Ուշադրություն դարձրեք թարգմանչի վարքագծին՝ ստորև ներկայացվող օրինակում.



Գլուխ 1

ԱՄՈՒՆՏ

## Հարցեր

- Արդյո՞ք Դուք լավ ունկնդիր եք: Հաճախ եք, արդյոք, ինչ-որ բաներ բաց թողնում՝ չլսելու պատճառով:
- Ինչպե՞ս կարող եք զարգացնել Ձեր անձնական մոտեցումները՝ որևէ մեկին լսելիս ուշադրությունը կենտրոնացնելու համար:

## Հիշել

Կարևոր է տեղյակ լինել, թե ինչը կարող է խոչընդոտել Ձեր ակտիվ ունկնդրությանը: Մենք խորհուրդ կտայինք գիտակցել դա այն պահին, երբ նման զգացողություն կունենաք, մի պահ դադար տալ և որոշել՝ արդյո՞ք կարող եք շարունակել թարգմանելը: Եթե վստահ եք, որ կարող եք, առավելագույնս ջանացեք սևեռվել միայն խոսողի բառերի վրա:



### 3. Ինչ է ակտիվ ունկնդրումը

Հաճախ, երբ մարդիկ խոսում են միմյանց հետ, նրանք միշտ չէ, որ լսում են: Երբեմն նրանք մտածում են իրենց սեփական գաղափարների, զգացմունքների, խնդիրների և այլ բաների մասին: Երբեմն նրանք մտածում են ասել այնպիսի մի բան, որ դրական լույսի ներքո երևան: Սա հաճախ պատահում է, երբ ընթանում է մի ինչ-որ բանավեճ, քննարկում կամ փաստարկում:

Թարգմանիչները, **մասնավորապես՝ որոշակի փորձ ունեցողները**, հնարավոր է, որ անգիտակցաբար ենթադրեն, որ իրենք արդեն բազմաթիվ անգամ լսել են, թե ինչ է ասում հարցազրույցի տվյալ մասնակիցը: Արդյունքում՝ ի վերջո նրանք կարող են սկսել ուշադիր չլսել և մտածել հարցազրույցի հետ չկապված բաների մասին:

Դուք կարող եք ստուգել և բարելավել ակտիվ ունկնդրի Ձեր կարողությունը՝ որևէ ընկերոջ խնդրելով խոսել Ձեզ հետ երկու կամ երեք րոպե կամ նույնիսկ ավելի երկար, եթե Ձեր հիշողությունը լավ է: Դրանից հետո Դուք պետք է ճշգրտորեն կրկնեք նրա ասածը: Ձեր ընկերը ունակ կլինի հաստատել՝ արդյոք Դուք հաջողություն ունեցաք. նա կկարողանա ասել Ձեզ, եթե Դուք սխալ եք ներկայացրել իր բառերը:

### 4. Ինչո՞ւ է ակտիվ ունկնդրի լինելը բանավոր թարգմանիչների համար այդքան կարևոր

Ակտիվ ունկնդրումը դեպի ըմբռնում տանող դարպասն է: Հիշում եք արդյոք, թե ինչ ասաց Ջոնը լավ թարգմանիչների մասին:



Ակտիվ ունկնդրումը հանգեցնում է հետևյալին.

- Ես լսում եմ: Խոսողի խոսքերը ստանում են իմ ամբողջական ուշադրությունը:
- Ես լսում եմ: Խոսողի բառերն ունեն իմաստ, որին եմ սևեռում իմ ողջ ուշադրությունը:
- Ես լսում եմ: Ես հասկանում եմ խոսողի բառերի իմաստը:
- Ես թարգմանում եմ: Խոսողի բառերի իմաստը փոխանցվում է մեկ այլ լեզվի:

### 5. Ուրիշ ի՞նչ պետք է իմանամ լսելու և հասկանալու մասին

**Հասկանալու** գործընթացում Դուք նաև պետք է պատրաստ լինեք թարգմանելու խոսքերի տարբեր տեսակներ: Ուշադիր լսեք մեր ընկերներից յուրաքանչյուրին.



## Հարցեր

- Նրանցից ո՞ր մեկն է աղուտ ձևով արտահայտվում: Ո՞վ է պարզապես նկարագրում: Նրանցից մեկը կցկտուր է խոսում: Մեկը եզրակացություններ է անում: Գտնաբ արդյոք այն մեկին, ով հոետորական ոճով է արտահայտվում:
- Ձեր կարծիքով՝ ի՞նչը կարող է խոսքի աղուտության և/կամ կցկտուրության պատճառ լինել:
- Ինչո՞ւ են դատողություններ անելը և/կամ հոետորական խոսքը խնդիր՝ բանավոր թարգմանիչների համար:

## Հիշել

Հիշեք, որ ժամանակային սահմանափակումը կարող է կարևոր լինել պատումի ցանկացած ձևի պարագայում: Խոսողը կարող է պատմել իր պատմությունը քիչ թե շատ ժամանակագրություն պահելով, և կարող է հետ ու առաջ գնալ ժամանակի մեջ:

Բանավոր խոսքը կարող է շատ ավելի անկազմակերպ լինել, քան գրավորը: Մարդիկ հաճախ կանգ են առնում նախադասության կեսին ու սկսում խոսել ինչ-որ թեմայից, որը կարծես թե որևէ առնչություն չունի նախորդող մտքին: Այդուհանդերձ, այդ նոր թեման հավանաբար կապված է, սակայն Դուք դա կհասկանաք միայն պատումի ընթացքում ավելի ուշ:

## 6. Ինչպե՞ս կարող եմ լավագույնս հասկանալ, թե ինչ են ասում մարդիկ

Մարդկանց ասածը վերլուծելու առաջին քայլը որոշելն է պատումի գլխավոր և երկրորդական գաղափարները: Երկրորդ քայլով պետք է պարզել, թե ինչպես են գլխավոր և երկրորդական գաղափարները կապված միմյանց հետ: Դուք պետք է վարժվեք այդ երկու քայլերը կիրառելուն, մինչև որ դա կդառնա բնական:

*Կարդացեք հետևյալ տեքստը.*

*Նա թույլ չչորվեց, որ ես գնամ և արդյունքում ես դրանից կախաղեցի, որովհետև ասում եմ, երբ մարդիկ ասում են ինձ, թե ինչ անեմ: Բայց միևնույն է՝ ուզում եմ ասել, որ ինձ միշտ դուր է եկել նրա ընկերակցությունը, թեպետ նա ինձ ցավ է պատճառել: Բացի դրանից, նա միշտ մի տեսակ վայրենի է եղել, մինչդեռ իր առաջին կնոջը մատուցելով իսկ չէր դիպչի: Ամեն դեպքում, սա մի այլ պատմություն է, և այդ, ես կախաղեցի նրա վրա նաև այն պատճառով, որ նա ինձ մեղադրել էր իրեն դավաճանելու մեջ, մինչդեռ ոչ թե ես, այլ իր առաջին կինն էր դավաճանել իրեն, և ինչ իրավունք ունի նա ինձ այդպիսի բան ասելու: Դուք ասեք ինձ, որովհետև ես պակերացում չունեմ, և մոլորված եմ: Բայց և այնպես, այն օրը ես երեկոն անցկացրի դրսում, և ինքս ինձ մտածեցի. «Գրողի ծոցը կորչի նա էլ, իր առաջին կինն էլ»:*




### Հարցեր

- Տեքստում հր գաղափարները կամ հասկացությունները կարող են ընկալվել որպես ավելի տեղին, քան մյուսները:
- Ո՞ր գաղափարներն են պակաս տեղին:
- Ինչպե՞ս են այս գաղափարները կապված միմյանց հետ:
- Կարո՞ղ եք ամբողջովին վերակազմակերպել տեքստը՝ առանց փոխելու դրա ուղերձը:
- Հիշո՞ւմ եք, արդյոք, էջ 33-ի օրինակը թարգմանչի մասին, ով չթաքցրեց իր զգացմունքները՝ լսելով հարցազրույցի մասնակցի գովեստը իր երկրի ոստիկանների հասցեին: Մեկ անգամ էլ աչքի անցկացրեք այն: Օրինակում հր պահին է թարգմանիչն ընդհատում խոսողին: Կարո՞ղ եք սա կապել հաջորդական թարգմանության հետ և վերորբերյալ տեքստը կարդալուց հետո Ձեր կատարած եզրահանգման հետ:

### 7. Լսել, հասկանալ և թարգմանել... միաժամանակ

Ճիշտ է, երեք պրոցեսները՝ լսել, հասկանալ և թարգմանել, Ձեր ուղեղում տեղի են ունենում գրեթե միաժամանակ: Քանի որ Դուք հնարավորություն չունեք ամբողջ պատմությունը լսելու, այլ միայն դրա մասնիկներ և կտորներ, ինչը մենք կոչում ենք պատումի դրվագներ, Ձեզ համար կարող է դժվար լինել հանդիպման սկզբում իրար կապել գլխավոր և երկրորդական գաղափարները, ինչը հավանաբար կանեիք, եթե հաջորդական մեթոդով թարգմանելու լինեիք վերը բերված տեքստը: Ուշադրություն դարձրեք հետևյալ թարգմանական իրավիճակին.



### Հարցեր

- Ե՞րբ Դուք կընդհատեիք հարցազրույցի մասնակցին և կսկսեիք թարգմանել:
- Ձեր կարծիքով՝ ի՞նչ հարց էր տրվել հարցազրույցի մասնակցին:

## Գլուխ II. Հիշողության խնդիրներ

### Այս բաժնում Դուք կսովորեք, թե

- ինչպես տեղեկանալ Ձեր հիշողության կարողության մասին.
- ինչպես կարող եք նորագրումն օգտագործել իբրև հնարք՝ ամրապնդելու Ձեր հիշողական կարողությունը:

### Ա. Հիշողության կարողությունը

#### 1. Արդյո՞ք հիշողությունը կարևոր է բանավոր թարգմանչի համար

Նայելով վերջին նկարին՝ Դուք հավանաբար մտածեցիք հիշողության մասին, և այն փաստի, որ հիշողությունն օգնած կլինեք թարգմանչին՝ կապ ստեղծել իր լսած պատումի դրվագների միջև:

Հաջորդական թարգմանության որևէ փուլ չի կարող ամբողջանալ՝ առանց հենվելու թարգմանչի՝ սեփական հիշողությունը վերապատրաստման, կենտրոնացման բարձր մակարդակի, գաղափարների ու պատկերների կապակցման և նորագրման միջոցով ընդլայնելու կարողության վրա:

Գլուխ 2

ԱՄՈՒՆՏ

Որքան ավելի լավ է աշխատում Ձեր հիշողությունը, այդքան ավելի հաջողակ կլինեք Դուք հաջորդական թարգմանություն իրականացնելու մեջ: Այս պատճառով հիմնարար նշանակություն ունի այն, որ Դուք իմանաք, թե ինչպես է աշխատում Ձեր հիշողությունը և Ձեզ վարժեցնեք այն բարելավելուն: Հիշողությունն այն վայրն է, ուր Դուք ժամանակավորապես պահում և նորոգում եք տեղեկությունների ամեն մասնիկ, որ Ձեզ պետք կլինի՝ վերակառուցելու խոսողի միտքը թիրախային լեզվում:



## Հարցեր

- Ինչպե՞ս կնկարագրեիք Ձեր հիշողությունը:
- Դուք զգում ե՞ք, որ վերահսկում եք Ձեր հիշողությունը:
- Սովորաբար ի՞նչ եք անում, երբ ցանկանում եք հիշել ինչ-որ բան:
- Կարդացեք էջ 43-ի մենախոսությունը («Ի՞նչ պետք է անեմ ես հաջորդական թարգմանության մեջ հաջողելու համար») ևս մեկ անգամ և տեսեք, թե արդյոք կարող եք բառացի կրկնել այն:

## 2. Ինչո՞ւ ենք մենք հիշում



Դուք կարող եք վերլուծել ինչ-որ բանից *տեղյակ* լինելու և ինչ-որ բան *գիտակցելու* միջև տարբերությունը: Մենք սովորաբար տեղյակ ենք շատ ու շատ բաներից, սակայն հստակորեն չենք գիտակցում դրանք, քանի դեռ դրանք մեզ համար հետաքրքիր, յուրահատուկ կամ անսովոր չեն: Հաճախ մենք մի ինչ-որ բան գիտակցում ենք, քանի որ վերջինս մեզ ստիպում է դրան նայել մի հատուկ ձևով և հասկանալ այն յուրովի: Իրազեկվելը տևում է մեկ վայրկյանից էլ պակաս կամ միգուցե մի փոքր երկար, սակայն գիտակցությունը մեր հիշողության վրա երկարատև ազդեցություն ունի: Մենք կարող ենք միայն թեթևակի տեղյակ լինել, որ մեր բջջային հեռախոսը մի տեղ ենք գցել, սակայն մենք երբեք չենք կարող մոռանալ առաջին սիրահարվածությունը: Այն դարձել է մեր գիտակցության մի մասը:

- Իրազեկվածությունը վերաբերում է գիտելիք ունենալուն, նույնիսկ եթե դա ժամանակավոր է, կամ ինչ-որ բաներ հասկանալուն:
- Գիտակցությունը այն վիճակն է, երբ կարողանում ես մտածել, զգալ, հասկանալ և ձեռքբերել գիտելիք տեղի ունեցողի վերաբերյալ:

## 3. Ինչպե՞ս են իրազեկվածությունը և գիտակցումն ազդում իմ աշխատանքի վրա:

Եկեք պատկերացնենք, թե Դուք թարգմանում եք մի փախստականի և նրա հարցազրուցավարի համար: Հարցազրույցի սկզբում փախստականը հիշատակում է ամսաթիվը.






## Հարց

- Ինչպես կվարվեիք համանման իրավիճակում:

Հետևյալ գծապատկերն ամփոփ ներկայացնում է թարգմանչի պատասխանը իրազեկվածության, գիտակցման և հիշողության առումով.

### Թարգմանչի արձագանքը



Գլուխ 2

ԱՄՈՂԱՆՈՒՄ



## Հիշել

Դուք պետք է Ձեր լսածը կարողանաք հիշել այնքան ժամանակում, որն անհրաժեշտ է այն հասկանալու, դրա գոնե մի մասը թարգմանելու և համապատասխան համատեքստում տեղադրելու համար: Այլ կերպ ասած՝ Դուք պետք է կարող լինեք պատումի բոլոր դրվագները կապել միմյանց հետ, որպեսզի դրանք դառնան մեկ պատմություն:

Առաջին քայլը տեղյակ լինելն է. ընկալել բառը որպես բառ, արտահայտությունը որպես արտահայտություն, թիվը որպես թիվ, ճանաչել դրանք որպես այդպիսիք և մշակել դրանք Ձեր մտքում: Այնուհետև Դուք պետք է մտածեք դրանց կարևորության մասին պատումի դրվագից դուրս, ձևավորեք հետաքրքրություն դրանց իմաստի նկատմամբ և վերլուծեք՝ դրանցից սովորելու և գիտակցում ձևավորելու համար:

## Հարցեր

- Վերոնշյալ գծապատկերի հիմքի վրա սահմանեք ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հիշողությունը:
- Թվարկեք հնարավոր գործոնները, որոնք թարգմանչի համար հնարավոր են դարձնում տեղեկությունների մի մասը պահել սեփական երկարաժամկետ հիշողության մեջ:
- Մշակել մոտեցումներ՝ խթանելու ինքներդ Ձեր հիշելու տվյալներ՝ նույնիսկ երբ Դուք կարծում եք, որ դրանք հիշելը կարևոր չի լինի հարցազրուցավարի համար:

## 4. Կարող եմ արդյոք մարզել հիշողությունս

Մարզելով Ձեր հիշողությունը՝ Դուք ավելի լավ կհասկանաք և կվերահսկեք այն: Թեպետ հավանաբար դժվար է լիակատար վերահսկողություն ունենալ կարճաժամկետ և երկարաժամկետ հիշողությունում տեղեկությունների պահեստավորման և այդ երկուսի միջև տեղաշարժերի վրա, այնուամենայնիվ՝ հնարավոր է հիշողությունը բարելավել հետևյալ վարժությունների միջոցով.

- Ակտիվորեն ունկնդրեք որևէ մեկին, նախընտրելի է՝ ձայնագրված, առավելագույնը՝ 20 րոպե տևողությամբ:
- Ուշադրությունը սևեռեք խոսողի ձայնի, դրա ելևէջների և վոկալ հատկանիշների վրա: Նշումներ մի կատարեք:
- Պատկերային դարձրեք (վիզուալացրեք) խոսողի ասածը, այն է՝ նրա նկարագրությունները վերածեք պատկերների, հոտերի, գույների, տարածության, զգացմունքների:
- Վերապատմեք խոսողի ասածները, սակայն՝ ոչ նույն բառերով՝ ուշադրությունը սևեռելով իմաստների, հասկացությունների և ենթաիմաստների վրա:
- Եվս մեկ անգամ լսեք ձայնագրությունը և տեսեք, թե ինչ եք մտապահել և ինչ՝ մոռացել: Վերլուծեք, թե ինչու է սա տեղի ունեցել:

Այնուհետև նույն վարժությունը կրկնեք՝ օգտագործելով մեկ այլ ձայնագրություն: Պատկերային դարձրեք ասվածը (տես վերը) և լսելու ընթացքում կիրառեք հետևյալ եղանակները.

- Իմբավորեք ինչ-որ ընդհանուր բան ունեցող մտքերը, օրինակ՝ վագրերը և փղերը պատկանում են կենդանիների խմբին:
- Նշեք տարբերությունները և նմանությունները իրադարձությունների, մարդկանց, առարկաների միջև և այլն:
- Ինքներդ Ձեզ հարցրեք, թե ինչ կերպ են իրադարձությունները, մարդիկ, առարկաները և այլն կապված միմյանց հետ:

Երբ սա կատարած կլինեք, ձեռք բերեք մեկ այլ պատումով ձայնագրություն և ունկնդրեք: Համաժամանակյա թարգմանության ենթարկեք բովանդակությունը Ձեր աշխատանքային լեզուներից որևէ մեկով՝ օգտագործելով «PLAY» և «PAUSE» կոճակները: Օգտագործեք միևնույն



եղանակները, ինչ նախորդ երկու վարժություններում՝ հիշելով վերը, «**Հաջորդական թարգմանություն**» բաժնում նկարագրված եղանակները, և կիրառեք Մոդուլ 2-ում Ձեր կողմից ձեռք բերված բոլոր լեզվաբանական հմտությունները: Նորթագրումներ մի կատարեք:

## Բ. Նորթագրում

### 1. Ինչո՞ւ ես պետք է նշումներ կատարեմ

Ինչպես տեսանք քիչ առաջ, հաջորդական թարգմանությունն այն եղանակն է, որ փախստականների հետ աշխատելիս հավանաբար առավել հաճախ կկիրառեք: Այն օգտակար է երկու կողմերի միջև ցանկացած պաշտոնական հաղորդակցության դեպքում, մասնավորապես՝ հարցազրույցի: Այս եղանակն արդյունավետորեն իրականացնելու համար հարկ կլինի, որ Դուք օգնեք Ձեր հիշողության կարողությանը՝ նորթագրումների միջոցով:

Ձեր նորթագրումները նախատեսված են անմիջապես օգտագործման համար և կազմված կլինեն բառերից, նշաններից և սիմվոլներից, որոնք Ձեր ուղեղը կարող է անմիջապես կապել որևէ մտքի հետ՝ առանց մտածելու այն մասին, թե ինչ լեզվով պետք է արտահայտվի այդ միտքը:

### 2. Ինչո՞ւ է կարևոր նորթագրումը

Հարցազրույցի ժամանակ նորթագրման արդյունավետ համակարգի կիրառումը կծառայի հետևյալ նպատակներին.

- մեծացնել Ձեր ինքնավստահությունը: Հիշողության վրա հույս դնելը կարող է ռիսկային լինել, հատկապես՝ երբ Դուք հոգնած եք.
- օգնել Ձեր ուշադրությունը սևեռել ասվածի իմաստի վրա, այլ ոչ թե առանձին բառերի, արտահայտությունների, ամսաթվերի և թվերի վրա.
- խոսողներից յուրաքանչյուրին հնարավորություն տալ խոսելու ազատորեն՝ առանց թարգմանելու համար անընդհատ ընդհատելու նրանց.
- հաճախակի ընդհատումները և անցումները մի լեզվից մյուսը կարող են խաթարել խոսողներից յուրաքանչյուրի մտքերի ընթացքը և նվազեցնել նրանց մտքերի տրամաբանվածությունն ու հստակությունը, մասնավորապես՝ երբ հատկապես զգայուն խոսակցությունների ժամանակ ներգրավված են զգացմունքներ.
- օգնել Ձեզ՝ խնամքով փոխանցել տրամադրված ողջ փաստական տեղեկությունները, ինչպիսիք են՝ ամաթվերը, թվերը, գույները, չափերը և այլն՝ նույն հաջորդականությամբ, ինչ եղել են օրիգինալ խոսքում.
- օգնել հարցազրուցավարին, ով, իր հերթին, նշումներ է կատարում Ձեր թարգմանության վերաբերյալ: Երբ Դուք թարգմանում եք, Դուք կարող եք մատնացույց անել այն անունները և թվերը, որ Դուք փոխադրում եք թիրախային լեզու, որպեսզի հարցազրուցավարը կարողանա տեսնել, գրավոր, այն անունը, որը դժվար է արտաբերել կամ հասկանալ.
- մեծացնել խոսողի կողմից Ձեզ վստահելու աստիճանը, ով կարող է ընկալել իր խոսքի տրամաբանվածության աստիճանը և կառուցվածքը՝ թարգմանության ընթացքում հետևելով Ձեր նորթերին.
- նորթերը կարելի է օգտագործել հարցազրույցի ժամանակ կամ դրանից անմիջապես հետո՝ որպես ստուգման ու վերահաստատման միջոց այն դեպքում, եթե հարցազրույցի մասնակիցը ցանկանա ճշտել տեղեկույթի մի որևէ հատված:

Գլուխ 2

ԱՆՈՒՄԵՆ



### 3. Ինչպե՞ս է նորթագրումը առնչվում հիշողության հետ

Ինչպես նշեցինք նախորդ բաժնում, տեսողականացումը (վիզուալացում) օգտակար է հիշողության համար, և նորթերը խոսողի բառերի տեսողական ներկայացումն են: Քանի որ, կատարյալ տարբերակում, երկու գրուցակիցները պետք է մոռանան, որ իրենք խոսում են թարգմանչի միջոցով, հետևաբար թարգմանիչը պետք է կարողանա ուղերձը տեղ հասցնել որքան հնարավոր է բնականորեն՝ հնարավորին քիչ ջանք գործադրելու անհրաժեշտություն թողնելով բառերի իմաստների ապակողավորման համար: Ձեր նորթերը պետք է ներառեն *նվազագույնը* հետևյալը.

- i. անուններ, ամսաթվեր, թվեր.
- ii. փաստեր, նկարագրություններ և այլ մանրակրկիտ տեղեկություններ, որոնք կարող են չպահպանվել Ձեր կարճաժամկետ, էլ չասած՝ երկարաժամկետ հիշողության մեջ:

#### Օրինակ.

1999 թվականին իմ խմբի 245 անդամներ 99  
 արտագաղթեցին հինգ տարբեր երկրներ: 245 ----->20-25տրկն< (30 = 70տրկն)  
 Նրանց մեծամասնությունը 20-25 տարեկան էր, թեպետ նրանց թվում կային մոտ 70-ն անց 30 տարեց մարդիկ: 5 երկիր

### 4. Արդյո՞ք գոյություն ունի նորթագրման որևէ կատարյալ համակարգ

Հետևյալ կանոնները և գործնական խորհուրդները կօգնեն Ձեր տիրապետել հաջորդական նորթագրման մի արդյունավետ եղանակի: Այդուհանդերձ, չկա նորթագրման որևէ համընդհանուր համակարգ: Ճիշտ ինչպես մեզնից յուրաքանչյուրն ունի տարբեր մտածելակերպ և սովորելու եղանակ, նույնպես էլ մեզնից ամեն մեկը մշակում է նորթագրման մի ուրույն համակարգ: Այսպիսով, հաջորդական թարգմանության ժամանակ նորթագրումը մեծապես սուբյեկտիվ է: Վերջնական արդյունքը, այդուհանդերձ, պետք է նույնը լինի բոլորի համար. փոխանցվող ուղերձը ամեն կերպ պետք է համապատասխանի խոսողի կողմից արտահայտված ուղերձին:

#### Հիշել

Հաջորդական թարգմանություն կատարելու հետ միասին երբեք մի սղագրեք, որովհետև՝

- i. սղագրած տեքստի մի քանի տողը մեկ հայացքով կարդալն անհնար է.
- ii. սղագրած տեքստը կարդալը շատ ժամանակ է խլում, քանի որ այն խոսողի արտահայտած մտքերի բառացի վերարտադրությունն է.
- iii. սղագրումը Ձեզ թույլ չի տալիս ճկուն լինել և մտցնել այնպիսի արտահայտություններ կամ գաղափարներ, որոնք ավելացնում է խոսողը, որպես ասվածից հետո ծագած մտքեր:

### 5. Կարո՞ղ եմ տեսնել նորթագրման մեկ այլ օրինակ

Դուք պետք է ունակ լինեք ճանաչելու Ձեր կողմից օգտագործվող բառերը, նշանները, խորհրդանիշները և հիշելու, թե ինչ են դրանք նշանակում: Հավաստիացե՞ք, որ գրում եք հստակորեն, օգտագործե՞ք խոշոր տառաչափեր և բառերի ու նշանների միջև բավականաչափ տեղ թողե՞ք, որպեսզի կարողանաք մեկ հայացքով վերականգնել պատկերը:

## Օրինակ.

<b>ԺԱՄԱՆԱԿԸ</b>	<b>լրացուցիչ տեղեկություններ</b>
<b>ՍՈՒՔՅԵԿՏԸ</b>	<b>ածական</b>
<b>ԲԱՅԸ</b>	<b>լրացուցիչ տեղեկություններ</b>
<b>ՕՔՅԵԿՏԸ</b>	<b>ածական</b>

2003 թվականի սկզբին ես տեղափոխվեցի իմ երկրի մայրաքաղաք, որտեղ երկու տարի ապրեցի մի փոքրիկ բնակարանում:

03 սկզբ

ես

----> **ցի**

**մայրաքաղաք**

**փոքր բն-ն / 2 տարի**

**տուն**

Այսօրինակ տրամաբանական վերլուծությունը Ձեզ մեկ հայացքով կտա պահանջվող տեղեկությունը՝ միաժամանակ տալով ճկունություն՝ օգտագործելու առաջին լեզվով Ձեր սեփական բառերը, որ գալիս են Ձեր մտքին: Լավագույնը կլինի նորագրումներ կատարել թիրախային լեզվով, որպեսզի նախօրոք վերանա թարգմանության հարցում ցանկացած խոչընդոտ: Եթե չեք կարող կատարել ճշգրիտ թարգմանություն, նշեք Ձեր լսած բառերը և թարգմանության ընթացքում սեփական բառերով վերարտադրեք ասված միտքը:

Գլուխ 2

## 6. Ի՞նչ սիմվոլներ կարող եմ օգտագործել՝ նորագրման համար

Սիմվոլների ընտրությունը կարևոր է: Դուք պետք է մշակեք մի համակարգ, որը հարամաբեցված կլինի տրամաբանական մտածողության Ձեր սեփական եղանակին: Մշակելով Ձեր համակարգը՝ Դուք կարիք կունենաք ստեղծելու նշաններ և սիմվոլներ, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է իմաստային մի ոլորտ և կարող է վերարտադրվել ցանկացած լեզվով, որ Դուք լսում եք և որով աշխատում եք:

## Օրինակ.

- մդկ > մարդիկ
- եկր > երկիր
- աշի > աշխարհ
- խղն > խաղաղություն
- ելթ > ելույթ
- խսկն > խոսակցություն
- գմր > գումար
- քղկն > քաղաքականություն
- տնտն > տնտեսություն
- մջզգ > միջազգային

ԱՄՈՒԿԱՆՊ



Սրա և իմաստային այլ ոլորտների հիման վրա Դուք կարող եք մշակել սեփական ավելի կոնկրետ հասկացությունները, որպեսզի ստանաք վստահելի, անմիջապես ճանաչելի զուգորդումներ: Սա կարող է արվել, օրինակ, իմաստային բառերին հավելյալ փառ ավելացնելու միջոցով.

- փ-մղկ > փախստական
- զ-եկր > զարգացող երկիր
- զ-աշի > զլորբալացում
- հ-խղղն > խաղաղության համաձայնագիր
- խ-ելթ > խոսակցություն
- հ-խսկն > հանդիպում
- բկ-գմր > բանկային հաշվեհամար
- ընտր-քղկն > ընտրություններ
- ֆին-տնտն > ֆինանսական իրավիճակ
- հար-մջզգ > միջազգային հաարաբերություններ

## 7. Ինչպե՞ս կարող եմ սիմվոլների միջոցով նկարագրել իրադարձությունների ժամանակագրությունը

Պատումների ժամանակ ժամանակային շրջանակը կարող է կարևոր լինել: Մշակեք Ձեր սեփական ճշգրիտ համակարգը, որով կարտահայտվի բայի ժամանակաձևը կամ գործողության ժամանակը:

### Օրինակ.

- նա աշխատում է > աշ հ
- նա կաշխատի > աշ ԼԼ
- նա աշխատել է > աշ ել,
- նա չի աշխատում > X աշ հ
- նա չի աշխատի > X աշ ԼԼ
- նա սիրում է աշխատել >

## 8. Չափումների, չափերի և նմանատիպ այլ բաների մասին

Հաճախ բանավոր խոսքում խոսողը կարող է արտահայտել քանակ և ինտենսիվություն, երբեմն՝ համեմատությունների միջոցով: Դուք կարող եք օգտագործել մաթեմատիկական նշաններ՝ ցույց տալու իրերի չափը/մարդկանց քանակը, վայրիվերումները, տեղափոխությունները, հեռավորությունը և աճող կամ նվազող քանակները:

### Օրինակ.

- Այդ տղան շատ բարձրահասակ է ♂ ↑↑
- Այդ աղջիկն ավելի արագ է մեծանում, քան իր եղբայրը ♀ ↗ > եղբ
- Կուրսան ավելի փոքր է, քան Մեքսիկան: Կուրսա < Մեքսիկա Կուրսա < Մեքսիկա
- Եգիպտական ֆունտի արժեքն ընկել է, մինդեռ ամերիկյան դոլարինը՝ մեծացել Եգիպտական ֆունտն ↘ \$ ↗

### Հիշե՛լ

Դուք պետք է ունենաք հապավումների ցանկ այն երկրների անունների, հիմնական կազմակերպությունների և խմբերի համար, որոնց օգտագործման հավանականությունը Ձեր բանավոր թարգմանությունների ժամանակ մեծ է:



## ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՅԵՐ

- Հաջորդական թարգմանությունը խոսողի կողմից ասվածի ամփոփումն է:

Ճիշտ է  Սխալ է
- Հաջորդական թարգմանության ժամանակ թարգմանիչը կարող է խոսողներին ընդհատել՝ երբ ցանկանա:

Ճիշտ է  Սխալ է
- Ելույթները վերլուծելիս թարգմանչի գործն է որոշել, թե որոնք են գլխավոր և երկրորդական մտքերը:

Ճիշտ է  Սխալ է
- Կարճաժամկետ հիշողություն ունենալ՝ նշանակում է, որ ես դժվարանում եմ հիշել ինչ-որ բաներ:

Ճիշտ է  Սխալ է
- Գործընկերներից մեկին խնդրեք որևէ հոդվածից մի կտոր ընթերցել բարձրաձայն: Փորձեք հաջորդական թարգմանություն կատարել (վարժվեք ճիշտ պահին խոսողին ընդհատելուն): Ուշադրությունը սևեռեք գլխավոր և երկրորդական գաղափարները տարրորոշելու և խոսքը թիրախային լեզվով վերակազմակերպելու վրա: Նշումներ մի կատարեք:
- Վերցրեք մի կարճ հոդված որևէ ամսագրից, նախընտրելի է՝ այնպիսին, որն անդրադառնում է զգայուն և/կամ զգացմունքային թեմաների: Այն բարձրաձայն կարդացեք հայելու կամ որևէ գործընկերոջ առջև: Վարժվեք ձայնի ճիշտ տոն, հստակ առոգանություն և կարդալու արագություն (ոչ չափազանց արագ, ոչ էլ չափազանց դանդաղ) օգտագործելուն: Փորձեք կարդալու ընթացքում աչքերով հաղորդակցվել ինքներդ Ձեզ կամ Ձեր գործընկերոջ հետ հնարավորինս հաճախ: Սա Ձեզ կստիպի մեկ ամբողջական նախադասություն կամ դրա մի մասը կարդալ արագ, հիշել և անգիր վերարտադրել այն: Նույն հոդվածի վերաբերյալ կատարեք հաջորդական թարգմանության փորձեր: Նշումներ մի կատարեք:
- Աշխատելով Ձեր գործընկերներից որևէ մեկի հետ՝ դանդաղորեն բարձրաձայն կարդացեք էջ 49-ի տեքստը («Ինչ անել, եթե ինձ խնդրում են ամեն ինչ թարգմանել բառացի»), փոխվեք տեղերով և Ձեր գործընկերոջը թույլ տվեք հաջորդական եղանակով թարգմանել այն թիրախային լեզվով: Ապա փոխեք դերերը: Շրջասության միջոցով արտահայտեք որքան հնարավոր է շատ բառեր՝ փոխանակ դրանց համարժեքները որոնելու: Նշումներ մի կատարեք:
- Գտեք մեկ այլ տեքստ (առավելագույնը՝ կես էջ) և խնդրեք Ձեր գործընկերոջը՝ բարձրաձայն կարդալ այն նորմալ արագությամբ՝ առանց ընդհատելու: Հաջորդական եղանակով նշումներ կատարեք: Երբ Ձեր գործընկերն ավարտի, օգտագործեք Ձեր հիշողությունը և նշումները՝ ամփոփ ներկայացնելու լսածը՝ այնպես, որ այն լինի բնագրին հնարավորինս մոտ: Վարժությունը կրկնեք որևէ այլ լեզվով, որով խոսում եք, նախընտրելի է՝ Ձեր երկրորդ կամ երրորդ լեզվով:
- Խնդրեք, որ Ձեր գործընկերներից որևէ մեկը բարձրաձայն ընթերցի որևէ հոդված, նախընտրելի է՝ զգայուն կամ զգացմունքային թեմաների վերաբերյալ, և հաջորդական եղանակով թարգմանեք այն թիրախային լեզվով: Գործողությունը ձայնագրեք: Վարժություններ կատարեք՝ փոխվելով դերերով, վարժվեք համարժեքներ գտնելու, շրջասության և նոթագրման հարցերում: Գործողության վերջում օգտագործեք «PLAY» և «PAUSE» կոճակները և Ձեր գործընկերոջը խնդրեք հաջորդական եղանակով հետադարձ թարգմանել Ձեր թարգմանությունը բնօրինակի լեզվով: Համեմատեք երկու տարբերակները և քննարկեք տարբերությունները, եթե այդպիսիք կան:

# Մոդուլ IV.

## Թարգմանելու ժամանակն է

Այս մոդուլի ուշադրության առանցքում այն պահին է, երբ Դուք կնստեք կամ կկանգնեք երկու, երբեմն՝ ավելի մարդկանց միջև և կօգնեք նրանց միմյանց հետ հաղորդակցվելու հարցում:

Քանի որ թարգմանության ընթացքում Ձեզնից ակնկալվում է ճիշտ և թափանցիկ վարքագիծ, թարգմանչական ճիշտ վարքագծի վերաբերյալ հարցերի ձևով ներկայացված է համապարփակ տեղեկատվություն թարգմանության ընթացակարգի մասին:

Այ մոդուլը նաև նկարագրում է տարածված և գործնական թարգմանչական հարցեր, որոնք թարգմանության ընթացակարգին բնորոշ հարցեր չեն, ինչպես օրինակ՝ նստելու դասավորությունը և միջմշակութային հաղորդակցության կարևորությունը:

Այստեղ նկարագրված թարգմանչական ընթացակարգերը չպիտի մեխանիկորեն կիրառվեն բոլոր իրավիճակներում:

Այս պատճառով համեմատվում են իրավական և ոչ իրավական հանդիպումները փախտականների և ՄԱԿ ՓԳՀ-ի պաշտոնյաների միջև:

Թարգմանիչների ու հարցազրուցավարների միջև խրախուսվում է համագործակցությունը՝ որոշելու տվյալ իրավիճակում կիրառման համար առավել համապատասխան թարգմանության մոտեցումը:

# Գլուխ I. Բանավոր թարգմանության հիմնական ընթացակարգերը

## Այս բաժնում Դուք կսովորեք, թե

- որքան կարևոր են մշակութային տարբերությունները թարգմանության գործընթացում.
- ինչպես պրոֆեսիոնալ վարքագիծ դրսևորել բանավոր թարգմանության ընթացքում.
- ինչպես հաղթահարել տարածված խոչընդոտները, որոնց կարող եք բախվել թարգմանելու ընթացքում:

## Ա. Թարգմանելու ճիշտ և թափանցիկ վարքագիծ

### 1. Ո՞րն է իմ առաջնային խնդիրը հարցազրույցի ընթացքում

Փախստականների հետ հարցազրույցի համատեքստում անհրաժեշտ է հասկանալ, որ ՄԱԿ ՓԳՀ-ի պաշտոնյաները փախստականին առաջարկում են իրենց իրավագիտական փորձառությունը, գիտելիքը և հմտությունը, որի կարիքը փախստականն ունի պաշտպանության և աջակցության իր հայտում: Հարցազրույցի և հանդիպումների միջոցով փախստականն տրամադրում է տեղեկություններ իր իրավիճակի, անհանգստությունների, վախերի, ակնկալիքների, խնդիրների, պատմության և այլնի մասին: Բանավոր թարգմանչի գործն է *երկու կողմերի համար ապահովել հնարավորություն, որ յուրաքանչյուրը կարողանա մյուսի ուշադրությանը ներկայացնել իր ունեցածը, առանց տրամադրածի էության ղեկավարման, նենգաբար օգտագործման, վերահսկման, ձևափոխման, բարելավման, կարևորության նվազեցման կամ բովանդակության կրճատման*: Թարգմանիչն այդ անում է՝ հաստատելով վստահելի հարաբերություններ ինչպես հարցազրուցավարի, այնպես էլ հարցվողի հետ:

### 2. Արդյո՞ք ինձնից ակնկալվում է հաշվի առնել մշակութային տարբերությունները

Ձեզնից չի ակնկալվում գործել որպես մշակույթի փորձագետ կամ որպես ծագման երկրի վերաբերյալ տեղեկությունների աղբյուր: Ձեր դերն է միջամտել, երբ զգում եք, որ հարցազրուցավարը և հարցազրույցի մասնակիցը չեն հասկանում միմյանց կամ երբ խոսողներից որևէ մեկը զգում է, որ իրեն չեն հասկանում կամ ինքը չի հասկանում: Այս կերպ վարվելիս Դուք ուշադրությունը սևեռում եք երկու կողմերի օգտագործած լեզվի վրա և վերլուծում եք դրա իմաստն ու մշակութային թյուրըմբռնումների հնարավորությունը: Հետևաբար՝ Ձեր խնդիրն է աջակցել երկու կողմերին միմյանց բառերի տակ թաքնված իմաստը բացահայտելու հարցում: Այս անելու համար Դուք ջանում եք ոչ թե խոսողի բառերի տակ եղած իմաստը *փոխարինել*, այլ ճշտորեն *արտացոլել* այն:



## Օրինակ 1.



## Լրացուցիչ հարցեր

- Ենթադրվում է, որ թարգմանիչները չպետք է փոխարինեն իմաստները: Նրանց խնդիրն է՝ աջակցել իմաստների բացահայտման հարցում: Ինչ կանեիք Դուք այդ խնդիրն իրականացնելու համար:
- Կամ արդյոք ինչ-որ բան, որ Դուք կանեիք՝ հարցազրուցավարին զգուշացնելու մշակութային առումով անպատշաճ լեզվի օգտագործման վտանգների վերաբերյալ:
- Այսօրինակ իրավիճակներում որքանով է կարևոր գաղտնիության պահպանման հարցը:

## 3. Որո՞նք են բանավոր թարգմանության որևէ ընթացակարգի մանրամասները

- Առաջադրանքն ընդունել՝ հիմնվելով Ձեր լեզվական նկարագրի վրա.
- Ճշգրտություն, վարվելաձևեր, հարգանք դիմացինի և հարգանք սեփական անձի նկատմամբ.
- Հարցազրույցի նախնական փուլ (մասնակիցների ներկայացում, նախնական հայտարարություններ)
- Հարցազրույցի պատշաճ վարում (ինչ կարելի է և ինչ չի կարելի անել).
- Հարցազրույցի ավարտը (ամփոփում, բառարան, թարգմանչի նոթատետր, ընդմիջում):

## 4. Ինչո՞ւ է կարևոր իմ լեզվական նկարագիրը

Իր համար բանավոր թարգմանության պատվեր տված ՄԱԿ ՓԳՀ-ի պաշտոնյային կարելի էր տրամադրել տեղեկություններ այն լեզուների մասին, որոնցով Դուք խոսում եք, դրանց տիրապետման աստիճանը, բարբառների Ձեր իմացությունը, առանձնահատուկ տերմինաբանության Ձեր իմացությունը (իրավական, բժշկական և այլն): Այդուհանդերձ, Ձեր պարտականությունն է վերահաստատել Ձեր որակավորումները և անհրաժեշտության դեպքում քննարկել Ձեր նկարագրի որևէ տարր, որը կարող է թույլ չտալ, որ արդյունավետորեն իրականացնեք Ձեր աշխատանքը:

## Հիշել

Ձեզ կարող են տալ հնարավորություն՝ համառոտ տեղեկություններ ստանալ այն փախստական(ներ)ի վերաբերյալ, ովքեր մասնակցելու են հանդիպմանը: Թեպետ այսօրինակ ծանոթացումը չպիտի ներառի որևէ տեղեկություն նրանց հայցի վերաբերյալ, այն պետք է հնարավորություն տա իմանալ, թե արդյոք հայցվորը արական, թե իգական սեռի է, արդյոք մի խումբ է, երեխա է, թե երեխաների խումբ: Ամենայն հավանականությամբ Դուք ավելի արդյունավետորեն կգործեք, եթե Ձեզ ներկայացնեն Ձեր աշխատանքի նպատակն ու միջավայրը:



### Հարցեր

- Ինչո՞ւ Ձեզ տեղեկություններ չպիտի տրամադրվեն հարցազրույցի մասնակցի դեպքի վերաբերյալ:
- Ինչո՞ւ է հավանական, որ Դուք ավելի լավ կաշխատեք, եթե իմանաք, թե որն է հարցազրույցի նպատակը:
- Ի՞նչ եք կարծում՝ արդյո՞ք միշտ հնարավոր է նախապես իմանալ, թե որ լեզվով է խոսում հարցազրույցի մասնակիցը:
- Ի՞նչ կարելի է անել, եթե պարզվում է, որ Դուք ճիշտ թարգմանիչը չեք տվյալ աշխատանքի համար:

### 5. Ի՞նչ է նշանակում լավ վարվելաձև և հարգանք

Թարգմանելու համաձայնություն տալուց հետո համոզվեք, որ Դուք ժամանել եք ճիշտ վայր ճիշտ ժամանակին: Ճշտապահությունը կարևորագույն նշանակություն ունի Ձեր մասնագիտության համար: Դա Ձեր այցեքարտն է, պրոֆեսիոնալ վարքագծի նշանը և օգտակար է ներգրավված կողմերի հետ վստահության վրա հիմնված հարաբերություններ կառուցելու տեսակետից:



### Հարց

- Ինչո՞ւ հարցվողը բացասական զգացողություններ ունի տեղի ունեցողի վերաբերյալ:

### Հիշել

Հարցազրույցի ընթացքում Դուք պարտավոր եք լինել ուշադիր և կենտրոնացած: Դուք չպիտի օգտագործեք բջջային հեռախոս, որի ձայնը պետք է անջատեք: Դուք պետք է նաև խուսփեք հորանջելուց և ցույց տալուց, թե հետաքրքրված չեք կամ ձանձրանում եք: Ուշադրություն դարձրեք Ձեր մարմնի լեզվին: Պրոֆեսիոնալ առումով ճիշտ է, երբ Դուք նստում եք ուղիղ, այլ ոչ թե մեկնվում, ասես Ձեր տանն եք:

### 6. Պէտք է, արդյոք, ներկայացնեմ ինձ

Եթե հանգամանքները թույլ են տալիս, Դուք պետք է հնարավորություն ունենաք ներկայացնելու Ձեր և բացատրելու, թե Դուք ով եք, ինչ եք պատրաստվում անել և ինչ չեք պատրաստվում անել՝ թարգմանչի բացման խոսքի միջոցով:

## Հիշել

ՄԱԿ ՓԳՀ-ի պաշտոնյան պատասխանատու է հանդիպումն իրականացնելու համար և դա կկատարի՝ համաձայն նմանատիպ հանդիպման համար պահանջված ընթացակարգի: Թարգմանչի հայտարարությունն իր բնույթով իրավական է և պետք է պարունակի տարրեր, որոնք գծում են անհրաժեշտ սահմաններ, որոնց շրջանակներում Դուք կարող եք գործել: Հայտարարությունը պետք է հնչի ինչպես հարցազրուցավարի, այնպես էլ հարցվողի լեզվով: Ձեր բացման խոսքը պետք է ներառի հետևյալ կետերը.

- Դուք կձգտեք ճշտորեն թարգմանել կողմերից յուրաքանչյուրի ասած ամեն ինչ:
- Եթե Դուք չհասկանաք կողմերից որևէ մեկին և, հետևաբար, չկարողանաք թարգմանել, ապա կխնդրեք կողմին կրկնել իր խոսքը:
- Ձեզ չի թույլատրվում Ձեր կարծիքն արտահայտել մասնակիցներից որևէ մեկի կողմից արված հայտարարությունների վերաբերյալ:
- Ձեզ չի թույլատրվում տեղեկություններ տրամադրել և/կամ բացատրել մշակութային, քաղաքական, կրոնական, սոցիալական, մարդաբանական հարցերը կողմերից որևէ մեկի անունից:
- Ձեր առաջադրանքն է, իրականում, անհրաժեշտության դեպքում բացատրել ցանկացած բառի, արտահայտության և նախադասության, մասնավորապես՝ մշակույթի հետ կապված բառերի իմաստը:
- Դուք կողմերին խրախուսում եք խոսել միմյանց հետ, ոչ թե՛ Ձեզ հետ, այլ Ձեր միջոցով:
- Դուք կողմերին խրախուսում եք ուղղել հարցեր՝ ցանկացած բնույթի, որ նրանք էական կհամարեն, միմյանց, այլ ոչ թե Ձեզ:
- Կողմերը Ձեզ հետ խոսելուց առաջ պետք է տեղեկացնեն միմյանց:
- Հարցազրույցի ողջ ընթացքում Դուք կօգտագործեք միևնույն դերանունը, որն օգտագործում է խոսողը: Դուք Ձեր մասին պետք է խոսեք երրորդ դեմքով (օրինակ՝ «Թարգմանիչն ընդմիջման կարիք ունի»):
- Եթե կողմերից որևէ մեկը խնդիրներ ունի հասկանալու Ձեզ, կամ հարմարավետ չի զգում, երբ Դուք թարգմանում եք իրեն, նա պետք է առաջին իսկ հնարավորության դեպքում բարձրաձայնի այդ մասին:

## Հարցեր

- Որո՞նք են *փոխաբերությունները*: Որո՞նք են *մեղմասացությունները*:
- Կարող ե՞ք նշել *հուզականորեն հագեցած լեզվի* օրինակ:

## 7. Հավանական է արդյոք, որ թարգմանության ընթացքում բախվեմ խոչընդոտների

Ստորև ներկայացված են թարգմանության ընթացքում առաջ եկող խոչընդոտների ամենատարածված օրինակները.

- *Դերանունների շրջում*.
- Դուք սխալ եք հասկանում խոսողին և գիտակցում եք դա նրա ասածը թարգմանելուց հետո.
- Դուք չեք հասկանում, թե ինչ է ասել խոսողը:
- Դուք հասկանում եք խոսողին, բայց գաղափար չունեք, թե նա ինչ նկատի ունի:
- Հարցվողը և/կամ հարցազրուցավարը, փոխանակ դիմելու միմյանց, խոսքը Ձեզ են հասցեագրում:
- Խոսողի բառերն արտահայտում են մշակութային տեսանկյունից ոչ պատշաճ կամ նույնիսկ վիրավորական լեզու:




- Խոսողն արտահայտում է միտք, որը հատկանշական է նրա մշակույթին:
- Խոսողի լեզուն պարզունակ է, միամիտ և քերականորեն սխալ:
- Խոսողն օգտագործում է փոխաբերություններ և մեղմասացություններ՝ նկարագրելու հասկացություններ, որոնք, զոնե նրա համար զգայուն են և/կամ հուզականորեն հագեցած:
- Խոսողի լեզուն անհարթ է հնչում:
- Խոսողը հեծկտում է, երբ փորձում է պատմություն պատմել և չի կարողանում ընդհատել իր խոսքը:

### 8. Ինչ է դերանունների շրջումը

Եթե հարցվողն ասում է՝ «ես գնացի տուն», Դուք պետք է թարգմանեք՝ «ես գնացի տուն»: Կան դեպքեր, երբ Ձեզ համար հոգեբանորեն կարող է դժվար լինել կառչել այս կանոնից, և Դուք կշրջեք դերանունները, այն է՝ երբ խոսողն ասում է «ես», Դուք կանցնեք «նա»-ի:

#### Օրինակ.



#### Հարցեր

- Ո՞րն է գլխավոր պատճառը, որ թարգմանիչը «մերժում է» օգտագործել միևնույն դերանունը, ինչ խոսողը:
- Ինչ կանեք Դուք, եթե անգիտակցաբար շրջեք դերանունները և հետո գիտակցեք դա:

### 9. Ինչ պետք է անեմ, երբ գիտակցում եմ, որ սխալ եմ կատարել

Եթե Դուք սխալ եք հասկանում խոսողին և հետո եք գիտակցում դա, ապա պետք է կողմերին տեղեկացնեք այդ մասին՝ արձանագրման համար, երկու լեզվով, հենց որ հնարավորություն ստեղծվի:

## Հարց

- Երբ կտեղեկացնեք կողմերին Ձեր կատարած սխալի մասին:

## 10. Ինչ պետք է անեն, երբ չեն հասկանում խոսողին

Երբ Դուք չեք հասկանում խոսողին, չպիտի շարունակեք թարգմանել: Դուք այդ մասին պետք է ասեք կողմերին:



## Հիշել

Ենթադրություն անելը նշանակում է, որ Դուք դատողություն եք անում և/կամ տեսակետ ունեք տվյալ դեպքի վերաբերյալ՝ առանց իմանալու բոլոր փաստերը:

## Հարցեր

- Ո՞ր լեզվով կասեք. «**Թարգմանիչը չի հասկանում**»:
- Ինչո՞ւ պետք է օգտագործեք երրորդ դեմք, երբ խոսում եք ինքներդ Ձեր մասին:
- Ինչո՞ւ թարգմանելիս երբեմն հակվածություն եք զգում ենթադրություններ անելու:
- Ինչո՞ւ է ենթադրություններ անելը մեծապես վտանգավոր, բացի այն, որ էթիկայից դուրս է:

## 11. Ինչ անել, եթե ես չգիտեմ, թե ինչ նկատի ունի խոսողը

Նույնիսկ եթե Դուք վստահ եք, որ կարող եք շարունակել թարգմանել, պետք է ընդհատեք և ասեք. «**Թարգմանիչը չգիտի X և Y բառերի իմաստը**» (երկու լեզվով): Հարցազրուցավարը կխնդրի հարցազրույցի մասնակցին՝ բացատրել ասվածի իմաստը, իսկ Դուք կթարգմանեք այն:

## 12. Հարցազրուցավարն ու հարցազրույցի մասնակիցը չեն խոսում միմյանց հետ

Սա տարածված վարքագիծ է, և դժվար է լուծում տալ այդ իրավիճակին, քանի որ ինչ-որ մեկն իրեն դուրս մղված կզգա, երբ մյուսը խոսում է ուղղակիորեն Ձեզ հետ:



**Օրինակ.**



**Հարց**

- Ինչ կանեիք այսօրինակ իրավիճակներում:

**13. Հարցազրույցի մասնակիցը և հարցազրուցավարը վիրավորում են միմյանց**

Կարող է դժվար լինել, եթե նրանց խոսքը պարունակում է մշակութային առումով անպատշաճ կամ նույնիսկ վիրավորական լեզու: Մի կողմից՝ Դուք խոստացել եք, որ կթարգմանեք այն ամենը, ինչ կասեն խոսողները: Մյուս կողմից էլ՝ Դուք տեղյակ եք, որ այն, ինչ կատարելապես պատշաճ է հնչում մի լեզվով, մյուսով կարող է հնչել կոպիտ:

**Հարց**

- Արդյո՞ք Դուք եք որոշում՝ փոխակերպել հնարավոր կոպիտ լեզուն ավելի բարեհաճ լեզվի, թե՞ ոչ:

Փորձեք չարտահայտել Ձեր հույզերը, խուճապի մի մատնվեք, կենտրոնացեք իմաստը, այլ ոչ թե բառերը թարգմանելու վրա, և թույլտվություն խնդրեք խոսողի հետ մեկ-երկու խոսք փոխանակելու, երբ՝

- հնարավոր կոպտությունը սարկազմի կամ հեզնանքի արդյունք է.
- հնարավոր կոպտությունը զայրույթի, հիասթափության, տխրության և այլ պատճառների արդյունք է.
- հնարավոր կոպտությունը բառերի վատ ընտրության հետևանք է՝ զգայուն կամ հուզակալներեն հագեցած հարցերի մասին խոսելիս, ինչպիսիք են սեռական հարցերը.
- հնարավոր կոպտությունը պարզապես անհամաձայնության արտահայտությունն է.
- հնարավոր կոպտությունը ցույց է տալիս, որ խոսողը գուցե տառապում է սոցիալական անհարմարության որևէ տեսակից, հոգեկան խանգարումից, տրավմայից և այլն.
- հնարավոր կոպտությունը կարող է պարզապես լինել խոսողի ինքնարտահայտման կերպը:



Օրինակ.



Հարցեր

- Ի՞նչ կարծիքի եք բերված օրինակում թարգմանչի կատարած թարգմանության մասին:
- Ձեր կարծիքով՝ արդյո՞ք նախընտրելի կլինե՞ր բառացի թարգմանությունը:
- Կարո՞ղ եք բերել հեգնական, սարկաստիկ և զայրացկոտ լեզվի օրինակներ, որոնք պարունակում են կրկնակի իմաստ, որը դժվար է թարգմանել:

Ձեր առաջադրանքներից մեկը՝ որպես թարգմանիչ, թույլ չտալն է, որ մարդկանց միջև թյուրըմբռնում լինի հաղորդակցության ընթացքում: Մատնանշելը, որ խոսողի բառերի տակ գուցե զայրույթ է, սարկազմ, հիասթափություն կամ բառային անհաջող ընտրություն, կարող է լուծում լինել: Միևնույն ժամանակ՝ հավանաբար նախքան բառացի թարգմանություն կատարելը, ճիշտ կլինի նախ կրկնակի ստուգել, որ խոսողն իսկապես մտադիր է օգտագործել վիճակորակա՞ն լեզու:

Գլուխ 1

14. Իմ դերը՝ որպես մշակութային միջնորդ, դեռևս հստակ չէ

Եկեք ենթադրենք, որ խոսողն օգտագործել է «եղբայր» բառը և որ, ըստ նախադասության կառուցվածքի, Դուք դրան որոշակի իմաստային մակարդակ եք վերագրել դրան, թեպետ նա դեռևս հավելյալ մանրամասներ չի հաղորդել: Դուք պետք է ժամանակ տրամադրեք բացատրելուն, փոխանակ թույլ տալու, որ թյուրըմբռնում տեղի ունենա: Պարզ բառերը, ինչպիսիք են եղբայրը, ընտանիքը և այլն, տարբեր մշակույթներում կարող են փոխանցել շատ տարբեր նշանակություններ: Թարգմանչական վարքագծի հետևյալ երկու տեսակները ցույց են տալիս, թե այս իրավիճակում որտեղով են անցնում Ձեր մասնագիտական սահմանները.

Օրինակ 1.



## Օրինակ 2.



### Հարցեր

- Ո՞ր թարգմանությունն է ճիշտ:
- Համաձայն եք, որ առաջին օրինակում տրված տեղեկությունը պետք է դուրս գար հարցազրույցի մասնակցից, այլ ոչ թե թարգմանչից:

### Հիշել

Երբեք մի ստանձնեք մարդաբանի, սոցիոլոգի կամ պատմաբանի դեր: Դուք պետք է սահմանազատեք բառի մշակութային արժեքի բացատրությունը մշակութային, քաղաքական կամ կրոնական հարցերի վերաբերյալ տեղեկություն կամ բացատրություն տրամադրելուց:

### Եվս մեկ հարց

- Ձեզ հայտնի են, արդյոք, այս կանոնից բացառություններ:

## 15. Կարո՞ղ եմ, արդյոք, հղկել վատ լեզուն

Հասկանալի է, որ դժվար է զսպել այդպես վարվելու գայթակղությունը: Այսուհանդերձ, Ձեր վերջնական նպատակը ճշգրտությունն է, իսկ ճշգրտությունը պետք է հիմնված լինի միայն ու միայն խոսողի բառերի և դրանց իմաստի վրա:

### Հարց

- Ինչո՞ւ Դուք կգունազարդեիք կամ կհղկեիք խոսողի լեզուն:

## 16. Խոսողը կարծես օգտագործում է մեղմասացություններ և փոխաբերություններ

Այսօրինակ բառերն ու արտահայտությունները կարող են համընկնող տարբերակներ չունենալ թիրախային լեզվում: Դուք պետք է խուսափեք դրանք թարգմանել այն իմաստով, ինչ Ձեր կարծիքով դրանք նշանակում են:



## Օրինակ.



## Հարցեր

- Ձեր կարծիքով՝ ինչ նկատի ունեք հարցվողը:
- Արդյո՞ք թարգմանչի վերաբերմունքը ճիշտ էր: Կար՛ էլի ինչ-որ բան, որ նա կարող էր արած լինել:

Փոխաբերություններն ու մեղմասացությունները կարող են դժվար հասկանալի լինել և ունենալ բազմակի իմաստներ, որոնք Դուք կարող եք չիմանալ: Դրանք հաճախ օգտագործվում են, երբ խոսակցության թեման հատկապես զգայուն է, գոնե խոսողի համար:

## 17. Խոսողի խոսքն այնպիսի տպավորություն է թողնում, ասես այն ոչ մի իմաստ չի արտահայտում:

Եթե սա տեղի է ունենում հարցազրույցի սկզբում, Դուք կարող եք դիտարկել խոսողին մի քանի րոպե շարունակելու հնարավորություն տալու տարբերակը, և այնուհետև որոշել, թե ինչ անել: Եթե դա տեղի է ունենում հարցազրույցի մեջտեղում, դա կարող է նշան լինել, որ խոսողն ընդմիջման կարիք ունի, կամ չի կարող խոսել որոշակի բաների մասին: Պարզապես ասեք, որ դու անկարող եք թարգմանել խոսողի անկապակցված խոսքի պատճառով:

## Հիշել

Չկապակցվածությունը կարող է ի հայտ գալ հոգնածության կամ ուժեղ զգացմունքների պատճառով, կամ՝ լեզվին վատ տիրապետելու կամ հոգևոր խառնաշփոթի/խանգարման պատճառով: Չկապակցված խոսքը չի կարող թարգմանվել, և Դուք պետք է առանց վարանման ասեք այդ մասին: Երբեք մի փորձեք իմաստ հորինել կամ բացատրություն տալ: Այս անգամ Դուք պետք է գործեք բանավոր թարգմանչի Ձեր դերի սահմաններում, այլ ոչ թե նեյրոլինգվիստի կամ հոգեբանի:

## 18. Խոսողը շարունակում է արտասվել և խոսել: Ինչ պետք է անեն:

Փորձը ցույց է տալիս, որ Դուք չպիտի ընդհատեք նրան. դիմեք ամփոփ ներկայացնող թարգմանության, երբ նա դադար է տալիս: Այսօրինակ իրավիճակներում օգտակար է նշումներ կատարելը:



### Հարցեր

- Այս պահի դրությամբ Դուք բավականաչափ բան գիտեք բանավոր թարգմանության մասին, որպեսզի ուրվագծեք անձնական ռազմավարություն այսպիսի իրավիճակների համար: Ո՞րը կլինի Ձեր ռազմավարությունը (մոտեցումը):
- Ձեր կարծիքով՝ պետք է արդյոք ռազմավարությունը նախապես քննարկել Ձեր ղեկավարի հետ:

### 19. Ինչ պետք է անեմ հարցազրույցի վերջում

Սա հանդիպման կարևոր փուլերից է, քանի որ կարող է տրվել կոնկրետ տեղեկություն հարցազրույցի արդյունքի վերաբերյալ: Այժմ Դուք չպիտի թուլանաք: Նույնիսկ եթե հոգնած եք, փորձեք պահպանել Ձեր կենտրոնացումը և ցույց տալ, որ պատրաստ եք թարգմանել ցանկացած կարևոր հարց, որ նրանք կարող են դեռևս ունենալ:

Այս փուլում խորհուրդ է տրվում անցկացնել ամփոփիչ կարճ նիստ: Նաև կարճ դադար վերցրեք և մի քանի նշում կատարեք Ձեր գրանցամատյանում:

## Գլուխ II. Գործնական հարցեր

### Այս բաժնում Դուք կհմանաք, թե

- ինչպես տարածքը կիսել այլ մարդկանց հետ և կառավարել մշակութային բաղադրիչները.
- թարգմանելիս որտեղ պետք է նստեք.
- ինչպես վարվել որոշ տարածված թագմանչական իրավիճակներում.
- ինչպես անցկացնել որոշակի տեսակի հարցազրույցներ.
- ինչպես թարգմանել երեխաների համար.
- հանդիպման ժամանակ բանավոր թքարգմանության հիմնադրույթներ:

### Ա. Հարցազրույցի մասնակցի և հարցազրուցավարի հետ միասին նստելը

#### 1. Ինչ նշանակություն ունի մշակութային բաղադրիչը

Փախստականի մշակույթի և անցած ուղու նկատմամբ նրբանկատ լինելը շատ կարևոր է: Օրինակ՝ իգական սեռի փախստականը կարող է ավելի հարմարավետ զգալ խոսելով իգական սեռի հարցազրուցավարի հետ՝ իգական սեռի թարգմանչի միջոցով, թեպետ սա միշտ չէ, որ այդպես է: Շատ կին փախստականներ, փաստացի, չեն կամենում խոսել տղամարդ թարգմանիչների և հարցազրուցավարների հետ, և հակառակը:

#### Օրինակ 1.



Գլուխ 2

ԱՄՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ



**Օրինակ 2:**



**Հարցեր**

- Պետք է հարցազրույցի ենթարկվի մի կին փախստական, և Դուք հասանելի միակ թարգմանիչն եք: Դուք տղամարդ եք: Հարցազրույցի ժամանակ զգացողություն ունեք, որ նա չի վստահում Ձեր՝ գուցե ընդհանուր առմամբ տղամարդկանց հետ կապված իր փորձառության պատճառով: Ինչպե՞ս կվարվեք:
- Ինչո՞ւ է վերոնշյալ օրինակում հարցազրույցի տղամարդ մասնակիցը վախենում, որ թարգմանիչը ոչինչ չգիտի քաղաքականության մասին:
- Արդյո՞ք երբևէ լսել եք կարծիք, որ կանանց չպիտի հնարավորություն տրվի ստանձնելու կարևոր դերեր, ինչպիսին է թարգմանչի դերը:


**Հիշել**

Բանավոր թարգմանիչները հաճախ ընկալվում են որպես մեծ իշխանություն ունեցող անձինք: Սա հասկանալի է, քանի որ հայցվորները կարող են զգալ, որ դեպի իրենց համար անհասկանալի լեզու թարգմանությունն իրենց վերահսկողությունից դուրս է:

**2. Ինչպիսի՞ն պետք է լինի նստելու դասավորությունը**

Այն, թե որտեղ եք նստում, կարող է ազդեցություն ունենալ հարցազրույցի արդյունքի վրա: Թեպետ չկան խիստ կանոններ, թե Դուք որ դիրքում պետք է նստեք, սակայն պետք է նստեք ինչպես հարցազրուցավարի, այնպես էլ հարցվողի կողքից և փոքր-ինչ հեռու երկուսից էլ:

**Օրինակ.**



**3. Որտե՞ղ չպիտի նստի թարգմանիչը**

Թարգմանիչը երբեք չպիտի նստի հարցազրուցավարի և հարցվողի միջև:

Օրինակ.



Հարց

- Այն պրակտիկան, երբ հարցազրուցավարն ու հարցվողը նստում են դեմ դիմաց, իսկ թարգմանիչը՝ հարցվողի հետևում, անհայտ չէ: Այս դասավորությունն օգտագործողները պնդում են, որ այն թարգմանչին դրդում է չեզոք լինել: Ինչ կարծիքի եք դուք:


4. Կանն արդյոք դասավորություններ, որոնք հնարավոր է, որ խնդրահարույց լինեն

Հաճախ այն միջավայրը, որտեղ հարցազրույցը տեղի է ունենում, թույլ չի տալիս ունենալ կատարյալ դասավորություն, ինչպես նկարագրվեց վերը: Կարող է բավարար տեղ չլինել, կամ գուցե գրասենյակի կահույքն այնպես է դասավորված, որ մարդիկ նստեն այնտեղ, որտեղ կարող են: Այլ անգամներ նստելու դասավորությունը բոլորովին անտեսվում է: Ամեն դեպքում, հետևյալ երկու դասավորությունները պետք է կիրառվեն զգուշությամբ.

Գլուխ 2

Օրինակ 1.

Օրինակ 2.



ԱՄՊՄԻՎ



### Հարց

- Որո՞նք են այս երկու դասավորությունների թեր և դեմ կողմերը:

### 5. Պենտք է, արդյոք, թարգմանեմ բացարձակապես ամեն ինչ

Դուք պետք է խուսափեք թե՛ հարցազրույցի մասնակցի, թե՛ հարցազրուցավարի հետ խոսակցությունից, բացառությամբ եթե հանգամանքներն այլ բան չեն թելադրում, և երկու կողմերի լիակատար համաձայնության պարագայում: Պենտք է թարգմանվի ցանկացած տեսակի հարց, ներառյալ այնպիսիք, որոնք ինչ-որ հատուկ առնչություն չունեն հարցազրույցի հետ:

### Օրինակ.



### 6. Ի՞նչ անել, եթե կողմերից մեկն ինձ ներգրավում է խոսակցության մեջ

Այս դեպքում Դուք պետք է միշտ ձգտեք թույլ չտալու, որ որևէ մեկը դուրս մղված կամ մեկուսացված զգա իրեն: Եթե տեղի է ունենում այդպիսի խոսակցություն, ապա Դուք պետք է ներկայացնեք դրա ամփոփ նկարագրությունը:

### 7. Որքան ժամանակ պետք է խոսողին թույլ տամ խոսել

Կարևոր է սահմանել բանավոր խոսքի հատվածի մի այնպիսի ստանդարտ տևողություն, որի դեպքում Դուք Ձեզ հարմարավետ կզգաք: Սա կտարբերվի՝ կախված թեմայի բարդությունից, խոսողի՝ մտքերն արտահայտելու հստակությունից և որպես թարգմանիչ Ձեր ունեցած փորձից: Թեպետ Դուք եք որոշում՝ երբ ընդհատել խոսողին՝ քանի դեռ տվյալ հատվածը չի դարձել չափազանց երկարաշունչ, հիշեք կապող բառերի և Ձեր հիշողության կարողության սահմանափակումների մասին:



Օրինակ.



Հարցեր

- Ի՞նչ կանեիք՝ հասկացնելու համար, որ ցանկանում եք ընդհատել խոսողին:
- Կարո՞ղ եք արդյոք լրացնել այն, ինչ հարցազրույցի մասնակիցը պատրաստվում էր ասել հարցազրուցավարին:
- Ձեր կարծիքով՝ որքան երկար կարող եք լսել որևէ մեկին՝ օգտագործելով Ձեր նոթագրությունները:

Հիշե՛լ

Տարածված կարծիք կա, որ կատարյալ հանգամանքներում Ձեր թարգմանությունը պետք է լինի մի փոքր ավելի կարճ, քան խոսողի խոսքը: Թեպետ սա կարող է վերաբերել երկկողմանի հաջորդական թարգմանությանն այնպիսի լեզուներով, որոնք շատ նման են (ինչպիսիք են, օրինակ, ֆրանսերենն ու իսպաներենը), սակայն կարող է հնարավոր չլինել, եթե աղբյուր հանդիսացող և թիրախային լեզուներն իրենց կառուցվածքով և արտահայտած իմաստով զգալիորեն տարբերվում են: Ի լրումն, շրջասության (պերիֆրազ) օգտագործումն անկասկած բառաշատության տպավորություն կթողնի՝ ասես Դուք խոսողի բառերին ավելացնելիս լինեք Ձեր սեփական բառերը:

8. Ձայնի ինչպիսի՞ տոն պետք է օգտագործեմ

Որոշ մասնագետներ կարծում են, որ թարգմանիչը պետք է մնա լիովին չեզոք՝ միայն ձգտելով որքան հնարավոր է ճշգրտորեն թարգմանել ասվածը: Այլը այն կարծիքին են, որ թարգմանիչը պետք է արտահայտչականություն դնի իր խոսքում՝ խոսողի հույզերը փոխանցելու համար:

Թեպետ մեր կարծիքով խոսողին նմանակելը սխալ է, սակայն առանձնապես լավ միտք չէ միապաղաղ, չեզոք տոն օգտագործելը: Հակառակը, Դուք պետք է տեղյակ լինեք մշակութային հետևանքների մասին, որոնք կարող են պայմանավորված լինել Ձեր կողմից թարգմանվող երկու լեզուների միջև տոնի տարբերությամբ, և համապատասխանաբար ուղղել դրանք:

Միշտ իմացեք հարցերի և պնդումների, կասկածի և ծաղրական կամ հեգնական ակնարկների միջև տոնի տարբերության մասին:




## Բ. Հարցազրույցների հատուկ տեսակներ

### 1. Արդյոք հնարավոր է կանխատեսել, թե ինչպիսին կլինի հարցազրույցը

Թեպետ անհնար է այս մոդուլում կանխատեսել և նկարագրել թարգմանության հետ կապված ամեն սցենար, խոչընդոտ կամ խոսողի անհատականությունը, սակայն Դուք կարող եք պատկերն ամբողջացնել ըստ Ձեր մասնակցությամբ տեղի ունեցած յուրաքանչյուր թարգմանության ընթացքում արված դիտարկումների և փորձառության: Մենք Ձեզ կոչ ենք անում կանոնավոր կերպով նշումներ կատարել և դրանք պահել նոթատետրում, որը Դուք կարող եք կոչել «Թարգմանչի իմ մատյան»:

Թարգմանության նիստերի ընդմիջմանը...



### 2. Ինչպե՞ս կարող է իմ՝ որպես թարգմանչի ներկայությունը վճռորոշ նշանակություն ունենալ

Ձեր ճշգրտությունը թարգմանության մեջ կօգնի հարցազրույցի մասնակցի հայցի վերաբերյալ կայացնել համապատասխան և ճիշտ որոշում: Հարցազրուցավարին և հարցվողին միմյանց հետ հաղորդակցվելու հնարավորություն ընձեռելով՝ Դուք հարցվողին կօգնեք ավելի լավ պատկերացում կազմել հետևյալի վերաբերյալ՝

- հարցազրուցավարի/ բժշկի/ խորհրդատու իրավաբանի դերը.
- ծառայությունների տեսակները, որոնք հասանելի են նրա համար.
- հարցազրույցի ընթացքում դիտարկվող խնդիր/ հիվանդության/ բժշկական ստուգման բնույթը.
- պատճառը, որի համար հարցազրուցավարը խորհուրդ է տալիս գործողությունների որոշակի հաջորդականություն, լինի դա երկրորդ հարցազրույց, թե այցելություն բժշկի կամ հոգեբանի մոտ, և այսօրինակ որոշման հետևանքները.
- փաստը, որ հարցազրուցավարի հիմնական նպատակներից մեկն է՝ հասկանալ հարցվողի կարիքները, զգացմունքները և հայացքները իր հայցի վերաբերյալ:

### 3. Կարո՞ղ եմ արդյոք դերակատարում ունենալ հարցազրույցների ժամանակ վստահություն հաստատելու հարցում

Ձեր ներկայությունն անշուշտ պետք է հուսադրող լինի: Խնդիրներ կարող են առաջ գալ, եթե հարցազրույցի մասնակիցը չի վստահում Ձեզ, հատկապես եթե նա վերապրել է խոշտանգում և վախենում է, որ իրեն շրջապատող մարդիկ, օրինակ, կառավարության գործակալներ են: Վերլուծեք՝ ինչպես եք պահում Ձեզ, խոսելու Ձեր եղանակը, և փորձեք պարզել՝ հնարավոր է արդյոք, որ ինչ-որ խոչընդոտներ եք ստեղծում, որոնք որևէ ձևով կարող են վախեցնել հարցազրույցի մասնակցին: Երբ վստահվեք հարցվողի վստահությունը, կկարողանաք հենվել դրա վրա ողջ հարցազրույցի ընթացքում:



## Հիշել

Հարցազրույցի մասնակիցն իրավունք ունի արտահայտելու իր կասկածները՝ կապված հարցազրույցից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո որպես թարգմանիչ Ձեր ներկայության հետ: Հարցվողը կարող է որոշել՝ խնդրել, որ տրամադրվեն մեկ այլ թարգմանչի ծառայություններ: Դուք երբեք չպիտի սա անձնավորեք: Հակառակը, Դուք պետք է հասկանաք, որ հարցազրույցի մասնակիցը կարող է իրեն լավ չզգալ Ձեր ներկայությամբ՝ իր կողմից Ձեր ընկալման պատճառով՝ կրոնական կամ քաղաքական կողմնորոշման, գենդերային կամ էթնիկական պատկանելության առումով:

Իմաստ չունի շարունակել թարգմանելը, եթե Դուք և հարցվողը լեզվական տարբերությունների պատճառով չեք կարողանում հասկանալ միմյանց: Այս դեպքում անմիջապես զգուշացրեք հարցազրուցավարին:

## 4. Արդյո՞ք փախստականի կարգավիճակի որոշման հարցազրույցները հարուցում են ինչ-որ հատուկ խնդիրներ

Խորհուրդ է տրվում չթարգմանել միևնույն հայցվորի համար՝ թե՛ նրանց հետ փախստականի կարգավիճակի որոշման, և թե՛ վերաբնակեցման շուրջ հարցազրույցների ժամանակ: Դուք պետք է կարողանաք հնարավոր առավելագույն չափով պահպանել Ձեր անկախությունը:

Փախստականի կարգավիճակի որոշման հարցազրույցները միշտ պահանջում են մեծ կենտրոնացում: Դրանք պահանջում են, որ Դուք իմանաք, թե ինչպես եք արձագանքում հուզական թեմաներին: Ձեր արձագանքները կարող են ազդել բանավոր թարգմանության որակի վրա: Հետևյալ օրինակները որոշ թարգմանիչների վկայություններ են այն մասին, թե ինչպես հարցազրույցի մասնակիցը բանավոր թարգմանչին անհարմար վիճակում դրեց թարգմանության ընթացքում:

### ԴԵՊԲ I



Հարցվողը մի մահմեդական տղամարդ էր, ով իր տեսակետներն էր հայտնում մեծամասնությամբ քրիստոնյա բնակչություն ունեցող հասարակության մասին: Ես քրիստոնյա եմ, սաև՝ բավականին հավատացյալ մարդ, և ինձ բոլորովին դուր չեկավ նրա ասածն այն մասին, թե ինչպես պետք է վերաբերվել կանանց: Ես սկսեցի նրան նայել և նրա մասին մտածել արհամարհանքով: Համոզված եմ՝ ճիշտ չթարգմանեցի նրա ասածները:

### ԴԵՊԲ II



Հարցվողը փախել է հետապնդումից և իր ընտանիքը թողել իր հայրենի երկրում: Եթե սա բացահայտեր ընտանիքի անդամների ինքնությունը, նրանք հավանաբար խնդիրներ կունենային: Ես էլ եմ նման փորձ ունեցել և զգացի, որ անորոշության անորոշություն եմ ավելացնում՝ հարցազրույցի ժամանակ բառերի ընտրության միջոցով:

Գլուխ 2

ԱՄԵՐԻԿԱ



ԴԵՊԲ III



Հարցազրույցի մասնակիցն իր ծագման երկրում քաղաքական ակտիվիստ է եղել: Նա հիմա էլ ներգրավված է ընդունող երկրի քաղաքական կուսակցություններից մեկի գործունեության մեջ և գտնվում է այն ռեժիմի գործակալների սպառնալիքների ներքո, որին ընդդիմանում է: Նա խիստ կարծիքի է մեկ այլ ընդդիմադիր կուսակցության մասին, որի անդամն էնք մենք, և մեզ դուր չեկան նրա ասածները: Արդյունքում՝ մենք հայտնվեցինք բավական նեղսրտած վիճակում:

ԴԵՊԲ IV



Հարցվողը շատ բաների միջով է անցել՝ իր հայրենիքը լքելու համար: Նրա պատմությունը բազմաթիվ հուշեր արթնացրեց, և ես սկսեցի (սկզբում անգիտակցաբար) օգնել նրան: Ինչ-որ փուլում ես սուսկ ցանկանում էի, որ նա փախստականի կարգավիճակ ստանա, և ես հենվեցի անանատիպ հայցերի հարցում իմ անձնական փորձի վրա՝ հարցազրուցավարին ասելով այն, ինչ իմ կարծիքով նա կցանկանար լսել հայցի վերաբերյալ դրական կարծիք արտահայտելու համար: Ես դադարեցրի թարգմանելը և ուղղակի սկսեցի խոսել նրա անունից:

Հարց

- Դատողություններից ձեռնպահ մնալն ու հարցազրույցի ժամանակ Ձեր լսածից մեկուսի լինելը կարող է դժվար խնդիր լինել: Փախստականի կարգավիճակի որոշման հարցազրույցները պահանջում են, որ Դուք պահպանեք լիակատար չեզոքություն: Ինչ եք կարծում՝ արդյո՞ք դա Ձեր ուժերի սահմաններում է:

Փախստականի կարգավիճակի որոշման նպատակով անցկացվող հարցազրույցները նույն-պես պահանջում են, որ Դուք՝

- տեղյակ լինեք ՄԱԿ ՓԳՀ-ի՝ փախստականների պաշտպանության մանդատի մասին.
- տեղյակ լինեք փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգին, որն իրականացվում է կառավարությունների կողմից կամ ՄԱԿ ՓԳՀ-ի գրասենյակներում.
- իրազեկ լինեք փախստականի կարգավիճակի որոշման տերմինաբանությանը, որն ամենայն հավանականությամբ օգտագործվելու է.
- իմանաք Ձեր պարտականությունները գաղտնիության և անկողմնակալության առումով:

Հիշել

- Խոսեք Ձեր ղեկավարի հետ, եթե զգում եք, որ իրազեկ չեք այս ամենի վերաբերյալ:

Ստորև ներկայացված կետերի կատարումը պահանջվում է Ձեզնից՝ գաղտնիության և անկողմնակալության առումով.

- Դուք պետք է հրաժարվեք գնահատել հարցվողի արժանահավատությունը և/կամ հետաքննեք հայցվորի կողմից ներկայացված ապացույցները:

- Դուք երբեք չպիտի աջակցեք հարցազրույցի մասնակցին և խոսեք հոգուտ նրա կամ նրա անունից:
- Դուք չպիտի խորհրդատվություն տրամադրեք հայցվորների կամ խորհուրդներ տաք նրանց իրենց հայցի վերաբերյալ:

## Հիշե՛լ

Աշխատանքային օրվա սկզբին սովորություն դարձրեք աչքի անցկացնել Ձեր «Ինքնուսուցման ուղեցույցը» և Վարքագծի կանոնագիրքը, եթե կասկածներ ունեք Ձեր՝ որպես փախստականի կարգավիճակի որոշման հարցազրույցի թարգմանչի դերի կապակցությամբ: Երբ զգաք, որ կասկածներ ունեք, առաջին իսկ հնարավորության դեպքում խոսեք Ձեր ղեկավարի հետ և պարտադիր՝ նախքան փախստականի կարգավիճակի որոշման թարգմանության նիստին մասնակցելը:

## 5. Ինչ անեմ, եթե ինձ դիմեն՝ թարգմանելու բժշկի համար

Իմանալը, թե ինչպես վարվել հուզական իրավիճակների դեպքում, Ձեզ հնարավորություն կտա թարգմանելու նաև բժիշկների, խորհրդատու իրավաբանների և ՄԱԿ ՓԳՀ այլ պաշտոնյաների համար, ում անհրաժեշտ է խոսել փախստականների հետ կամ՝ կապված փախստականի կարգավիճակի որոշման վերաբերյալ նրանց հայցի հետ, կամ՝ հանգամանքների բերումով, ինչպես, օրինակ, «խոշտանգման զոհ» հետազոտությունների ժամանակ:

## Հիշե՛լ

Չնայած իրավական միջավայրում իրականացվելու հանգամանքին՝ այս հանդիպումների բնույթը, եթե խստորեն արտահայտվենք, իրավական չէ: Այն ավելի շատ ուղղակիորեն կապված է հարցազրույցի մասնակցի անմիջական ֆիզիկական և հոգևոր բարեկեցության հետ: Հետևաբար, Ձեզ կարող են խնդրել, որ կիրառեք բանավոր թարգմանության՝ հաճախորդին առավել հարմարեցված մոտեցում, որպեսզի մտքում ունենաք այն, ինչ քննարկվում է «Բանավոր թարգմանության հիմնական ընթացակարգերում» և կիրառեք հաջորդական թարգմանության եղանակը:

Գլուխ 2

ԱՄԵՐԻԿԱ

Բժշկական հարցազրույցների ընթացքում և այնպիսի արտակարգ իրավիճակներում, ինչպիսին են բնական աղետները, փախստականների ճամբարներում, պատերազմական գոտիներում և սահմանային տարածքներում, որտեղ կարող են մարդկանց զանգվածային տեղաշարժեր կամ տեղահանություններ լինել, թարգմանչի կարեկից վերաբերմունքը հատկապես կարևոր է: Օրինակ՝ Դուք պետք է ապահովեք, որ հանդիպումը տեղի ունենա այնպիսի միջավայրում, որը համապատասխանում է հարցվողի հատուկ կարիքներին: Նման իրավիճակներում միշտ նախապես կատարեք պլանավորում՝ հարցազրույցավարի հետ միասին:

## 6. Ինչ կատարեք հոգեբույժների և իրավաբանների համար թարգմանելու մասին

Բազմաթիվ համայնքներում հոգեկան հիվանդության քննարկումը տարու է, և հոգեկան հիվանդություն ունեցողները կարող են *խարանվել* իրենց համայնքների կողմից: Եթե վիճակն այսպիսին է այն համայնքում, որտեղ ապրել է տվյալ հարցազրույցի մասնակիցը, ապա նա կարող է անբարյացկամորեն ընդունել հոգեբույժի հետ քննարկման ընթացքում թարգմանչի



ներկայության փաստը: Թեպետ Ձեր անցած վերապատրաստման դասընթացների և խորհրդատու իրավաբանների համար թարգմանելու Ձեր փորձի շնորհիվ Դուք պետք է որ կարողանաք շահել հարցվողի վստահությունը, սակայն Ձեր ծառայություններից կարող են հրաժարվել, եթե Դուք հարցվողի համայնքից եք, իսկ հարցազրուցավարին չի հաջողվում համոզել նրան, որ Դուք կարող եք պրոֆեսիոնալ աշխատանք կատարել:

Հիմնականում հոգեբաններին խորհուրդ է տրվում սեռական և գենդերահեն բռնության հետ կապված քննարկումների համար չվարձել թարգմանչի, ով հարցազրույցի մասնակցի համայնքից է, բացառությամբ արտակարգ իրավիճակների: Ի լրումն, խորհրդատու իրավաբաններից խստորեն պահանջվում է թարգմանիչ վարձելուց առաջ հաշվի առնել հատուկ կարիքներ ունեցող հարցվողի տարիքը, սեռը, կրոնը և մշակութային պատկանելությունը:

### Հիշել

Բանավոր թարգմանիչների շրջանում միտում կա բժշկական/իրավաբանական նիստերի ընթացքում քննարկելու հարցազրուցավարի անունից: Սա տեղի է ունենում թարգմանչի՝ օգտակար լինելու պատրաստակամության, հիվանդի բժշկական պատմության իմացության արդյունքում, ինչպես նաև նրա զգացողության, որ իրավաբանը/ բժիշկը չի հասկանում հիվանդի ասածը (կամ թարգմանչի ասածը), և՛ թարգմանչի դերի թյուրըմբռնման հետևանքով: Փորձեք մտածել Ձեր մասին՝ որպես թարգմանչի և մշակութային լեզվի միջնորդի, և զգուշավորություն հանդես բերեք՝ Ձեր մասնագիտության սահմաններից դուրս չգալու համար:



### Հարցեր

- Արդյո՞ք թարգմանիչը լավ աշխատեց, թե՞ խախտեց որոշ սահմաններ:
- Ձեր կարծիքով՝ արդյո՞ք բժիշկը օգտակար համարեց թարգմանչի հավելված տեղեկությունը:
- Արդյո՞ք պատահում է, որ երբեմն Դուք Ձեր սեփական փորձը տարածեք հարցազրույցի մասնակցի բառերի վրա և թարգմանեք համապատասխանաբար:

## 7. Ինչ հատուկ տերմինաբանություն պետք է ես սովորեմ:

Դուք պետք է ծոնաթանաք փախստականի կարգավիճակի որոշման և բժշկական տերմինաբանությանը Ձեր աշխատանքային լեզուներից յուրաքանչյուրում: Այս նպատակով նոր բաժին բացեք Ձեր բառարանում և այդ բաժինը բաժանեք հետևյալ ենթաբաժինների.

## ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՈՐՈՇՄԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- ՄԱԿ ՓԳՀ-ի գրասենյակներում օգտագործվող իրավաբանական եզրույթեր.
- քաղաքական, կանոնավոր ռազմական, ոչ կանոնավոր ռազմական և կրոնական կազմակերպությունների անվանումներ
- երկրների, տարածաշրջանների, տարածքների, քաղաքների անվանումներ.
- քաղաքական, կանոնավոր ռազմական, ոչ կանոնավոր ռազմական և կրոնական առաջնորդների անուններ.
- մշակութային հարցերին, սովորույթներին, ավանդույթներին վերաբերող բառերը.
- հասկացություններ, որոնք առնչվում են ժամանակին (օրինակ՝ օրացույցներ), տարածությանը (հեռավորություններ), շրջակա միջավայրին (հատուկ տեսակի շենքերի, բուսականության, կենդանիների և այլ անուններ).
- միջոցառումների, փառատոների, արարողությունների (քաղաքական և կրոնական) անվանումներ.
- ցանկացած տեսակի տաբուների հետ կապված հասկացություններ, հատկապես՝ եթե դրանք կապված են գենդերային հարցերի հետ:

## ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- մարդու մարմնի մասեր.
- որոշ ամենակարևոր օրգանների անուններ.
- տարածված և պակաս տարածված հիվանդությունների անուններ (այստեղ Դուք պետք է որոշ հետազոտություն անեք. Ձեր աշխատած ոլորտից որևէ բժշկի խնդրեք օգնել Ձեզ).
- դեղերի անուններ, այդ թվում՝ ավանդական դեղամիջոցների և բուժումների.
- խոշտանգման եղանակների անուններ և դրանց նկարագրությունը.
- տարածված իդիոմների (խոսվածքների), փոխաբերական արտահայտությունների և մեղմասացությունների ցանկ, որոնք սովորաբար օգտագործվում են ցանկացած լեզվում (և լեզվի բարբառներում), երբ խոսելիս նկարագրում եք ախտանիշեր, բողոքներ, հիվանդություններ և այլն: Երբեմն հարցազրուցավարը պետք է քննարկի հարցեր, որ կարող են համարվել մեծապես անձնական և հնարավոր է՝ ամոթալի, կամ նույնիսկ՝ արգելված:

Գլուխ 2

ԱՆՈՒՄԻՆ

## Գ. Երեխաների համար բանավոր թարգմանելը

### 1. Պե՞տք է, արդյոք, որ երեխաները հարցազրույցի ենթարկվեն առանց պատշաճ պլանավորման

Ոչ: Երեխաների բարեկեցությունն ամենակարևորն է, և փախստական երեխաները կարող են տուժել սոցիալ-հոգեբանական զարգացման խանգարումներից՝ իրենց փորձառության պատճառով, ինչպիսին է քաղաքացիական պատերազմից քայքայված երկիրը լքելը: Ոչ ոք չպիտի դիմի երեխաներին հավելյալ տրավմայի ենթարկելու ռիսկին՝ կուրորեն կիրառելով ստանդարտ հարցազրույցի ընթացակարգերը: Հոգեբանը պետք է գնահատի երեխայի զարգացումն ըստ իր տարիքի նորմերի, ինչպես նաև՝ տրավմայի հնարավոր հետևանքների առումով, և այդ արդյունքները հարցազրույցի մեկնարկից առաջ ներկայացնի հարցազրուցավարին:



## 2. Ինչո՞ւ է կարևոր երեխաների հետ աշխատելիս հատուկ հոգածություն հանդես բերելը

Երեխաների և դեռահասների հետ աշխատելը հատուկ հոգածություն է պահանջում, քանի որ.

- երեխաները միաժամանակ ծայրահեղ ուժեղ և խոցելի են: Շատ կարևոր է իմանալ, թե ինչպես վարվել երեխաների հետ, քանի որ նրանք կարող են վախենալ ցանկացած մեկից, ով իրենց ընտանիքի անդամ չէ.
- հարցազրույցի մասնակիցը կարող է եղած լինել մանկահասակ զինվոր և/կամ հարկադրաբար իր ընտանիքից զատված: Այն փաստը, որ նրա հարաբերությունը չափահասների հետ, ընդհանուր առմամբ, հավանաբար ձևավորվել է այս փորձառությունից, կարող է պահանջել այնպիսի թարգմանիչ, ով ծանոթ է խնդրին.
- երեխաները երբեմն ինքնարտահայտվում են յուրովի, ինչը պահանջում է ինչպես թարգմանիչ և հարցազրուցավարի միջև բարձր մակարդակի համագործակցություն, այնպես էլ թարգմանիչ կարողությունը՝ հասկանալու երեխայի փորձառությունները.
- երեխաները կարող են անգիտակցաբար մերժել իրենց մայրենի լեզուն և հետևաբար՝ իրենց մշակույթը, եթե տեղահանության պատճառով զրկված են եղել համայնքի շրջանակներում հուզական, սոցիալական և գիտակցական զարգացում ապրելու հնարավորությունից:

### Հիշե՛լ

Որևէ մեկի ապրումները հասկանալը կարող է ենթադրել՝ զգալ նույնը, ինչ նրանք: Այս վերաբերմունքը համեմատեք այլ մարդկանց համար ցավ ապրելու հետ, ովքեր տառապում են, հատկապես, երբ Ձեզ ծանոթ է այսպիսի տառապանքը:

### Հարցեր

- Պե՞տք է, արդյոք, թարգմանիչները ապրումակցեն կամ կարեկցեն երեխաներին: Ի՞նչ կասեք ընդհանրապես հարցազրույցի մասնակիցների մասին: Կամ՝ ոչ մեկը, ոչ մյուսը, քանի որ ներգրավվելու վտանգ կա: Բառարանում նայեք այս երկու բառերի իմաստները:
- Եթե հարցազրույցի մասնակիցը երեխա է, ապա ի՞նչ ռազմավարություններ կմշակեիք՝ ապահովելու Ձեր բանավոր թարգմանության հաջողությունը:

## 3. Կա՞մ, արդյոք, որևէ ստանդարտ ընթացակարգ, որին ես պետք է հետևեմ

Ցավոք, ստանդարտ ընթացակարգ գոյություն չունի: Այն, ինչ Դուք կարող եք անել, դա հարցազրույցին նախորդող փուլում, որի ժամանակ հարցազրուցավարը հոգեբանի օգնականի հետ պլանավորում է հարցազրույցը, համաձայնության գալն է Ձեր ղեկավարի հետ՝ թույլ տալու երեխային խոսել այնքան, որքան նա ցանկանում է՝ առանց ընդհատումների, անկախ այն բանից, թե որքան հատվածական կամ կցկտուր կարող է լինել նրա խոսքը: Ավելի շատ հենվեք նոթագրման և ամփոփ ներկայացման վրա, քան հաջորդական թարգմանության:

Շատ ավելի մեղմ եղեք թարգմանելու Ձեր մոտեցման մեջ, քան եթե կլինեիք, երբ թարգմանելիս լինեիք փախստականի կարգավիճակի որոշման հարցազրույց մեծահասակի համար: Մի վախեցեք երեխայի մոտ տպավորություն ստեղծել, որ ինքը մասնակցում է զրույցի, այլ ոչ թե հարցազրույցի: Նաև՝ հարցազրույցն օգտագործեք որպես հնարավորություն՝ հարցազրուցավարի համագործակցությամբ երեխայի հետ փոխհամաձայնության գալու նպատակով:

#### 4. Պե՞տք է, արդյոք, երեխայի հետ օգտագործեմ որոշակի տեսակի լեզու

Հարկ կլինի, որ թարգմանելիս Դուք որքան հնարավոր է՝ պարզունակացնեք լեզուն: Դուք կարող է նաև ստիպված լինեք միևնույն միտքը կրկնել մի քանի անգամ: Դուք պետք է ժպտաք այս անելիս՝ ցույց տալու երեխային, որ ոչ մի սխալ բան չկա ասածը կրկնելու մեջ: Դուք նաև գուցե ցանկանաք հարցազրուցավարի մեկնաբանությունները/ հարցերը/ խրախուսումները կազմակերպել տեքստի փոքր միավորների տեսքով և օգնել դրանք ավելի հասկանալի դարձնել՝ մարմնի լեզվի և այլ միջոցներով, ինչպիսիք են նկարները:

Հարցազրուցավարը կարող է ստիպված լինել «մի կողմ քաշվել» ավելի երկար ժամանակով, քան նա կաներ, եթե փախստականի կարգավիճակի որոշման հարցազրույց անցկացնելիս լինեք մեծահասակի հետ, քանի որ Դուք ամենայն հավանականությամբ զրույցի կրճուկեք երեխայի հետ: Այդ դեպքում Դուք պետք է հարցնեք երեխային. «Դեմ չե՞ս, եթե ես հարցազրուցավարին պատմեմ, թե ինչի մասին խոսեցինք հենց նոր», - և ապահովեք, որ երեխան անելիք ունենա, մինչ Դուք հարցազրուցավարի համար կթարգմանեք երեխայի հետ Ձեր զրույցը:

Հարցազրուցավարները և բանավոր թարգմանիչները պետք է ծանոթ լինեն երեխաների հետ հարցազրույց վարելու և նրանցից վկայություններ հավաքագրելու մեթոդների վերաբերյալ առկա ուղեցույցներին:

### Դ. Հանդիպումների ժամանակ թարգմանելը

#### 1. Ի՞նչ է հանդիպումների թարգմանությունը

Եթե Ձեզ խնդրում են թարգմանել մարդկանց երկու խմբի համար (խմբային) հանդիպման ընթացքում, որտեղ խմբերից յուրաքանչյուրը խոսում է տարբեր լեզվով, Դուք պետք է փորձեք տեսնել, թե արդյոք հնարավոր է, որ խմբերը ներկայացնող ելույթ ունեցողները ընդհատեն խոսքն ամեն երկու նախադասությունը մեկ՝ հնարավորություն տալով Ձեզ՝ իրականացնել հաջորդական թարգմանություն: Եթե սա հնարավոր է, դիրքավորվեք սենյակի անկյունում և միկրոֆոն խնդրեք:

Եթե սա հնարավոր չէ, քանի որ մարդիկ հանդիպման ընթացքում մասնակցելիս են լինելու բանավեճի, և հետևաբար չեն կարող հանուն թարգմանիչի ընդհատել խոսքը ամեն երկու նախադասությունը մեկ, Դուք կարող եք կիրառել *կիսահամաժամանակյա ցածր ձայնով* թարգմանության և *ամփոփիչ* թարգմանության համադրությունը: Դուք պետք է կատարեք հետևյալ քայլերը.

- խոսողներին խնդրել՝ խոսել որքան հնարավոր է դանդաղ.
- հավաքել բոլոր մարդկանց, ում համար թարգմանում եք, սեղանի շուրջ և դիրքավորվել սեղանի հետևում, որպեսզի դրա շուրջ նստած մարդիկ նայեն խոսողին, այլ ոչ թե Ձեզ.
- սկսել թարգմանել, հենց որ խոսողն ավարտում է իր առաջին նախադասությունը.
- օգտագործել դանդաղ, կանոնավոր տոն (sotto voce - շշնջոց)՝ ի շահ այն անձի կամ անձանց, ում համար թարգմանում եք.
- մինչ կթարգմանեք հոռետորի առաջին նախադասությունը, լսեք երկրորդ նախադասությունը, մտապահեք այն և պատրաստ եղեք թարգմանելու, երբ նա ավարտի: Շարունակեք թարգմանել այս եղանակով.
- եթե բանավեճը թեժանում է, և հոռետորները այլևս դանդաղ չեն խոսում, ինչպես խոստացել էին, Դուք ստիպված կլինեք անցնել ամփոփ ներկայացմամբ թարգմանության:

Գլուխ 2

ԱՄՈՒԿԱՆՈՒ





## ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

- Չի ենթադրվում, որ ես պետք է զբաղվեմ մշակութային առումով անպատշաճ հարցերով.  
Ճիշտ է  Սխալ է
- Եթե ինձ խնդրում են թարգմանել, ես չպիտի հավաստիանամ, որ պատրաստ եմ տվյալ աշխատանքին:  
Ճիշտ է  Սխալ է
- Գնահատողական վերաբերմունք

Կարող եք մի կողմ թողնել դատելը, անկախ այն բանից, թե ինչ եք լսում, զսպել Ձեր հույզերը և սառնորեն կենտրոնանալ խոսողի արտահայտած մտքերը լսելու, դրանք հասկանալու, վերլուծելու և թարգմանելու վրա: Ձեզնից մեկը լինելու է թարգմանիչը: Սկսեք ստորև բերված տեքստից, հետո գտեք մի քանի տարբեր տեքստեր, վարժություններ արեք և քննարկեք մինչ այժմ թարգմանության Ձեր սովորած բոլոր ասպեկտները, այդ թվում՝ լեզվական հարցերը, հիշողությունը և նոթագրումը, նստելու դասավարությունը և թարգմանության ընթացակարգը:

*(փախստական/ բուժվող հիվանդ) Ճամբարում մի ՀԿ ինձ աշխատանքի վերցրեց՝ օգնելու սննդաթերիքի բաժանման հարցում: Իմ աշխատանքն էր՝ կառավարել սննդամթերքի պահեստը և սննդի օրաբաժինը բաժանել փախստականներին: Քանի որ ՀԿ-ն չէր վերահսկում սննդամթերքի բաշխումը, ես պարբերաբար կարող էի սննդի փաթեթներ վերցնել պահեստից: Ես դրանց մի մասը տրամադրում էի ընտանիքիս և ընկերներիս: Ես մնացորդը տվել էի ճամբարից ինչ-որ աղջիկների և կանանց՝ սեռական կապի դիմաց: Իմ վերջին հարաբերությունից հետո ես անհարմարավետության զգացում ունեմ կոկորդումս: Դա խոպոտություն չէ, այլ նման է թեթև հարբուխի: Կարող է սա վարակի մաս լինել: Ես շատ եմ անհանգստանում և շատ եմ ցավում իմ արածի համար. ես գուցե կործանել եմ իմ ապագան, չէ՞: Խնդրում եմ, ասացե՞ք ինձ՝ ի՞նչ է կատարվում ինձ հետ, որովհետև այնքան շատ պատմություններ կան չպաշտպանված սեռական հարաբերությունների հետ կապված վրանգների մասին: Այս ախտանշանների պատճառով ես վախենում եմ, որ ՄԻԱՎ եմ ձեռք բերել:*

*(բժիշկ) Ցավոք, ճշմարտությունն այն է, որ եթե փախստական կինը/աղջիկը, որի հետ հարաբերություն եք ունեցել, ՄԻԱՎ դրական է եղել, ապա Դուք Ձեզ վրանգի եք ենթարկել: Ձեր ներկայացրած հանգամանքներից անհնար է ասել՝ արդյոք նա եղել է ՄԻԱՎ վարակակիր: Դժվար է հաշվարկել վրանգի աստիճանը, սակայն նույնիսկ եթե նա ՄԻԱՎ դրական է, 100 տոկոսով հավաստի չէ այն, որ Դուք ձեռք կբերեք վարակը: Որոշ հստակության հասնելու ձևերից մեկն է գնալ և արյան մեջ վիրուսի առկայության թեստ հանձնել (սա ստանդարտ ՄԻԱՎ թեստ չէ, այլ այն, որ կոչվում է Polymerase Chain Reaction [PCR], արյան մեջ վիրուսի համակենտրոնացման թեստ): Սա բավականին թանկ թեստ է, բայց արդյունքը տեսանելի կլինի Ձեր վարակվելուց երկու շաբաթվա ընթացքում, եթե Դուք վարակվել եք: Եթե բավականին շուտ արվի ՄԻԱՎ-ի հնարավոր ձեռքբերումից հետո, հակառետրովիրուսային թերապիան կարող է նաև նվազեցնել վարակվելու վրանգը: Այս ամենով հանդերձ, եթե նույնիսկ Դուք վարակվել եք, դա անպայմանորեն չի նշանակում, թե կործանել եք Ձեր ապագան: ՄԻԱՎ վարակակիր բազմաթիվ մարդիկ ապրում են բեղմնավոր և երջանիկ կյանքով:*

- Խոչընդոտների հաղթահարումը  
Այս վարժության մեջ հարցազրուցավարը և/կամ հարցազրույցի մասնակիցը թարգմանչի ճանապարհին կստեղծեն որքան հնարավոր է շատ խոչընդոտներ (Մոդուլ IV) և նրան դրանք հաղթահարելու մարտահրավեր կնետեն (առանց նրան նախապես ասելու): Թարգմանիչը նշումներ կանի, թե ինչ կարող է և ինչ չի կարող հաղթահարել և կվերանայի այս ուղեցույցի համապատասխան մոդուլները: Օգտագործեք ստորև ներկայացված տեքստը և այլ նմանատիպ տեքստեր, որ կարող եք գտնել:



Բեթիի համար խնդիրներն սկսվեցին 1993-ի հունվարին: Նրա հարսը (եղբոր կինը) վեց ամսական հղի էր իր երրորդ երեխայով: Երբ կառավարությունը բացահայտեց «հանցագործությունը», նրանք եկան Բեթիի տուն, որտեղ սովորաբար ապրում էին նրա եղբայրն ու հարսը: Այդուհանդերձ, նրանք թաքնվում էին պեղծությունից, ուստի փոխարենը պաշտոնյաները ձերբակալեցին Բեթիին: Նա երկու շաբաթ պատանդ էր, մինչև որ նրա հարսը ներկայացավ: Պաշտոնյաները ձեռնաշղթաներ հագրին նրան և տարան հիվանդանոց, որտեղ նրան բռնի ուժով տարան հղիության ընդհատման սենյակ: Սենյակը հատուկ նախագծված էր այսօրինակ իրավիճակների համար, և այնտեղ կար հատուկ նպատակով տեղադրված հայելի, որպեսզի պաշտոնյաները կարողանային կնոջը հարկադրել՝ տեսնել, թե ինչպես են ընդհատում իրենց պրոդի կյանքը: Այնուամենայնիվ, ցավը, որ զգում էր Բեթիի հարսը, այնքան ծայրահեղ էր, որ բժիշկներն ի վերջո նրան անզգայացնող միջոց տվեցին՝ հղիության ընդհատման մնացած ընթացքում քնեցնելով նրան:

Այսօրինակ փորձը ոչ միայն հուզական աղետ էր Բեթիի ընտանիքի համար, այլև նրանք նաև հսկայական տուգանք մուծեցին՝ կառավարության «մեկ երեխա մեկ ընտանիքում» քաղաքականությանը չենթարկվելու համար: Այս ապրումը անջնջելի տրավմատիկություն թողեց Բեթիի վրա: Ինչ իմանար նա, որ ընդամենը մի քանի ամսից բախվելու է միևնույն հալածանքին: Տառապանքի այս ժամանակներում Բեթին հայացքն ուղղեց իր զուգընկերոջը՝ սփոփանքի համար: Իր խոցելի վիճակում Բեթին զիջեց նրա առաջարկներին՝ դուռ բացելով ավելի մեծ տրավմայի առջև:

1993 թ. մարտին Բեթին սկսեց իրեն վատ զգալ և գնաց բժշկի: Բժիշկն ասաց. «Դուք հղի եք»: Բեթիի սիրտը կանգնեց: Ի լրումն չամուսնացած լինելով հղիանալու՝ Բեթին զիպեր, որ իր տարիքը ցածր է ամուսնության և երեխա ծնելու համար պահանջվող նվազագույն տարիքից: Նրա երեխան, ինչպես և նրա եղբոր կնոջ երեխան, համարվեց «ապօրինի»: Այնուամենայնիվ, նա հրաժարվեց իր բժշկի խորհուրդ տված հղիության ընդհատումից: Ի պատասխան՝ բժիշկը նրան մատնեց կառավարությանը: Մայիսին Բեթին ձերբակալվեց և հիվանդանոց տարվեց, որտեղ նրան ասացին, որ դեղամիջոց են տալու՝ երեխային սպանելու համար: Երկու բժիշկ բռնեցին նրան՝ սրիպելով կուլ տալ հարը: Հետո գնացին՝ ասելով, որ հեղուկ կանաչով ու՛շ՝ ավարտին հասցնելու գործը: Բեթին, դեռևս վճռական տրամադրված փրկելու երեխային, խնդրեց բուժքրոջը, ով իր զուգընկերոջ ընկերն էր, օգնել իրեն փախուստի դիմել: Բուժքույրը բացեց պատուհանը, և Բեթին դուրս ցատկեց:

Գլուխ 2

ԱՄՐԱԿԱՆ

5. Թարգմանելուց առաջ ինձ պետք է համառոտ իրազեկեն հարցազրույցի մասնակցի հայցի վերաբերյալ:

Գրի առեք Ձեր մտքերը և քննարկեք դրանք Ձեր վերադասի հետ:

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

6. Գերադասելի է, որ հարցազրույցավարն ինքը ներկայացնի ինձ. եթե ես ինքս ներկայանամ, դա կլինի ժամանակատար:

Գրի առեք Ձեր մտքերը և քննարկեք դրանք Ձեր վերադասի հետ:

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

7. Եթե ես չեմ հասկանում ինչ-որ բան, պարզապես խնդրում եմ խոսողին կրկնել ասածը

Ճիշտ է  Սխալ է

8. Եթե ես սխալ եմ գործում, ես հարցազրույցի ավարտից հետո այդ մասին ասում եմ հարցազրույցավարին

Ճիշտ է  Սխալ է

# ՄՈԴՈՒԼ IV

## Գլուխ 2

9. Եթե հարցազրույցի մասնակիցը վիրավորական լեզու է օգտագործում, ես բառացի թարգմանություն եմ կատարում:

Գրի առեք Ձեր մտքերը և քննարկեք դրանք Ձեր վերադասի հետ:

---

---

10. Ճիշտ կլինի պարզունակացնել հարցազրուցավարի ասածը, եթե ես մտածում եմ, որ այլապես հարցազրույցի մասնակիցը չի հասկանա:

Գրի առեք Ձեր մտքերը և քննարկեք դրանք Ձեր վերադասի հետ:

---

---

11. Ես կարող եմ առանց որևէ խնդրի թարգմանել երեխաների համար:

Գրի առեք Ձեր մտքերը և քննարկեք դրանք Ձեր վերադասի հետ:

---

---

12. Բժիշկներն ունեն իմ կարիքը, եթե ցանկանում են ճշտորեն ախտորոշել հիվանդի հիվանդությունը:

Գրի առեք Ձեր մտքերը և քննարկեք դրանք Ձեր վերադասի հետ:

---

---

# Մոդուլ V.

## Ինքնահոգաժողովի հիմնադրույթներ

Փախստականի հետ անցկացվող  
հարցազրույցի համատեքստում բանավոր  
թարգմանները կարող է չափազանց դժվար լինել:  
Թարգմանիչները կարող են ապրել վիկարային  
(կոմպենսատորային) տրավմա և դրա  
հետևանքով վաղաժամ ուժասպառ լինել:  
Իդեալական դեպքում, հարցազրույցների  
գործընթացում ներգրավված յուրաքանչյուր  
ոք պետք է տեղյակ լինի վերոնշյալ  
վտանգներից, հասկանա տրավմայի և  
վաղաժամ ինքնասպառվելու պատճառներն ու  
ախտանիշները և իմանա, թե կանխարգելման  
և բուժման ինչպիսի միջոցներ գոյություն ունեն:

# Գլուխ I.

## Հոգատար եղիր քո նկատմամբ

Այս գլխում կտվորեք հետևյալը.

- Ինչ են ֆլեշբեքերը (անցյալի հստակ վայրկենական վերապրում).
- Ինչպես լուծել թարգմանության հետևանքով առաջացող սթրեսի հարցը.
- Երբ այցելել խորհրդատուի.
- Հետտրավմատիկ սթրեսային խանգարման (ՀՏՄԽ) [Post Traumatic Stress Disorder (PTSD)] և վիկարային տրավմայի մասին.
- Ինչ անել, եթե լավ չեք զգում և տվյալ պահին կատարում եք բանավոր թարգմանություն:

### Ա. Ֆլեշբեքեր

#### 1. Ինչ են ֆլեշբեքերը

Ֆլեշբեքը մի հուշ է, որն ունի մտքում հայտնվող անակնկալ պատկերի տեսք՝ կապված անցյալում կատարված որևէ իրադարձության հետ:

Հաճախ թարգմանիչն զգում է, որ ի վիճակի չէ շարունակել բանավոր թարգմանելը, քանի որ ամեն օր իր լսած պատմությունները վերակենդանացնում են այնպիսի հիշողություններ, որոնք կապված են իր ծագման երկրում իր հետ տեղի ունեցած որևէ տրավմայի հետ:

#### Հիշել

*Տրավման* սահմանվել է որպես հետևյալը. «(1) անձն ապրել է, վկան է եղել կամ բախվել է մի դեպքի կամ դեպքերի, որոնք ներառել են փաստացի մահ կամ լուրջ վնասվածք կամ դրանց սպառնալիք, կամ՝ տվյալ անձի կամ այլոց ֆիզիկական առողջության նկատմամբ վտանգ, (2) անձի արձագանքը ներառել է ինտենսիվ վախ, անօգնականության կամ սարսափի զգացումներ» (Ամերիկայի հոգեբույժների ասոցիացիա [American Psychiatric Association], Ախտորոշման չափանիշներ, վերցված «Հոգեկան խանգարումների ախտորոշիչ և վիճակագրական ձեռնարկ» [Diagnostic Criteria from Diagnostic and Statistical Manual of Mental Disorders], ՀՏՄԽ [PTSD] 428 – Մայքլ Բ. [Michael B.], Առաջին խմբագիր [First ed.], 4-րդ հրատարակություն, 1994 թվական):

Եթե դու երբևէ նման զգացումներ ես ունենում, արժե մի պահ կանգ առնել ու հասկանալ, թե արդյոք ունես ստորև թվարկված ապրումները.

- Տրավմատիկ դեպքերի վերաբերյալ կրկնվող պատկերներ կամ հուշեր, որ ունենում եք արթուն ժամանակ.
- Նախկինում ապրած տրավմայի առնչվող մղձավանջներ.
- Ուժեղ զգացումներ (բանախոսի նկատմամբ ունեցած խիստ արձագանքները կարող են կապված լինել թարգմանիչ՝ անցյալում ունեցած սեփական փորձի հետ և կարող են ազդել վերջինիս աշխատանքի մասնագիտական որակի վրա):

## Օրինակ.

Բանավոր թարգմանիչը կարող է չափից դուրս կարեկցել հաճախորդին և այդպիսով իրականացնել մի փոքր ձևափոխված թարգմանություն՝ առանց գիտակցելու դա. այսինքն՝ բանավոր թարգմանությունը դառնում է սուբյեկտիվ (ենթակայական), այլ ոչ թե օբյեկտիվ (առարկայական): Թարգմանիչը գուցե ունենա դեպրեսիայի զգացողություն, հաճախ լինի դյուրագրգիռ, հուզված և լարված:

- **Եթե ունեք նման զգացողություններ, ապա փորձեք պարզել, թե որ իրավիճակներն են խթանում այդպիսի զգացումներ:** Արդյո՞ք դրանք ծագում են բացառապես աշխատավայրում, թե՛ նաև այն ժամանակ, երբ տանն եք: Մի անհանգստացեք. բանավոր թարգմանություն կատարելը փախստականների համար, ովքեր ունեցել են տրավմաներով ուղեկցված փորձառություն, կարող է Ձեզ մոտ առաջացնել ուժեղ զգայական արձագանքներ, հնարավոր է՝ ուղղված հենց իրենց, այլ մարդկանց և/կամ հենց Ձեզ: Կարևորն այն է, որ Դուք սկսեք վերլուծել այդ զգացողությունները:

## 2. Ինչ է տրավմատիկ սթրեսային երկրորդային խանգարումը

Այն զգայական ռեակցիաները, որոնք Դուք ապրում եք, նույնպես կարող են բնութագրվել որպես **սթրես**: Երբ Դուք գտնվում եք ճնշման տակ կամ նման զգացողություն ունեք, գուցե այնպիսի զգացում ունենաք, որ Ձեզ շրջապատող աշխարհը վատ ազդեցություն է ունենում Ձեզ վրա: Երբեմն այս զգացումներն անհաղթահարելի են, մասնավորապես երբ զգում եք, որ այն մարդիկ, ում հանդիպում եք, և այն իրադարձությունները, որոնց միջով անցնում եք, չափազանց շատ ուժեր են խլում ձեզից: Դուք կարող է ունենաք հարցազրույցի մասնակցին օժանդակելու պատասխանատվության ուժեղ զգացում: Կրկին, սա կարող է հանգեցնել օբյեկտիվության պակասի: Հնարավոր է, որ կրկնվող ֆլեշբեքերի պատճառով Դուք ունենաք անկումային տրամադրություն, ճնշված կամ հուզված լինելու զգացողություն:

Փախստականների հետ աշխատող բազմաթիվ մարդիկ տառապում են սթրեսից: Նրանք հաճախ ենթարկվում են մի այնպիսի հոգեբանական երևույթի, որը կոչվում է *հակադեդափոխում* [counter-transference]: Այն նշանակում է՝ որևէ մեկի փորձառությունը/ զգացումները կապել սեփականի հետ: Չնայած հնարավոր է, որ Դուք ճիշտ նույն փորձի միջով անցած չլինեք, հավանական է, որ զգացել եք նկարագրածին նման ինչ-որ բան կամ նմանատիպ հանգամանքներում ունեցել եք վախի և ճնշվածության նույն զգացումները: Երբ Դուք Ձեզ եք վերագրում հարցազրույցի մասնակցի հիմնախնդիրները, բանավոր թարգմանելը կարող է դառնալ սուբյեկտիվ:

## Հիշել

*Տեղափոխումը* (ի հակադրություն «հակադեդափոխում» եզրույթի) սահմանում է այն, թե ինչ է պատահում, երբ, օրինակ, հոգեբույժները զայրանում են, երբ իրենց բջջային հեռախոսները շարունակում են զնգալ: Հիմնախնդրի լուծում գտնելու փոխարեն՝ նրանք իրենց զայրույթը *դեդափոխում են* իրենց հիվանդների վրա, ովքեր սկսում են հանդես բերել միևնույն պատանիչները: Կարծես թե հոգեբույժներն իրենց հիվանդներին *ասել են*, որ նրանք պարտավոր են զայրանալ, երբ իրենց բջջային հեռախոսները զանգում են:

Սթրեսը հնարավոր է բուժել, առնվազն վաղ փուլերում: Եթե, այնուամենայնիվ, Դուք չեք փորձում ստանալ մասնագետի խորհրդատվություն, և/կամ Դուք չեք կարողանում մշակել մի այնպիսի ռազմավարություն, որը Ձեզ հնարավորություն կտա չեզոքացնել սթրեսը, այն կարող է վերածվել *ինքնասպանան*:

Գլուխ 1

ԱՆՈՐԻՆ



### 3. Ինչ է ինքնասպառումը

Ձեզ մոտ գուցե տեղի է ունեցել ինքնասպառում, եթե կորցրել եք հետաքրքրությունն աշխատանքի նկատմամբ, այլևս չեք ցանկանում լսել, թե ինչ է ասում հարցազրույցի մասնակիցը, հեռավորություն եք ստեղծում Ձեր և նրա միջև, գուցե նույնիսկ սկսում եք ժխտել վերջինիս գոյությունը:

Հնարավոր է, որ ցուցադրեք թշնամություն, ոչ միայն տվյալ անձի նկատմամբ, այլև Ձեր հանդիպած յուրաքանչյուր փախստականի նկատմամբ: Գուցե զգաք, որ ատում եք նրանց: Հնարավոր է, որ սկսեք ինքներդ Ձեզ նույնացնել մի փախստականի հետ և սկսեք հավատալ, որ նա արժանի է ավելին ստանալու, քան ցանկացած ուրիշը: Դուք ցանկացած հնարավորության դեպքում սկսում եք առատաձեռն լինել նրանց նկատմամբ:

#### Հիշել

Արդյո՞ք Դուք մշտապես ունեք հոգնածության զգացում: Արդյո՞ք քնելու հետ ունեք խնդիրներ: Արդյո՞ք ունենում եք ուժեղ գլխացավեր և դժվարություն ուտելիս: Արդյո՞ք որևէ մեկը Ձեզ ասել է, որ Դուք ագրեսիվ եք, հոռետես, ցինիկ: Արդյո՞ք ասել է, որ Դուք չափից դուրս շատ եք խմում և ծխում: Արդյո՞ք Ձեր վերադասը վատաբանել է Ձեզ գործի վրա չկենտրոնանալու, աշխատանքի մշտապես ուշ գալու և Ձեր գործի նկատմամբ անխնամ վերաբերմունք ունենալու համար: Եթե պատասխանը դրական է, իսկ Դուք արդեն տևական ժամանակ աշխատում եք փախստականների հետ, ապա մի հապաղեք. խնդրեք վերադասին, որպեսզի նա Ձեզ կապի խորհրդատուի հետ: Եթե այս խնդրով չզբաղվեք, նշված ախտանիշները կարող են վերածվել *վիկարային տրավմայի*:

### 4. Ինչ է վիկարային տրավման

*Վիկարային տրավմա* ունեցող անձը հաճախ ինքն իրեն մեկուսացնում է ընկերներից և ընտանիքից և գերադասում է շատ ժամանակ անցկացնել մենակ մնալով: Հնարավոր է, որ նա դառնա չափազանց զգայուն բռնության նկատմամբ և պարուրվի անհուսության զգացումով: Ուրիշների հետ շփվելու՝ անձի կարողությունը, նրա բոլոր զգայական հմտությունները և ընկալումները ենթարկվում են բացասական ազդեցության:

### 5. Ինչ է հետտրավմատիկ սթրեսային խանգարումը (ՀՏՄԽ/PTSD)

Անձի մոտ ՀՏՄԽ առաջանում է այն բանից հետո, երբ նա ապրում է որևէ տրավմատիկ իրադարձություն: Այն մարդիկ, ովքեր տառապում են ՀՏՄ խանգարումից, *վերապրում* են իրենց տրավմատիկ փորձն ամեն անգամ, երբ բախվում են որևէ բանի, որը նրանց հիշեցնում է այդ տրավմայի մասին: Օրինակ, եկեղեցու տարածքում բռնի հարձակման ենթարկված մեկը կարող է ժամանակավորապես կորցնել ինքնատիրապետումը, երբ քայլում է որևէ եկեղեցու կողքով: Հնարավոր է, որ տվյալ անձը նաև հանկարծակիորեն վերհիշի իր ապրած փորձը ֆլեշբեքերի և/կամ մղձավանջների միջոցով: Այդ մարդու մտքում առաջնահերթ է դառնում խուսափելն այնպիսի վայրերից, որոնք նրան հիշեցնում են տվյալ դեպքի մասին, և սեփական զգացումները տարանջատելն իր տրավմատիկ փորձառությունից: Ի հետևանք, տվյալ անձը կարող է դիտել, խոսել և դիտարկել ահավոր վիրավորանքներ՝ դրանց նկատմամբ զգայական արձագանքի կատարյալ բացակայությամբ:

## 6. Արդյո՞ք կարող եմ ես կատարել բանավոր թարգմանություն, եթե ես տառապում եմ այդ ախտանիշներից որևէ մեկից

Եթե Ձեզ ծանոթ է այս ախտանիշներից որևէ մեկը, և Դուք բանավոր թարգմանություն եք կատարում մեկ կամ մի քանի փախստականների համար, խելամիտ կլինի հարցազրույցի մասնակիցներին ժամանակավորապես հանձնել մեկ այլ թարգմանիչ (գերադասելի է՝ մեկի, ով նմանատիպ փորձ չի ունեցել)՝ խորհրդակցելով խորհրդատուի հետ, ով ի վիճակի կլինի օգնել Ձեզ՝ վերլուծելով այն, թե ինչպես եք աշխատանքի ընթացքում լսածը կապում Ձեր անձի հետ:

Խորհրդատվությունը բանավոր թարգմանիչին կարող է օգնել՝ թոթափելու սթրեսը և իրազեկվելու սեփական հոգեվիճակի վերաբերյալ: Որոշ մարդկանց համար իրազեկ լինելը շատ կարևոր է, քանի որ դա նրանց թույլ է տալիս օբյեկտիվությունը պահպանելով շարունակել բանավոր թարգմանությունը: Այն նաև կարող է կանխել ինքնասպառումը: Այլոց դեպքում, իրազեկ լինելը բավարար չէ, և անհրաժեշտ է մասնագիտական օգնություն:

Հսկայական թվով փախստականներ և ՄԱԿ ՓԳՀ-ի իրավասության ներքո գտնվող այլ անձինք, նախքան իրենց հայրենի համայնքները լքելը, ունեցել են տրավմատիկ փորձ: Եթե Դուք, բացի բանավոր թարգմանիչ լինելը, նաև փախստական եք, պետք է լիարժեքորեն տեղյակ լինեք այդ հանգամանքից: Զրուցեք Ձեր վերադասի հետ և առաջարկեք պարբերական հանդիպումներ ունենալ խորհրդատուի հետ: Բանավոր թարգմանիչները կարող են տրավմայի ենթարկվել նաև իրենց աշխատանքի հետևանքով: Եթե նրանց այդպիսի վիճակը չի արժանանում համարժեք վերաբերմունքի, հնարավոր է, որ նրանք ի հավելումն տրավմայի ենթարկեն այն փախստականներին, ում համար թարգմանում են: **Հոգ տարեք ինքներդ Ձեր նկատմամբ՝ թե Ձեր, թե այլոց պաշտպանության համար:**

## ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Գլուխ 1

1. Բանավոր թարգմանելու հետևանքով ես չեմ կարող ենթարկվել տրավմայի:  
Ճիշտ է  Սխալ է
2. Ես երբեք չեմ կարեկցում հարցազրույցի մասնակցին և երբեք չեմ կորցնում նրա ասածներն օբյեկտիվորեն թարգմանելու իմ կարողությունը:  
Գրի առեք Ձեր մտքերը և քննարկեք դրանք Ձեր վերադասի հետ:  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

ԱՆՈՂԻՆ

# ՀԱՎԵԼՎԱԾ I. ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՉԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ

## ա) Նախարան

- i. Այն դեպքերում, երբ փախստականները չեն խոսում այն լեզվով կամ լավ չեն տիրապետում այն լեզվին, որով անց են կացվում ՄԱԿ ՓԳՀ հարցազրույցները և հանդիպումները, բանավոր թարգմանչի պարտականությունն է նրանց հնարավորություն տալ՝ ՄԱԿ ՓԳՀ պաշտոնյաների հետ հաղորդակցվել այնպես, ասես նրանք խոսում են նույն լեզվով, որպեսզի ՄԱԿ ՓԳՀ-ն ի վիճակի լինի կյանքի կոչել իր մանդատը:
- ii. Սույն Վարքագծի կանոնագրքի ստեղծման նպատակն է ուղղորդել ՄԱԿ ՓԳՀ-ի բանավոր թարգմանիչներին՝ աշխատանքի ժամանակ և աշխատավայրից դուրս դրսևորել բարձր պրոֆեսիոնալ վարք և կայացնել էթիկական որոշումներ՝ նրանց առջև ծառայող իրավիճակները, խոչընդոտները կամ երկրնտրանքները մանրամասնորեն գնահատելուց հետո: Վարքագծի կանոնագիրքը չի պարունակում և չի կարող պարունակել բանավոր թարգմանիչների առջև ծառայող հնարավոր յուրաքանչյուր իրավիճակի, խոչընդոտի կամ երկրնտրանքի հիշատակում:

## բ) Աշխատանքային պատվերի ընդունումը

- iii. Բարձր պրոֆեսիոնալ վարքը հնարավոր է պահպանել միայն եթե տվյալ բանավոր թարգմանչի լեզվական հմտությունները, ֆիզիկական և մտավոր կարողությունները, շահերի հնարավոր բախումը և անձնական զգացողությունները դրան հասնելու խոչընդոտ չեն հանդիսանում:
- iv. Աշխատանքի պատվերն ընդունելուց հետո բանավոր թարգմանիչը հաստատում է, որ ունակ է կատարել առաջադրանքը, չնայած նրան պետք է հնարավորություն տրվի վերանայել նման հայտարարությունը, եթե հանդիպման ընթացքում ծագում է վերը թվարկված խոչընդոտներից որևէ մեկը:
- v. Վերոնշյալ խոչընդոտներից որևէ մեկի առկայության դեպքում բանավոր թարգմանչից ակնկալվում է, որ նա կողմերին կտեղեկացնի այդ մասին և գուցե հնչեցնի առաջարկ՝ հրաժարվելու տվյալ պատվերից կամ լքելու հանդիպումը: Այս առաջարկը կարող է քննարկվել, եթե հնարավոր չէ հետաձգել հանդիպումը, և որևէ այլ բանավոր թարգմանիչ գտնելու հնարավորություն չկա: Նման դեպքերում թարգմանիչը կարող է համաձայնել՝ ընդունել աշխատանքի պատվերը, պայմանով, որ կողմերը հասկանում են իր աշխատանքի արդյունավետության սահմանափակումները:

## գ) Լեզվական ճշգրտություն և չեզոքություն

- vi. Որպես կանոն, բանավոր թարգմանիչը պարտավոր է պատրաստ լինել՝ կիրառելու երկ-կողմանի հաջորդական թարգմանություն՝ ճշգրտորեն թարգմանելու բանախոսի բառերը և արտահայտությունները, չնայած հնարավոր է, նրանից պահանջվի իրականացնել գրավոր փաստաթղթերի բովանդակության թուուցիկ թարգմանություն և կատարել ամփոփ բանավոր թարգմանություն՝ բանախոսի օգտագործած բառերի և արտահայտությունների բովանդակությունը խտացնելու նպատակով: Բանավոր թարգմանիչը պետք է օգտագործի քերականական նույն դերանունը, ինչ բանախոսը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա դժվարությամբ կընկալվի և մշակության առումով կլինի կողմերից



որևէ մեկի համար անընդունելի: Ինքն իր մասին խոսելիս թարգմանիչը պետք է օգտագործի երրորդ դեմքը:

- vii. Թարգմանիչը պատասխանատու չէ բանախոսի խոսքի բովանդակության համար: Նա պատասխանատու է բանախոսի օգտագործած բառերը և իմաստները դեպի որոշված լեզուն ճշգրտորեն թարգմանելու համար՝ առանց դրանց որևէ բան ավելացնելու կամ դրանցից որևէ բան պակասեցնելու: Այսպես վարվելով՝ բանավոր թարգմանիչը պետք է ունակ լինի աղբյուր լեզվով օգտագործված սինտակտիկ և իմաստաբանական բաղադրիչները փոխարինել արտաձվող լեզվով համարժեք արտահայտություններով: Բառացի թարգմանություն կարող է կիրառվել այն դեպքում, եթե կողմերը տեղյակ են, որ այն գուցե չհաղորդի բանախոսի բառերի իսկական իմաստը: Թարգմանիչը ոչ մի դեպքում իրավունք չունի գուշակել, եթե չգիտի կամ չի հասկանում որևէ բառ կամ բանախոսի բառերի իմաստը: Թարգմանիչն անհրաժեշտության դեպքում պարտավոր է դիմել հստակեցման խնդրանքով, նույնիսկ եթե պարզվի, որ դա շատ ժամանակ է խլելու: Թարգմանիչը նաև պարտավոր է զեկուցել բանավոր թարգմանության ընթացքում գործած ցանկացած սխալի վերաբերյալ: Սա պետք է արվի հանդիպման ընթացքում, որքան հնարավոր է շուտ:
- viii. Դարձվածքային կամ մշակութային/ պատմական/ սոցիոլոգիական/ մարդաբանական առումով յուրահատուկ լեզուն պետք է թարգմանվի չափազանց զգուշորեն: Թարգմանիչը պետք է կողմնորոշվելու ճանապարհով վերածնակերպի արտահայտությունները և զգուշացնել, որ դրա իմաստի հաստատման կարիք կա: Եթե կողմերից ոչ մեկն ունակ չէ բացատրել տվյալ լեզվով արտահայտված մշակութային համոզմունքները և/կամ գործելաոճերը, թարգմանիչը կարող է կողմնորոշվելով տալ դրա վերաբերյալ տեղեկություն *այնքանով, որքանով փրկապետում է գիտելիքին*, եթե երկու կողմն էլ համաձայն են: Այս տեղեկությունը պետք է ժամանակավորապես գրանցվի, որևէ չորրորդ կողմի հետ կրկնական ստուգում անցնի ցանկացած փուլում, հարցազրույցի ընթացքում կամ դրա ավարտից հետո, և ցանկացած փուլում քննարկվի հարցազրույցի մասնակցի հետ՝ տվյալ կամ հաջորդ հարցազրույցի ընթացքում: Ի հավելումն, թարգմանիչը պարտավոր է կողմերին տեղեկացնել հնարավոր ցանկացած թյուրըմբռնման մասին, որ կարող է ծագել օգտագործված արտահայտությունների որևէ ենթադրյալ իմաստի հետևանքով, լինեն դրանք կարծրատիպերի կամ մշակութային ակնկալիքների պատճառով:
- ix. Բանավոր թարգմանիչը չպիտի տրամադրի սոցիոլոգիական, մարդաբանական կամ պատմական բնույթի որևէ տեղեկություն՝ հիմնվելով այն դեպքի վրա, որում որպես թարգմանիչ ներգրավված է: Թարգմանելու ընթացքում նա չպիտի հանդես գա որպես նշված գիտակարգերից (դիսցիպլիններից) որևէ մեկի գծով փորձագետ, սակայն պետք է խրախուսի հարցազրուցավարին՝ հարցազրույցի մասնակցի միջոցով ստանալու այլապիսի տեղեկություններ:

## դ) Անկողմնակալություն

- x. Բանավոր թարգմանիչը պետք է հանդիպումից առաջ ՄԱԿ ՓԳՀ պաշտոնյային տեղեկացնի տվյալ պատվերին իր որևէ առնչության և հարցազրույցի մասնակցի կամ մասնակիցների հետ ցանկացած առնչությունների մասին:
- xi. Բանավոր թարգմանիչը չպիտի կատարի թարգմանություն մոտիկ հարազատների և/ կամ անձնական ընկերների համար, բացառությամբ՝ արտակարգ իրավիճակներում, մասնավորապես՝ երբ հասանելի չէ որևէ այլ թարգմանիչ, և եթե բոլոր կողմերը համաձայն են:
- xii. Անկախ այն բանից, թարգմանիչը համաձայն է, թե համաձայն չէ հանդիպման ընթացքում ասվածի հետ, նա պետք է զերծ մնա դատողություններից և ձգտի ճշգրտորեն թարգմանելու ասվածը: Նա չպիտի խոսի կողմերից որևէ մեկի անունից, պաշտպանի կողմերից որևէ մեկի շահերը կամ փորձի ազդեցություն գործել կողմերից որևէ մեկի վրա:



- xiii. Ոչ մի դեպքում բանավոր թարգմանիչը չպիտի իրավաբանական խորհրդատվություն իրականացնի ՄԱԿ ՓԳՀ-ի հաճախորդների համար և/կամ հնարավոր որևէ եղանակով ազդեցություն գործի նրանց սեփական որոշումների վրա:
- xiv. Բանավոր թարգմանիչը չպիտի թարգմանի որևէ մեկի համար, ում *դեպքը* կամ *ցուցմունքը գրելու* գործում նա ունեցել է անմիջական ներգրավվածություն:

**ե) Գաղտնապահություն**

- xv. Ոչ մի դեպքում բանավոր թարգմանիչն իրավունք չունի որևէ պատճառով գաղտնագերծել կամ կրկնել բանավոր և/կամ գրավոր այնպիսի տեղեկություն, որը նա ստացել է ՄԱԿ ՓԳՀ-ի համար իր աշխատանքի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ դա պահանջվում է օրինապահ մարմինների կողմից: Մասնավորապես, թարգմանիչը չպիտի փորձի ստանալ որևէ տեսակի ֆինանսական պարգևավճար, շահույթ կամ առավելություն՝ ՄԱԿ ՓԳՀ-ում իր աշխատանքի ընթացքում ձեռքբերված բանավոր և/կամ գրավոր տեղեկությունները գաղտնագերծելու դիմաց:
- xvi. Եթե թարգմանիչն, որպես որևէ խորհրդատվության կամ հոգեբուժական թերապիայի մի մաս, որից նա օգտվում է, խնդրեն պատմել իր աշխատանքի մասին, թարգմանիչը պարտավոր է գերծ մնալ մարդկանց և/կամ դեպքերի որևէ կոնկրետ հիշատակումից, որոնց նա ծանոթացել է որպես ՄԱԿ ՓԳՀ-ում իր աշխատանքի մի մաս:
- xvii. Բանավոր թարգմանիչը ոչ մի դեպքում իրավունք չունի գաղտնագերծել որևէ գիտելիք, որն ինքը կարող է ունենալ հարցազրույցի տվյալ մասնակցի, նրա դեպքի, նախապատմության, դիրքորոշման, կարգավիճակի և այլ հանգամանքների վերաբերյալ:
- xviii. Բանավոր թարգմանիչն չպիտի հասանելի լինեն անհատական ֆայլերը և/կամ ֆայլերի պահման տարածքը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա բացարձակապես անխուսափելի է: Նման դեպքում թարգմանիչի համար անհատական ֆայլերի և/կամ ֆայլերի պահման տարածքի հասանելիությունը պետք է խստորեն սահմանափակվի՝ թույլ տալով միայն այն, ինչն անհրաժեշտ է՝ լիազորված պարտականությունները կատարելու համար, և դա պետք է ուշադիր կերպով վերահսկվի:

**զ) Վարքը**

- xix. Բանավոր թարգմանիչը, ով ծառայություններ է մատուցում ՄԱԿ ՓԳՀ-ում, պետք է ենթարկվի այն գրասենյակի ստանդարտներին ու աշխատակարգին, որտեղ աշխատում է, բացառությամբ, եթե այդ ստանդարտներն ու աշխատակարգը հակասում են սույն Վարքագծի կանոնագրքին: Ամեն դեպքում, թարգմանիչը պետք է մշտապես լինի կարգապահ, պատրաստված և պատշաճ ձևով հագնված:
- xx. Բանավոր թարգմանիչը պարտավոր է հարգալից վերաբերմունք ունենալ հանդիպման մասնակիցների նկատմամբ և խուսափել նրանց կամ նրանց ասածների նկատմամբ ցանկացած տեսակի դատողական վերաբերմունքից:
- xxi. Բանավոր թարգմանիչը ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից վճարված ծառայությունների դիմաց չպիտի ընդունի որևէ լրացուցիչ փոխհատուցում, գումար կամ արտոնություն, ոչ էլ որևէ կերպ օգտագործի իր դիրքը՝ ստանալու արտոնություններ, մասնավոր օգուտ, ազատում վճարներից և օգտագործելու ՄԱԿ ՓԳՀ-ի շինությունները կամ սարքավորումները: Մասնավորապես, թարգմանիչը չպիտի փորձի ստանալ որևէ տեսակի ֆինանսական պարգևավճար, շահույթ կամ առավելություն՝ ՄԱԿ ՓԳՀ-ում իր աշխատանքի ընթացքում ձեռքբերված բանավոր և/կամ գրավոր տեղեկությունները գաղտնագերծելու դիմաց:
- xxii. Բանավոր թարգմանիչը չպիտի ստանձնի որևէ պատվեր, որը կապված չէ իր դերի հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա բացարձակապես անխուսափելի է: Այս դեպքում թարգմանիչի աշխատանքը պետք է խստորեն սահմանափակվի այն ամենով, ինչն անհրաժեշտ է՝ լիազորված պարտականությունները կատարելու համար, ինչը և պետք է ենթարկվի մանրամասն վերահսկման:

## է) Կիրառելիությունը

---

- xxiii. Բանավոր թարգմանիչը, ով ծառայություններ է մատուցում ՄԱԿ ՓԳՀ-ում, պետք է կարդացած, ստորագրած և պարտավորված լինի ենթարկվել սույն Վարքագծի կանոնագրքին: Թարգմանիչը հասկանում է, որ պարտավոր է անմիջապես դադարեցնել այնպիսի շփումները, որոնք վտանգում են սույն Վարքագծի կանոնագիրքը կիրառելու՝ իր կարողությունը: Թարգմանիչը նաև հասկանում է, որ սույն Վարքագծի կանոնագրքի խախտումը կարող է հանգեցնել իր դուրսմղմանը ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից հաստատված թարգմանիչների ցանկից:



## ՀԱՎԵԼՎԱԾ II. ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐԻ ՄՈԴԵԼ

Ստորև ներկայացվող մոդելը կարելի է ձևափոխել և մշակել՝ կախված հանգամանքներից: Լավագույն դեպքում սեմինարին պետք է մասնակցեն ինչպես բանավոր թարգմանիչները, այնպես էլ հարցազրուցավարները, իսկ տևողությունը կարող է կազմել չորս օր (տարվա ընթացքում այն քանակով, որը կապահանջի թարգմանիչների հոսունությունը): Նիստերի տևողությունը պետք է լինի մեկ ժամուկեսից մինչև երկու ժամ:

### Օր առաջին

- *Ներածություն.* Այս սեմինարի խնդիրն է՝ բանավոր թարգմանիչներին և հարցազրուցավարներին միասին աշխատելու հնարավորություն տալ՝ հարցազրույցի գործընթացում մեկը մյուսի դերի մասին պատկերացում կազմելու միջոցով:
- *ՄԱԿ ՓԳՀ-ի առաքելությունը և մանդատը.* Մասնակիցներին կտրամադրվեն կոնկրետ տեղեկություններ այն մասին, թե ինչպես է ՄԱԿ ՓԳՀ-ն հարցազրույցների համակարգի (որոնք անց են կացվում ՄԱԿ ՓԳՀ պաշտոնյայի կողմից) միջոցով մասնակիորեն իրականացնում իր առաքելությունը և մանդատը:
- *Հարցազրուցավարի դերը.* նկարագրության կենթարկվի փախստականների և ՄԱԿ ՓԳՀ պաշտոնյաների միջև շփման յուրաքանչյուր տեսակ՝ հատուկ ուշադրություն դարձնելով պատասխանատու անձին (հարցազրուցավարը), նրա փորձագիտական հմտություններին և նպատակներին (դասընթացը պետք է վարի ավագ հարցազրուցավարը):
- *Բանավոր թարգմանչի դերը.* Սահմանման կենթարկվի թարգմանչի աշխատանքի նկարագրությունը: Սա կներառի մի քննարկում այն թեմայով, թե իրենց կցված բանավոր թարգմանչից ինչ են ակնկալում հարցազրուցավարները (դասընթացը պետք է վարի ավագ թարգմանիչը):

### Օր երկրորդ

- *Լեզվական խնդիրներ.* Հնարավոր է, որ ՄԱԿ ՓԳՀ-ի հաճախորդները խոսեն հսկայական թվով լեզուներով և դրանց վարիացիաներով: Կտրամադրվեն կոնկրետ տեղեկություններ ՄԱԿ ՓԳՀ այն գրասենյակի համար հետաքրքրություն ներկայացնող լեզուների վերաբերյալ, որտեղ տեղի է ունենում ուսուցումը (դասընթացը պետք է վարի տեղական փորձագետը):
- *Հիշողությունը և նշումներ կատարելը հաջորդական թարգմանության ժամանակ.* Տվյալ թեմայով հակիրճ նախաբանից հետո հարցազրուցավարները և բանավոր թարգմանիչները կմասնակցեն մի շարք դերախաղերի, որոնց միջոցով նրանց կներկայացվի այն, թե ինչպես է աշխատում իրենց հիշողությունը: Յուրաքանչյուր դերախաղին կհաջորդի կարճ քննարկում, որի ընթացքում կմշակվեն ռազմավարություններ, որոնց միջոցով բանավոր թարգմանիչները և հարցազրուցավարները կարող են մեղմել միմյանց հիշողության վրա առկա ճնշումը (դասընթացը պետք է վարեն ավագ թարգմանիչը և ավագ հարցազրուցավարը):
- *Համայնքային թարգմանություն - 1.* Բազմաթիվ բանավոր թարգմանիչներ, ովքեր աշխատում են ՄԱԿ ՓԳՀ-ի պատվերով, նաև հանդիսանում են փախստական համայնքի անդամ: Արդյո՞ք նրանք կարող են վստահություն վայելել որպես համայնքի անդամներ՝ միևնույն ժամանակ աշխատելով որպես ՄԱԿ ՓԳՀ թարգմանիչներ: Արդյո՞ք նրանք կարող են լինել իսկապես անկախ (դասընթացը պետք է վարեն ավագ թարգմանիչը և ավագ հարցազրուցավարը):

## Օր երրորդ

- *Բանավոր թարգմանությունը փախստականի հետ հարցազրույցի համարեքսպում – 1.* Մեկ անգամ ևս, հարցազրուցավարները և բանավոր թարգմանիչները կմասնակցեն դերախաղերի, որոնք կկենտրոնանան բանավոր թարգմանության եղանակների, լեզվական ու մշակութային խնդիրների և թարգմանության ընթացակարգի շուրջ: Յուրաքանչյուր դերախաղին կհաջորդի կարճ քննարկում, որոնց ընթացքում կներկայացվեն մեկնաբանություններ, ռազմավարություններ և գաղափարներ այն մասին, թե ինչպես բարելավել աշխատանքային հարաբերությունները հարցազրուցավարների և բանավոր թարգմանիչների միջև (դասընթացը պետք է վարի հաջորդական թարգմանության փորձագետը):
- *Բանավոր թարգմանիչը որպես մշակութային միջնորդ.* Արդյո՞ք թարգմանիչը գործ ունի միայն լեզվի հետ: Արդյո՞ք նա ունի այլ գործառույթներ ևս, ինչպիսիք են ծագման երկրի վերաբերյալ տեղեկությունների հաղորդումը: Արդյո՞ք թարգմանիչին թույլատրվում է հետամուտ լինել հաճախորդի իրավունքների պաշտպանությանը, եթե նա կարծում է, որ դրանք խոցելի են մշակութային թյուրըմբռնման պատճառով:
- *Տրավմա ապրած հաճախորդների հետ աշխատելու ազդեցությունը.* Բազմաթիվ փախստականներ ունեցել են հոգեբանական տրավմայի փորձ: Հարցազրուցավարները և բանավոր թարգմանիչները, ամենօրյա ռեժիմով փախստականների հետ աշխատելու հետևանքով կարող են կրել բացասական ազդեցություն, եթե չձեռնարկվեն համարժեք կանխարգելիչ միջոցներ (դասընթացը պետք է վարի որևէ հոգեբույժ կամ խորհրդատու, կամ՝ սոցիալ-հոգեբանական հարցերով փորձագետ):

## Օր չորրորդ

- *Բանավոր թարգմանություն երեխաների, կանանց, տրավմա ապրած հաճախորդների համար.* Թե՛ հարցազրուցավարներից և թե՛ բանավոր թարգմանիչներից ակնկալվում է, որ նրանք զարգացրած կլինեն հատուկ հմտություններ և փորձագիտություն՝ նման հանդիպումների մասնակցելու համար (դասընթացը պետք է վարեն ավագ թարգմանիչը և ավագ հարցազրուցավարը, ովքեր ունեն դաշտային աշխատանքների փորձ):
- *Բանավոր թարգմանությունը փախստականի հետ հարցազրույցի համարեքսպում – 2.* Հարցազրուցավարները և բանավոր թարգմանիչները կմասնակցեն դերախաղերի, որոնք կկենտրոնանան բանավոր թարգմանության եղանակների, լեզվական ու մշակութային խնդիրների և թարգմանության ընթացակարգի շուրջ: Յուրաքանչյուր դերախաղին կհաջորդի կարճ քննարկում, որոնց ընթացքում կներկայացվեն մեկնաբանություններ, ռազմավարություններ և գաղափարներ այն մասին, թե ինչպես բարելավել աշխատանքային հարաբերությունները հարցազրուցավարների և բանավոր թարգմանիչների միջև (դասընթացը պետք է վարի հաջորդական թարգմանության փորձագետը):
- *Համայնքային թարգմանություն - 2.* Բանավոր թարգմանիչները, հատկապես եթե նրանք փախստականների փոքր համայնքներից են, կարող են նշանակալի կարևորություն տալ իրենց համայնքի անդամների հետ սեփական հարաբերություններին, ներառյալ՝ ընտանեկան կապերին: Արդյո՞ք նրանք լիարժեքորեն ունակ են մասնագիտական-անձնական հարաբերություններ ունենալ այն փախստականների հետ, ում համար թարգմանում են: Արդյո՞ք նրանց պետք է համարել ՄԱԿ ՓԳՀ աշխատակիցներ, թե՛ պարզապես «գործիքներ», որոնք ՄԱԿ ՓԳՀ-ն կիրառում է՝ իր գործառույթների իրականացման համար (դասընթացը պետք է վարի ՄԱԿ ՓԳՀ ավագ պաշտոնյա և ավագ թարգմանիչը):
- *Եզրակացություններ: Սեմինարի ավարտը: Մեկնաբանություններ և գաղափարներ ապագա սեմինարների համար:*











**ՄԱԿ ՓԳՀ Հայաստան**  
Հեռ՝ (+37410) 56 48 92, 58 48 92, 54 59 35  
Ֆաքս՝ (+37410) 56 78 17  
Էլ-փոստ՝ ARMYE@unhcr.org  
[www.unhcr.org](http://www.unhcr.org)